

14299

2010

2001

37
9-43

ՅԵՐ. ԶԱ.ՔԱՐՑԱՆ

ՊԱՅՔԱՐ
ՈՒՍՏԱՆ ՎԱՐԱԿԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ Բ.

ԸՆԿ. ԸՆԹԵՐՑՈՂ.

Հայտնեցեք ձեր կարծիքը այս գրքի մասին
նետվյալ հասցեով.

Г. Ростов-Дон, Буденовский 30,
Ազով-Черноморское Краевое Книго-
издательство, армянская секция.

Նամակները կարելի յեւ ուղարկել առանց
նամակադրութիւն:

Գիրքը զործածելուց առաջ ուղղել վրիպակները

Աջ	Տպագր	Տպագր	Պետք է լինի
5	4 ներք.	տառելություն ու արհամարհանք	ատելություն ու թշնամանք
5	1 »	բանականորեն	բոլշևիկորեն
6	14 վեր.	ճանդիսացել	ճանդիսացել
7	15 ներք.	մեր հասարակարգը հետապնդում և պատրաստել	մենք պատրաստում ենք
7	10 »	զարգացման զուգընթաց	զարգացման շաղկապված
8	13 վեր.	«Ուսուցման, զաստիաբակության, և կրթության, ամեն մի քայլը	«Ուսուցման, զաստիաբակության և կրթության ամեն մի քայլը
8	4 ներք.	Մտագոր կրթությունը պիտի դուզորդվի	Մտագոր կրթությունը պիտի
11	7 վեր.	բնագիտական եքսկուրսիայի	շաղկապվի
14	13 ներք.	կարողանան	բնագիտական եքսկուրսիան
15	21 վեր.	են	կարողանան
26	10 »	բնագավառում խեղաթյուրման	ենագավառում «Ճախ» խեղաթյուրման
29	8 »	կարենը և	անհրաժեշտ
35	28 ներք.	Սակայն ձախ խեղաթյուրման	Սակայն «Ճախ» խեղաթյուրման
47	25 »	ՑԵ) Ստուգողական...	ստուգողական...
54	27 »	Միտքը հեշտ ձեռակերպելու	միտքը ճիշտ ձեռակերպելու
64	14 վեր.	1 2—1 ժամ	1 2—1 ժամ
70	18 ներք.	համարյա պատասխանում և	համապատասխանում և
70	5 »	շրջանակում	շրջանում
81	14 վեր.	ավագի սյուներ	ավագի դյուներ
87	6 »	յերեսոյթի ուսուցման	յերեսոյթի ուսումնասիրության
91	10 »	պիոներների	պիոներների
91	11 »	պիոներդեկի	պիոներդեկի
107	6 »	խորագույն սիրող	խորագույն սիրող

Օտ. редактор Г. А. Потенц

Тех. ред. О. Тер-Давыдов

Корректор Т. Ахаян

Издание 602/4180 Об'ем 7,5 печ. листа. Статформат А5 148x210. Упак
крайний Б6432. Тираж 1000 экз. Заказ 5823 Сдано в набор
10 XI-1934 г. Подписано в печать 3/XII-1934 г.

Типография им. «Стачки 1902 года» АЧПП в г. Ростове на Дону

Պ Ա Յ Ք Ա Ր

ՈՒՍՄԱՆ ՎՈՐԱԿԻ ՀԱՄԱՐ

ԹՐԱԿ Բ.

~~1000~~
~~35915~~

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՅԵՎ
ՄԱՆԿՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲՈՒՅԼԱՏՐՎԱԾ Ե ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐ-
ԼՈՒՄԲԱԺԻՆԻ ԿՈՂՄԻՑ

1935
ԱԶՈՎ-ԱՆԳՈՎՑԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏՈՎ-ԴՈՆ



ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն աշխատության Ա. պրակը («Պայքար ուսման վորակի համար») լույս ե տեսել 1933 թվի սկզբին: Ա. պրակում շղափված են գլխավորապես ուսումնական-կազմակերպչական խնդիրներ: Այս (Բ) պրակում լուսաբանվում են ուսումնական աշխատանքի մեթոդները տարրական դպրոցում՝ գլխավորապես կոնկրետ նյութի կապակցությամբ: Այս աշխատությունը կազմելիս հիմք ենք ընդունել մանկականի կումների մանկավարժության ծրագրի համապատասխան թեմայի պլանը:

Թե Ա. և թե այս Բ. պրակը կազմված ե Ազով-Սևծովյան Յերկրային լուսբաժնի և Ազով-Սևծովյան Յերկրային հրատարակչության հայկական սեկցիայի հանձնարարությամբ:

Ներկայումս, յերբ սոցիալիստական շինարարության ընդհանուր վերելքի հետ խորհրդային պոլիտեխնիկական դպրոցը հսկայական թափով աճում է, մասսայական ուսուցչության առաջ խոշորագույն պահանջ ե գրվում՝ բարձրացնել իր վորակն ընդհանրապես և մանկավարժական-մեթոդական պատրաստությունը՝ մասնավորապես: Մանկավարժական վարպետության տիրապետումն անհրաժեշտ նախապայման և հանդիսանում դպրոցում ուսումնա-դաստիարակչական աշխատանքի վորակը վճռականապես բարձրացնելու, դպրոցի «արմատական թերությունը» վերացնելու և կոմունիստական դաստիարակության գործը բարձր հիմքերի վրա գնելու: Հայերեն լեզվով մեթոդական գրականության համարյա բացակայության պայմաններում, այս աշխատությունը (վոր անշուշտ իր թերությունները կունենա), կարող ե ծառայել վորոշ չափով ոժանդակ միջոց, մասնավանդ սկսնակ ուսուցիչների համար՝ խորհրդային ընդհանուր մեթոդիկայի և մեթոդական առանձին պրիորիտերի սգտագործման ուղղությամբ վորոշ գիտելիքները ստանալու: Նա ոգտակար կարող ե լինել նաև մանկականի կումների ուսանողության համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԲՆՈՐՈՇ ԳԵՐԵՐՆ ՈՒ
ՀԻՄՈՒՆՎՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՐ

Լ. ԳԱՍՏՐԵՐԻ ՀՎԵՏԵՐՆԵՐ ԽՈՅՀԵՐՆԵՐ ՊՈՒՏԵՐՆԵՐ ԶԳՈՅՆԵՐ

1. Կոմանճիստական դաստիարակչության կողմէ պարհագային պոլիտեխնիկական գլոբոցի ռւսումնագավառի աշխատանքի թե բովանդակությունը և թե մեթոդները յենթակա յեն պրոլետարիատի դաստիարակչական նպատակներին:

Խորհրդային պոլիտեխնիկական գպլրոցը պատրաստում է «սերունդ» վոր ընդունակ և լինելու վերջնականապես հաստատելու կրօմունիքմբ»:¹

«Դուք պետք ե ձեզնից դաստիարակեք կոմունիստներ», —
ասում ե Անդրեաս և հետո ավելացնում ե. «Պետք ե, վոր ժամանակա-
կից յերիտասարդության դաստիարակության, կրթության և ու-
սուցման ամբողջ գործը լինի՝ նրան դաստիարակել կոմունիստա-
կան բարոյականությամբ».²

Իսկ վրձն ե կոմունիստական բարոյականությունը:

«Մենք ասում ենք, բարոյականությունն այն է, վոր ծառացում և հին, շահագործող հասարակության քայլքայման և բոլոր աշխատավորների միացման գործին պրոլետարիատի շուրջը, վորը կառուցում և կոմունիստների նոր հասարակություն»:³

Կոմունիստական բարոյականությունը պահանջում է զաստիալսակել աճող սերունդն այն վոգով, վոր նա իր անհատականի, սեփականը զոհ բերի հասարակականին, սոցիալիստականին, ընդհանուրի շահերին. Վոր նա պատրաստ լինի զոհաբերելու ամեն ինչ սոցիալիստական հասարակարդի կառուցման ու պաշտպանման գործին, կարողանալով զուգորդել իր անհատականը հասարակականի հետ:

Կոմունիստական բարոյականությունը պահանջում է դաստիարակել

Կոմունիստական մոսեցում դեպի աշխատանքը. Նայել աշխատանքի վրա վորպես հերոսության ու փառքի, դեն շպրտել շահագործող հասարակության դարերի ընթացքում դեպի աշխատանքն ստեղծած ժամանությունը, և դաստիարակել սոցիալիստական ամրակրու։ Գիտեցական կարգապահություն։

Կամունիստական բարոյականությունը պահանջում է դաստիարակել կամունիստական վերաբերմունք դեպի սոցիալիստական, հասարակական սեփականությունը և աչքի լույսի պես պահպանել մեր գործարանների, ֆաբրիկաների, տրանսպորտի, հանքերի, խորհանոտեսությունների ու կոլտնտեսությունների գույքը: Մենք դրա համար արմատական հեղաշրջում պիտի կատարենք մեր մասսաների հոգեբանության մեջ, մասսանների գիտակցության միջից կերպնականապես արմատախիլ պիտի անենք կապիտալիստական հոգեբանության մնացորդները և դաստիարակենք սոցիալիստական գիտակցություն:

Այդ պերոցինը ներկայումս կատարվում է ահոելի ծավալով ու տես-
ակերռվ։ Այդ գործում մենք պիտի դեկավարվենք XVII կուսկոնֆերենցի-
այի վորոշումով, վոր՝

«ՅԵՐԿՊՈՐԴ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրն ե
վերջնականապես լիկիդացիայի յենթարկել կապիտալիստական
տարրերը և դասակարգերն ընդհանրապես, լիովին վոչնչացնել դա-
սակարգային տարրերություններն ու շահագործում առաջնորդ
պատճառները, հաղթահարել կապիտալիզմի մնացորդներն եկանոմի-
կայում ու մարդկանց գիտակցության մեջ և դարձնել յերկրի ամ-
բողջ աշխատավոր ազգարնակությունը սոցիալիստական անդամա-
կարգ հասարակության գիտակցից ու ակտիվ կառուցողներ»:¹
Սոցիալիստական հասարակության գիտակցից ու ակտիվ կառուցող-
ների նոր հոգեբանությունը կերտելու մեջ խոշորագույն տեղ է գրա-
վում խորհրդաւորական պոլիտեխնիկական դպրոցը:

Կամունիստական բարոյականությունն առավ է, վեր կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ պրոլետարական դիկտատորացի յերկրում սոցիալիզմի կառուցման գործը հսկայաքայլ առաջ է ընթանում: Մեր գասիարակության հիմքում դնում ենք կոլեկտիվիզմը:

Կոմունիստական բարյականուրյունը պահանջում է դաստիարակել յերեխայի մեջ ատելուրյուն ու արհամարտանք դեպի կրօնական բարյականուրյան ամեն և սեսակի արտահայտուրյունները։ Դաստիարակել նրա մեջ պիտի կանոնական մասերի կամ աշխարհայաց՝ ճանաչելու կյանքը և այն բանականորեն ակտիվ կերպով վերափոխելու։

1 Կուս. ծրագրից:

² ՀԵՆԻԱ, կոմոմոյիլ Ա համ, արտաս, ճառում.

3 Նույն տեղը

¹ XVIII կուսկոնքի բրենցիլայում ընկ. ընկ. Մոլոտովի և Կույբիշևի գելութեարի առջեկանունած բանաձեկց:

Կոմունիստական բարոյականությունը պահանջում է անհաջ պայմանականի շեմ, ազգայնամոլուրյան ամեն տեսակի արտահայտությունների դեմ, դաստիարակել մատաղ սերնդի մեջ բոլոր յերկրների պրոլետարիատի և աշխատավորական լայն մասսաների համերաշխության գաղափարը, ինտենացիոնալիզմի գաղափարը դարձնել խորհրդային պոլիտեխնիկական դպրոցի գաստիարակչության անկյունաքարը:

Վերջապես՝ կոմունիստական բարոյականությունը պահանջում է արմատական նեղաւորում մեր հայացքներում դեպի ընտանիքը, դեպի կենացալը. վերակառուցել այդ բոլորն այնպիս, վոր համապատասխանեն սոցիալիստական նոր կյանքի պահանջներին:

Վորքնք են կոմունիստական աշխարհայացքի, կոմունիստական բարոյականության ու վարքագծի դաստիարակության ուղիները:

Այդ ուղիները մեզ տալիս են մարքությունինյան ուսմունքը:

ա) «Կոմունիստ կարելի յե դառնալ միայն այն ժամանակ, յեր հիւուրյուննի կնարսացնես մարդկության մշակած բոլոր հարսությունների գիտեցումը»:¹

Դա նշանակում է, վոր պետք է տիրապետել գիտությունների հիւուններին, տեսնիկայի նվաճումներին: Դա նշանակում է, վոր աճող սեռունդը դպրոցում պետք է յուրացնի այն բոլոր հիմնական փաստերն, առանց վորի չի կարելի դառնալ «Ժամանակակից կրթված մարդ»: (Լենին):

Այդ չի նշանակում, թե պետք է ուղեղը ծանրաբեռնել ամեն տեսակի անպետք գիտելիքներով, ինչպես վոր անում է բուրժվական դպրոցը: Մենք պետք են մոտենանք անցյալից մնացած արժեքներին քննադատորեն, հաղթահարելով այն՝ գեն շղրծենք այն ամենն, «ինչ անհրաժեշտ է նանդիսացել կապիտալիզմի համար» յեկ վերցնենք այն ամենն, ինչ վոր «անհրաժեշտ է կոմունիզմի համար»: (Լենին):

Այս կապակցությամբ միանգամայն պարզ են այն դիրեկտիվները, վոր տվեց վերջին տարիների ընթացքում մեր կուսակցությունը խորհրդային պոլիտեխնիկական դպրոցի վերակառուցման ուղղությամբ: Դիրեկտիվները, վորոնք դպրոցական ճակատում աշխատողների և կուսակցական ու խորհրդային վողջ հասարակայնության ուշադրությունը կենտրոնացրին ուսման վորակը բարձրացնելու շուրջը, դպրոցի «արմատական թերությունը» վերացնելու և հանրակրթական առարկաները դպրոցում իրենց բարձրության վրա դնելու: Մեր դպրոցը պետք է դպրոցում իրենց բարձրության վրա դնելու: Մեր դպրոցը պետք է պատրաստի տեխնիկումների ու բարձրագույն դպրոցների համար լիակատար գրագետ մարդիկ, վորոնք լավ տիրապետեն գիտությունների հիմունքներին (Փիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն):¹

«Գիտությունների հիմունքներին տիրապետած» «լիակատար գրագետ մարդը» միայն կարող է լինել «ժամանակակից կրթված մարդ»:

բ) Կարելի յե արդյոք միայն գիտությունների հիմունքներին տիրապետելով կոմունիստ դառնալ: Վան, դա կլիներ միակողմանի: Կոմունիստը պետք է ունենա հանրակողմանի զարգացում: Մարքսն ահա թե ինչպես և ձեակերպել պրոլետարական գաստիարակության եռթյունը.

«Կրթություն ասելով մենք հասկանում ենք յերեք բան. 1) մտավոր կրթություն, 2) այնպիսի ֆիզիկական դաստիարակություն, վոր տալիս են մարմնամարզական դպրոցներն ու զինվորական վարժությունները, 3) պոլիտեխնիկական ուսուցքամբ, վորը ծանոթացնում է բոլոր արտադրական պրոցեսների ընդհանուր գիտական սկզբունքների հետ և միևնույն ժամանակ յերեխային ու դեռահասին գործնականապես վարժեցնում է բոլոր արտադրությունների տարրական գործիքները բանեցնելու»:¹

Այսպիսով գիտությունների հիմունքներին տիրապետելը՝ մտավոր կրթությունը՝ դաստիարակության միայն մեկ կողմն է, ճիշտ կարևոր գործույն կողմը:

Դրա հետ նաև պրոլետարական ուսմունքը պահանջ է դնում դաստիարակել առողջ սերունդ, մտավոր կրթությանը զարգույթի Ֆիզիկական զարգացումը: Ներկայումս մեր հասարակարգը հետապնդում է պատրաստել սոցիալիզմի առողջ, ձեռներեց, կենառւրախ, յեռանդու ու գիմացիուն շինարարները, վորոնք իրենց ուժերը տրամադրեն: Նոր հասարակության կառուցման և սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործին:

Այսպիսով ուրեմն, մտավոր զարգացման զուգընթաց, մենք խորհրդային պոլիտեխնիկական դպրոցում աճող սեռունդին պիտի տանք նաև գիտիկական լայն զարգացում:

գ) Սակայն, ինչպես մենք տեսանք, Մարքսն ընդգծում է պրոլետարական դաստիարակության տեսություն յերրորդ անկյունաքարը՝ պոլիտեխնիկական կրթությունը: «Պոլիտեխնիկական ուսուցումը հանդիսանում է կոմունիստական դաստիարակության որգանական մասը»:² Պոլիտեխնիկական խորհրդային դպրոցի հիմնական հատկանիշն է: Ահա թե ինչու Մարքսիդմի կլասիկներն այնքան ուշադրություն են դարձրել դաստիարակության այդ կողմի վրա:

1 1-ին Խոսկերնացիոնալի ժների կոնֆերենին կ. Մարքսի կազմած բանաձեից: (Քաղաքական պատմությունը՝ «Сборник материалов и документов по вопросам советской политической школы» գրքից, էջ 15).

2 Համ ԿԿ (Բ) Կենտրոնի սեպտ. 5-ի վորոշումից:

Ահա թե ինչու Լենինը դեռ 1920 թվին կրուպսկայայի թեզիսների վրա արած իր դիտողություններում, հանձնարարում և անմիջապես սկսել պոլիտեխնիկական կրթության ուղղությամբ անհրաժեշտ և հընարագոր մի շարք ձեռնարկություններ: Կենտրոնական կոմիտեն իր 1931 թվի սեպտեմբերյան վորոշման մեջ հրահանգում և վերացնել պոլիտեխնիկական կրթության ասպարիզում գոյություն ունեցող թերությունները, պայքարը մղել ֆորմալ պոլիտեխնիզմի դեմ, պոլիտեխնիկական կրթությունը կազմակերպել Լենինի 1920 թվին տպած ցուցմունքների հիման վրա, պոլիտեխնիկ կրթությունը՝ սերուեն կապել գիտուրյունների հիմունների ներ:

Դ) Սակայն այդ բոլորի հետ պիտի հաշվի առնել մի կարեռագույն մրմենստ ևս. դա տեսականի և գործնականի կապն ե: Լենինն ուսուցանուած ե, վորանհրաժեշտ և ռուսուցման դաստիարակության, յեվ կրօւրյան, ամեն մի խայլ սերուեն կապել բոլոր աշխատավորների ընդհանուր պայմանի ներ՝ ընդեմ շահագործողների:¹⁾ «Անհրաժեշտ ե, վոր կոմյերիտմիությունը յուր կրթությունը, յուր ուսուցումն և յուր դաստիարակությունը կապի բանվորների ու գյուղացիների աշխատանքի հետ, վոր նա չփակվի յուր դպրոցներում ու չսահմանափակվի լոկ կոմունիստական գրքեր ու բրոցյուրներ կարգարվածք»:²⁾ Մեր դպրոցը պետք է իրականացնի իր անխպելի կապը կյանքի հետ, կապը տեսականի ու գործնականի միջև, կապը կրթության և արտադրական ու հասարակական աշխատանքի միջև, չբուանալով միաժամանակ կենտրոմի հրահանգը, վոր «կրօւրյան կապը արտադրական աշխատանքի ներ պետք է իրականացվի այն հիմունքով, վորպեսզի աւակերտերի ամբողջ հասարակական արտադրական աշխատանքը յենրակա լինի դպրոցի ուսումնական ու դաստիարակական նպատակների»:

Սլապես ուրեմն՝

1. Խորհրդային պոլիտեխնիկական դպրոցը պատրաստում է «առջիւնական շինարարության ձեռներեց յեվ գործունյա մասնակիցներ».

2. Կոմունիստը պետք է ունենա կոմունիստական աշխատանյացք, կոմունիստական բարոյականությունն ու վարքագիծ:

3. Կոմունիստը պետք է ունենա յերկար մկաններ յեվ պալպատե ներվեր: Մասնու կրուրյունը պիտի զուգորդվի Ֆիզիկական աշխատանքը ներ:

4. Կոմունիստ դառնալու համար, պետք է յուրացնել մարդկության սեղծած վաղջ հարատուրյունը, տիրապետել գիտուրյունների հիմուններին, ծանոր լինել «տեսականում յեվ գործնականում արտադրության բոլոր գր-

խակար նյուղերին», — սերուեն կապելով ուսուցումն արտադրական աշխատանքի ներ:

5. Դրա համար պետք է «իրականացնել գպրոցի յեվ կյանքի անխպելի կապը, կապը գործնականի յեվ տեսականի միջել, կապը կրօւրյան յեվ արտադրական աշխատանքի միջել»: (Բուրնով):

Ուսումնա-դաստիարակչական աշխատանքի վողջ պրոցեսը յենթակա յե լինելու մեր դպրոցի այդ դաստիարակչական նապատակներին:

Ուսուցման մերություրը դպրոցում, վորպես մանկավարժական պրոցեսի կարելությունը կողմերից մեկը՝ իրենց ներքին պիտի յենրակա լինեն պրոլետարիատի դաստիարակչական նպատակներին, պետք և նպաստեն դաստիարակելու սոցիալիզմի ձեռներեց ու գործունյա շինարարներ:

Եսկ վորպեսզի ուսուցման մեթոդները մեր դպրոցում իրականում դառնան կոմունիստական դաստիարակության հզորագույն միջոցներ՝ անհրաժեշտ ե, վոր դպրոցի յուրաքանչյուր ուսուցիչ վորոշակի ըմբռնի խորհրդային մեթոդիկայի հիմունքները, տիրապետի ընդհանուր մեթոդիկայի հիմնական պրիոններին ու առանձին առարկաների մասնավոր մեթոդիկաներին և վարպետողեն կարողանա գրանք ոգտագործել դըպրոցի ուսումնա-դաստիարակչական առորյա աշխատանքներում:

2. Ի՞նչ ՊԵՇՆՁՆԵՐԻ ՓԻՏԻ ԲԵՎԸՑՅԵՐԵՆ ՄԵՐ ԳՎԲՈՑՈՒՄ ԳՐԾԺԵԴՐՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

3. ՀԱՄ ԿԱ (թ) ԿԵՆՏՐՈՆԻ ՎՐԱ ԸՆՄԵԼԻՆԵՐ ՏԱ- ԼԻՒ ԵՆ ՈՍՈՒ- ՄԱՆ ՄԵՐՈՒԹՅ- ԻՆ ԻԻՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՆԵՐ

Մենք վերկում արդեն նշեցինք, վոր մեր դպրոցի մանակավարական վողջ պրոցեսը, թե բովանդակության և թե մեթոդների տեսակետից՝ յենթակա յե պրոլետարիատի դասակարգային դաստիարակչական նպատակներին:

Ուսուցման մեթոդների վերաբերյալ Համկոմկուսի (թ) կենտրոն իր պատմական վորոշումներում գպրդյի մասին տվել և հետեւ հիմնական զրույթները.

«Խորհրդային գպրոցում գործադրելով ուսուցման զանազան նոր մեթոդներ, վորոնք կոմանդակեն դաստիարակել սոցիալիստական շինարարության ձեռներեց ու գործունյա մասնակիցներ՝ անհրաժեշտ և վճռական պայքար ծավալել ընդդեմ թեթևամիտ մեթոդական պրոտեկտորության, մասսայական ձեռվ նախորոք չփորձած մեթոդներ կիրառելու դեմ; վորն առանձնապես վերջին ժամանակները ցայտուն կերպով ցուցաբերվեց այսպես կոչված «նախագծերի մեթոդի» գործադրմամբ: «Դպրոցի մահացման» հակալինինյան տեսականությունից ըզնող վորձերը՝ դպրոցի վողջ աշխատանքների հիմ-

¹⁾ Լենին. կոմյերիտմ. [Ա] համագ. արտաս. հասից.

²⁾ Նույն տեղ.

քում դնելու այսպես կոչված «նախազերի մեթոդը» տարել են փաստորեն դեպի դպրոցի քայլայումը»¹

«Ուսուցիչը պարտավոր ե սխստեմատիկաբար և հետևողական ձեռվ բացատրել իր դասավանդած առարկան, ամեն կերպ յերեխան ներին սովորեցնել դասագրքով և գրքով աշխատել զանազան տեսակի ինքնուրուցյն գրավոր աշխատանքներ կատարել վարժեցնել կարինետում, լաբորատորիայում, ուսումնական արհեստանոցում աշխատել և, այս հիմնական մեթոդների հետ միասին, լայնորեն կիրառել զանազան տեսակի փորձեր և գործիքների ցուցադրումն եքսկուրսիաներ կազմակերպել (դեպի գործարան, թանգարան՝ դաշտ, անտառ, և այլն): Ըստ վորում՝ դասատուն պետք ե ուսումնական պարապմունքների ընթացքում հանդիպած դժվարությունների դեպքում, ամեն կերպ աջակցի աշակերտներին:

Անհրաժեշտ ե յերեխաններին սխստեմատիկորեն վարժեցնել ինքնուրույն աշխատանքի, լայնորեն գործազրելով զանազան առաջարկություններ՝ դիտության վրոշ կուրսի տիրապետման հիման վրա [ինդիքների և վարժությունների լուծում, մոդելների պատրաստում, աշխատանք լաբորատորիաներում, հերբարիումների (բուսաբանական ժողովածուներ. Զաֆ.) հավաքում ու կազմում, դպրոցական հողամասի ողտագործում ուսումնական նպատակներով և այլն]:

Կենտոմը պարտավորեցնում ե լուսէողկոմներին և նրանց որդաններին դպրոցի վողջ ուսումնական աշխատանքներում ապահովել դասատուական կազմի դեկավարող գերլը»².

Ցելակետուննալով մեր գլուցի դաստիարակչական նպատակներն ու կենտոմի տված վերոհիշյալ դրույթներն ուսուցման մեթոդների վերաբերյալ այլ և կենինի ցուցմունքներն այն մասին, թե ինչ և ինչպես պետք ե սովորել՝ մենք կարող ենք արդեն պարզել այն հիմնական պահանջները, վորոնց պիտի բավարարեն մեր դպրոցում ուսուցման մեթոդները:

Անհրաժեշտ ե նշել, վոր մեր ընդհանուր մերովիկալի ընդհանուր մերակիայի հիմնական գծերը:

4. Խորհրդային առանձին պրիմիներն իրենց կոնկրետ առանձին պրիմիներն ուսուցման մեթոդների են գտնում առանձին ուսումնական առարկաների կոնկրետի մշակման հետ կապված, առանձին ուսումնական առարկաների մասնակիուր մերովիկալի հետ զուգորդված: Զկա մեթոդ առանց ուսումնական նյութի: Յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի իր մասնավոր մեթոդիկան: Ըստհանուր մեթոդիկան հարստանում ե մասնավոր մեթոդիկաներով, ընդուրկում ե մասնավոր մեթոդի-

կաներից այն, ինչ ընդհանուր ե: Մյուս կողմից՝ մասնավոր մեթոդիկաները շաղկապված են մարքս-լենինյան մեթոդուրիկայի հիմնական դրով վերցրած՝ խորհրդային դպրոցի ընդհանուր մեթոդիկայի հիմնական դրույթների հետ: Այդպիսով, ընդհանուր մեթոդիկայի և առանձին ուսումնական առարկաների մասնավոր մեթոդիկաների միջև գոյություն ունի սերտ կապ:

Բնագիտական եքսկուրսիայի կոնկրետ նյութը մշակելու համար կազմակերպվում և անց ե կացվում այլ ձևով, քան թե արտադրական կամ աշխարհագրական եքսկուրսիան: Այդ եքսկուրսիաների առանձնահատկություններն արտահայտություն են տվյալ ուսումնական առարկայի կոնկրետ նյութի առանձնահատկությունների: Սակայն միաժամանակ այդ բոլոր եքսկուրսիաներն ունեն կազմակերպման, անցկացման և մշակման տեսակետից շատ ընդհանուր գծեր, վորոնք և ընդհանուր մեթոդիկայի նյութն են կազմում: Նույնը մենք կարող ենք ասել և բոլոր այլ մեթոդական պրիմների վերաբերյալ:

Ուսուցման մերովները խորհրդային պոլիտեխնիկական դպրոցում պետք ե բավարարեն հետեւյալ պահանջներին:

ա) Ուսուցման մերովները մեր գպրոցում սերտուեն կապված են ուսումնական նյութի բովանդակության հետ: Բովանդակությունն ու մերաբները կազմում են դիալեկտիկ միասնություն, պայմանավորում են իրար, փոխազարձարար ներգործում են իրար վրա: Ըստ վորում՝ վերջին հաշվով, վճռական նշանակություն ունի կրթական դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը: Այս տեսակետից առաջին պահանջը, վորին պիտի բավարարեն ուսուցման մեթոդները մեր դպրոցում, պետք ե լինի այն, վոր այդ մերովները համապատասխանն ուսուցման նյութին, կրթական-դաստիարակչական աշխատանքի բովանդակությունն ունի կազմեն վերջնիս հետ դիալեկտիկ միասնություն:

բ) Ուսուցման մեթոդները պետք ե ուժանդակեն կերտելու աշակերտի գիտելեկարկ-մատերիալիստական աշխարհայացքը, դաստիարակելու նրանց մեջ կոմունիստական բարոյականություն:

Մենք վերական արդեն պարզեցինք, թե ինչպես պետք ե դաստիարակել կոմունիստական հայացքները ու բարոյականություն:

գ) Ուսուցման մերովները մեր գպրոցում պետք ե ուժանդակեն գրաստիարակելու սոցիալիստական շինարարաւրյան ձեռներեց ու գործունյա մասնակիցները: Այդ մեթոդները պետք ե աշակերտին տան ունակություն և վարժություն՝ իր ձեռք բերած գիտելիքները սոցշինարարության գործնականում կիրառելու համար:

Այդ տեսակետից, մանկավարժական պրոցեսը վրապես ուսումնական դաստիարակչական աշխատանքի բովանդակության և ուսուցման մեթոդների միասնություն, պետք ե դաստիարակչական աշխատաներին

1 Համ. ԿԿ(բ)Կենտոմի 1931 թվի սեպտ. 5-ի վորոշումից.

2 Համկ(բ) Կենտոմի 1932 թ. սպոտ. 25-ի վորոշումից:

ըմբռնելու և յուրացնելու իրենց շրջապատում կատարվող տընտեսական, հասարակական ու կուլտուրական շինարարության դասակարգային-սոցիալական իմաստը: Ուսուցման պրոցեսում աշակերտը պետք է ձեռք բերի ունակություններ՝ աշխատելու կոլեկտիվի մեջ, իր մասնակցությամբ, ձեռներեցությամբ ու ստեղծագործական աշխատանքով ընդհանուր աշխատանքն առաջ տանելու, իր գիտելիքներն և ունակությունները մաքսիմալ չափով սոցշինարարության ընդհանուր գործին սպասարկելու:

Անհրաժեշտ է այնպիսի մեթոդներ կիրառել վոր ուսուցչի զեկավարությամբ դրանք նպաստեն աշակերտների մեջ զարգացնելու մաքսիմում ձեռներեցություն, ակտիվություն, կոնսարտակարի և կազմակերպչական ունակություններ:

Դ) Ուսուցման մերողները պետք է ապահովեն գիտության հիմունքների սիստեմատիկ ամուր ու գիտակցական լուրացումն ու տիրապետումը: Նըպաստեն վերացնելու դպրոցի «արմատական թերությունը», «պատրաստելու տեխնիկումների ու բնիկների համար միանգամայն գրագետ մարդիկ, վորոնք լավ տիրապետեն գիտությունների հիմունքներին (Փիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և ուրիշ):¹

Սակայն չպիտի մոռանալ, վոր ձեռք բերած գիտությունը խորհրդացին պոլիտեխնիկական դպրոցում իր գորակով արմատապես տարբերվում է բուրժուական դպրոցի տված գիտությունից: Բուրժուական դպրոցը մեխանիկորեն յուրացնել տալով մասսաներին գերազանցապես անպետք ու խեղաթյուրված գիտելիքներ, պատրաստում է նրանցից բուրժուակայի հու գործիքներ: Խորհրդացին պոլիտեխնիկական դպրոցը հետապնդում է, վոր աշակերտի կողմից գիտության յուրացումը լինի վոչ թե ֆորմալ, մեխանիկական, այլ գիտակցական: Առաջերթ պետք է իր ձեռք բերածը լուրացնի, մօսկի, դարձնի համոզմունք յիվ կարողանալ այն զենք դարձնել՝ կոմունիզմը կառուցելու գործում: Միայն այդ դեպքում ձեռք բերած գիտությունը կարող է ոժանդակել կերտելու աշակերտի մեջ դիալեկտիկ մատերիալիստական աժխարհայաց:

Մեր դպրոցը պետք է առ գիտության հիմունքները, առ ունակությանը, վոր նրանք իրենք մօսկի կոմունիզմը հայսցներ, պետք է նրանց դարձնի կրթված մարդիկ», —անալ լենինյան դրույրը:

Այդ բոլորը պահանջում է, վոր ուսուցիչը լավագույն ձեռք ուսումնասիրի աշակերտական կոլեկտիվը ու աշակերտներից ամեն մեկին, գործադրի համապատասխան մեթոդական ձեեր ու պրիոներ, մաքսիմալ չափով ոգտադրման աշակերտների ինքնուրույն աշխատանքները՝ նրանց կողմից գիտության վորոշ կուրսի տիրապետման հիման վրա լայնորեն ոգտագործի վարժությունները, կրկնությունը. նպաստի ձեռք

¹ Համեկի (բ) Կենտկոմի 1931 թվի սեպտ. 5-ի վորոշումից.

բերած գիտելիքների գիտակցական ամուր յուրացման ու ամրապնդմանը:

Ե) Ուսուցման մերողները մեր դպրոցում պետք է յելակիտ ունենալ Կենտկոմի այն դրույրը, վոր «Գրուրյան կապն արտադրական աշխատանքի հետ պետք է իրականացվի այն հիմունքով, վորպեսզի աշակերտների ամբողջ հասարակական-արտադրական աշխատանքը յենքակա լինի դպրոցի ուսումնական յեկ դասիարակչական նպատակներին»:²

Այս դրույթը շախճախիչ կերպով հարվածում է «Ճախերի» փորձերին՝ խորհրդացին պոլիտեխնիկական դպրոցում թուլացնելու կազմակերպված ուսումնական աշխատանքը, «Ճախ» Գրագարանությամբ հիմնավորելու «դպրոցը գործարանի ցեխը» դարձնելու հակաենինյան տեսությունը:

Կենտկոմի այդ դրույթը սուր զենք է տալիս պայքարելու այդ փորձերի գեմ: Կազմակերպված եքսկուրսիան, գործնական աշխատանքը դպրոցում, արհեստանոցում, արտադրության մեջ և աշակերտների հասարակական ու կուլտուրական աշխատանքը բնակչության մեջ՝ պետք է հետապնդեն դաստիարակչական նպատակներ, յենթակա լինեն դըպրոցի ուսումնական ու դաստիարակչական նպատակներին:

Այստեղ անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, վոր մեր դպրոցներում յերբեմն կենտկոմի այդ կարեռագույն դրույթը գործնականում խեղաթյուրում են, վորի հետևանքով «գիտությունների յուրացումը» հաճախ ընդունում և «զրգացին» ու բանախոսական բնույթ, «տեղի ունեն կրթական ու արտադրական աշխատանքի կապի թուլացման բազմաթիվ դեմքեր»:³ Դա հետևանք է այն բանի, վոր տեղերում շատերը չեն հասկանում կենտկոմի վերոհիշյալ դրույթը:

«Արտադրական աշխատանքի դպրոցի ուսումնա-դաստիարակչական նպատակներին յենթակա լինելը հասկանում են հաճախ ներև վերին աստիճանի սահմանափակ: Հասարակական աշխատանքն և արտադրագույն գործը ներկա ետապի համեմատ չեն վերակառուցված, նրանց նշանակությունը թերագնահատվում ե»:³

Տեսականի ու գործնականի կապն ուսուցման գործում առաջին հերթին լուծվում է խորհրդացին պոլիտեխնիկական դպրոցի ծրագրերում: Սակայն այդ կապը գործնականորեն պիտի իրականանա ուսուցման համապատասխան մեթոդների գործադրման պրոցեսում: Այդ կապը կարելի յե ուսուցման բազմազան մեթոդների միջոցով իրականացնել նայած նյույթի բնույթին ու ուսումնական աշխատանքի այլ պայմաններին: Այսպես՝ գործադրելով լաբորատոր աշխատանքներ, ինքնու-

¹ Համեկի (բ) Կենտկոմի 1931 թվի սեպտ. 5-ի վորոշումից.

² Բուբնով. «Главные проблемы перестройки школы» էջ. 41—42.

³ Նոյն տեղ.

բույն և հետախուզական աշխատանքներ, ուսումնական նշանակություն ունեցող եքսպերիմենտներ ու փորձեր, ինչպես նաև բնակչության մեջ աշխատանքներ տանելով, մողեններ և դանազան հավաքածուներ պատրաստելով, եքսկուրսիաներ կազմակերպելով, գլորոցական հողամասում, աշխատանքային սենյակում և արհեստանոցում աշխատելով և այլն՝ հնարավոր ե իրականացնել տեսականի և գործնականի կապը:

Աշխատանքի այդ բոլոր մեթոդները պետք ե բովանդակության հետ կապված՝ յենթակա լինեն դպրոցի ուսումնառարակչական նպատակներին:

զ) Այսուհետեւ՝ մենք պահանջ ենք դնում, վոր ուսուցման մերոդները մեր դպրոցում նպաստեն զարգացնելու առաջերքի մեջ ինենուրույն աշխատելու յեկ տարտական հետախուզական ունակություններ ձեռք բերելու գործին: Դպրոցում գործադրվող ուսուցման մեթոդները չե կարելի նույնացնել զիտա-հետազոտական աշխատանքի մեթոդներին: Բայց չե կարելի դրանք հակադրել իրար: Ուսուցման մեթոդն առաջին հերթին նպատակ ե դնում նպաստելու, վոր աշակերտը մաքսիմալ չափով և ամուր ու զիտակցական ձեռվ յուրացնի գիտությունների հիմունքները, տիրապետի տեխնիկային, վոր աշակերտը ձեռք բերի մի շարք ունակություններ, յուրացրածը գործնականում կիրառելու: Իսկ զիտական մեթոդի նպատակն ե՝ ուսումնասիրել, լուսաբանել ու զարգացնել զիտության այս կամ այն բնագավառը: Սակայն դրա հետ միաժամանակ՝ աշակերտը հենց ուսումնական պրոցեսում իսկ ակտիվ կերպով յուրացնելով ուսուցման նյութը, բնականորեն կատարում ե (թեկուզ շատ ելենտար ձեռվ), վորոշ հետազոտական, ստեղծագործական աշխատանք:

Դպրոցը պետք ե մատաղ սերնդին այնպիսի դաստիարակչություն տա, վոր յուրաքանչյուր պատանի վարժվի տոկուն ու համառ ինքնուրույն աշխատանքով հաղթահարել հանդիպած դժվարությունները, կարողանան հսկայական կամքի ուժով, ակտիվ ստեղծագործական աշխատանքի պրոցեսում տիրապետել մարդկության ստեղծած հարստությանը, տիրապետել զիտությանը, տեխնիկային ու իր ուսուցման պրոցեսից սկսած մինչև գործարանի, կոլխոզի աշխատանքը՝ լավագույն վրակ ու բարձրագույն ցուցանիշներ տա:

Դրա համար դպրոցի և ուսուցչի նպատակն ե լինելու մաքսիմալ չափով զարգացնելու աշակերտի հետախուզական և ինքնուրույն աշխատելու ունակությունները, վորի մասին կենտրոն իր վորոշման մեջ հրահանգում ե՝

«Անհրաժեշտ ե յերեխաներին սիստեմատիկորեն վարժեցնել ինքնուրույն աշխատանքի, լայնորեն գործադրելով զանազան առաջադրություններ՝ զիտության վորոշ կուրսի տիրապետման հիման վրա (խնդիրների ու վարժությունների լուծում, մողենների պատրաս-

տում, աշխատանքը լաբորատորիաներում, հերթարիումների հավաքում, դպրոցական հողամասի ոգտագործում՝ ուսումնական նպատակներով և այլն»):¹

Ինքնուրույն աշխատելու ունակությունները պիտի զարգացնել ուսուցչի անմիջական զեկավարությամբ, մանկավարժական պրոցեսում վերջինիս դերի ուժեղացման հիման վրա:

Այդ իսկ իմաստով՝ «Կենտրոնը պարտավորեցնում ե լուսժողկոմատներին և նրանց որգաններին՝ դպրոցի վողջ ուսումնական աշխատանքներում ապահովել դաստիարական կազմի զեկավարող վերը»:²

ե) Ուսումնական պրոցեսում ուսուցչի դեկաֆարող դերը պիտի զուգըլի, աշակերտերի զիտակցական ակտիվության հետ:

Աշակերտների ակտիվ մասնակցությունը մանկավարժական պրոցեսին, նրանց ինքնուրույն ու հետախուզական աշխատանքը, պետք ե զուգորդվի ուսուցչի զեկավար դերի հետ: Այս հանգամանքը պետք ե վոչ թե թուլացնի ուսուցչի ակտիվ ու զեկավար դերը մանկավարժական պրոցեսում, այլ պետք ե, ընդհակառակը, ել ավելի ամրապնդի այն:

Սա բղխում ե այն հանգամանքից, վոր դպրոցը հանդիսանում ե կրթական դաստիարակչական գործում և ընդհանրապես կուլտուրական հեղափոխության բնագավառում կենտրոնական ողակը: Իսկ դպրոցում կենտրոնական անձնավորություն են ուսուցչի զեկավար դերի թուլացումը (վոր, ինչպես կտեսնենք հատուկ ե «ձախներին»), վոչ այլ ինչ ե, յեթե վոչ խորհրդային, պոլիտեխնիկական դպրոցի թուլացման ու քայլքայման փորձը, վոր իր հերթին կապված ե «գլորոցի մահացման» հակալենինյան տեսության հետ:

Այդպես ուրեմն՝ մեր դպրոցում գործադրվող մեթոդները պետք ե մի կողմից լայնորեն նպաստեն աշակերտների ինքնուրույն զիտելուն, ըմբռնելուն, դատելուն, յեղակացություններ անելուն և ձեռք բերածը կյանքում ոգտագործելուն ու կիրառելուն, մյուս կողմից դրանք միաժամանակ պետք ե նպաստեն ուսուցչի զեկավար դերի ամրացման մանկավարժական պրոցեսում, վորպես խորհրդային իշխանության և կուսակցության դաստիարակչական խնդիրները դպրոցում անշեղորեն անցկացնողի:

ը) Վերջապես՝ գործադրվող մերուները պետք ե մեծապես նպաստեն նիւթ հիմունքների վրա դնելու աշակերտերի կուեկտիվ լիվ ինենուրույն աշխատանքի:

Մենք դպրոցում ամենանինա ձեռվ պայքարում ենք բուրժուա-

¹ Համկե(բ) Կենտրոնի 1932 թվի ողական 25-ի վորոշումից.

² Խորյուն տեղում

Բուրժուական անհատականության դեմ պայքարելով հանդերձ, մենք ձգում ենք ամենալայն չափով զարգացնել յուրաքանչյուր աշակերտի ներքին բոլոր հարստությունները, զարգացնել պրոլետարական տեսանկյունով՝ աշակերտի բոլոր սոցիալապես արժեքավոր, կոմունիստական դաստիարակության դրույթներին համապատասխանող ունակություններն ու ձիրքերը:

Կոմունիստական դաստիարակության հիմքում դրված ե կոլեկտիվիստական դաստիարակությունը, վորպես ամենախոշոր անկյունաքարերից մեկը: Մարքսն ու նոգելու իրենց «Գերմանական իդիոլոգիա» աշխատության մեջ ահա թե ինչպես են բնորոշում կոլեկտիվիզմի նշանակությունն անհատի զարգացման տեսակետից:

«Միայն կոլեկտիվուրյան («Յ ԿՈԼԼԵԿՏԻՎՆՈՍՏԱ») մեջ ե անհատը միջոցներ սանում, վորոնի նրան հնարավորուրյան են ընձեռնում՝ յուր ձիրքերը հնարակողմանիութեան զարգացնելու. հետեւ աշխատական կոլեկտիվիզմի մեջ ե հնարավոր անհատական ազատուրյունը»:¹

Ահա թե ինչու կենտկոմն իր 1932 թվի ոգոստոսի 25-ի վորոշման մեջ հրահանգում ե. «Պետք է ամեն կերպ ծավալի ուսումնական աշխատանքի կոլեկտիվ ձևին»:²

Այդպես ուրեմն, կոլեկտիվ աշխատանքի ձևերը պետք ե մաքսիմալ չափով ոգտագործել:

Սակայն անհրաժեշտ ե նշել և այն հանգամանքը, վոր կենտկոմը հաշվի առնելով ուսուցման կոլեկտիվ աշխատանքի բնագավառում յեղած խեղաթյուրությունը, մանավանդ այսպես կոչված «բրիգադալաբորատորային» մեթոդի գործադրման ժամանակ՝ նախազգուշացնում ե, վոր «չկիրառվի բրիգադների մօսական յել պարտադիր կազմակերպումը»:³

Պետք ե ասել, վոր շատերը չհասկանալով կենտկոմի ցուցմունքի ձիշտ իմաստը՝ կարծում են, թե այդ վորոշմամբ կենտկոմն արգելում ե առհասարակ բրիգադների կազմակերպումը: Այսպես՝ Ռոստովի դպրոցներից մեկի արհեստանոցում գործիքները բաշխելու և մի շարք այլ կազմակերպչական աշխատանքներ տանելու համար կազմակերպած բրիգադների փաստը գումանց կարծիքով «Ճախ» խեղաթյուրում ե...

Բրիգադները պետք ե կազմել վոչ կայուն, այլ ժամանակավոր ձևով, տվյալ կոնկրետ ուսումնական խնդիրը կամ ուսումնական կազմակերպչական աշխատանքը կատարելու՝ յեթե այդ բղիքում ե ուս. աշխատանքի բովանդակությունից ու բնույթից, դպրոցի կամ խմբի կոնկրետ պայմաններից այն հաշվով, վոր այդ աշխատանքը կատարելուց հետո բը-

¹ Մարքս և Էնգելս, Արքiv I, Եջ 243.

² Համ. ԿԿ (Բ) կենտկոմի 1932 թվի ոգոստ. 25-ի վորոշումից:

³ Նույն տեղ:

ըիկադները լուծվեն, այլ կազմով մի այլ առիթով նորից կազմակերպվելու համար:

1. Համենայն դեպք, պետք ե լելակեց ընդունել այն, վոր կոլեկտիվիզմը պարզում հանդիսանում է կոմունիստական դաստիարակության հիմնական սկզբանքներից մեկը:

2. Կոլեկտիվ աշխատանքը պետք ե այն հաշվով կազմակերպել, վոր պեսզի կոլեկտիվիստական ուսակություններ զարգացնելու հետ միասին՝ այն նպաստի յուրաքանչյուր աշակերտի կողմից մշակվող նյութը լրիվ, խոր և գիտակցորեն յուրացնելու, նրա անհատական ձիրքերը զարգացնելու:

3. Բրիգադները յերբեք չպիտի պարտադիր ու մօսական լինեն, այլ պիտի կազմեն տվյալ ընթացիկ խնդիրը կատարելու, վորը վերջացնելուց հետո զրանք ցըլում են:

4. Ուսումնական աշխատանքը կազմակերպելիս, ուսուցիչը պետք ե յելակետ ընդունի Համկոմկուտի (Բ) կենտկոմի 1932 թվի ոգոստոսի 25-ի վորոշման մեջ տված ցուցմունքը՝ թե կայուն կազմով խմբի (դաստիարանի) կազմակերպման «ձեվը պետք ե իր մեջ ընդգրի ուսուցի դեկանությամբ ընդհանուր խմբակալին, բրիգադային յեվ յուրաքանչյուր աշակերտի անհատական աշխատանքի՝ գործադրելով ուսուցման բազմանման մերությունում»:

Այդպիսով անհատական ու կոլեկտիվ աշխատանքը պետք ե ձիշտ կերպով իրար զուգորդեն, նպաստեն աշակերտաների կոլեկտիվիստական ուսակությունների և անհատական ձիրքերի և ուսակությունների լայն հազարգացման, վորոնք չեն հակազդվում, այլ դիակեկտիկորեն լրացնում են իրար:

5. Անհրաժեշտ ե նշել նաև, վոր կոլեկտիվիզմի դաստիարակության և կոլեկտիվ աշխատանքի միակ ձևը չպիտի հասկանալ միայն բրիգադային աշխատանքը: Կոլեկտիվ դաստիարակությունը պահանջում ե յելակետ ընդունել լենինի ցուցմունքը՝ «աշխատել մի ընդհանուր պլանով», կոլեկտիվ ձևով ընդհանուր նպատակներ դնել, միասին քննարկել դրված խնդիրը, միասին լուծել միասին կատարել ու ստուգել կատարածը: Այդպիսի աշխատանքը կարելի յե կազմակերպել և ամրող խմբի հետ, և բրիգադներով:

6. Կոլեկտիվիզմի, կոլեկտիվ աշխատանքի և ուսման ուսակությունների զարգացման լավագույն մեթոդն ե սոցմքումն ու հարվածայնությունը: Սոցիալիստական այդ մեթոդի հիման վրա պետք ե կազմակերպի կրթական-դաստիարակական վողջ աշխատանքը: Սոցմքը ցումն ու հարվածայնությունը պիտի դառնան ուսուցման բոլոր մեթոդների ոգտագործման հիմնաքարերը:



Յ. Խ'ՆՉ ՄԵԹՈՒՆԵՐԱՎ ՊԻՏԻ ՄՇԱԿԵԼ ՏԱՅԵԼ ԿՈԴԿՐԵՑ ԱԽՍՈՒՄՆԵԿԸՆ ՆՑՈՒԺԸ

Հ. Օովանդակարյան ու մերողի դիակելիք է կա պահանջանառ այս այլ ընթացաւքներուն և պահանջանառ այս այլ ընթացաւքներուն:

ու ու մերողներ: Այդ մեթոդների բազմազանությունն ու դրանց նպատակահարմար զուգորդումը պիտի ունենան մարդարկեթիւնն մերողուգիտական հիմք:

Այս կամ այն մեթոդի, մեթոդական պրիմի կամ դրանց զուգորդում գործադրությունը, մենք կարող ենք դիտել միայն կոնկրետ ուսումնական նյութի մշակման հետ կապված, քանի վոր մեթոդը ուսումնական նյութի բովանդակությունից զատ՝ կիներ անմիտ սխոլատիկա, մետաֆիզիկա, քանի վոր ուսումնական մեթոդի և ուսումնական նյութի բովանդակությունն իրար հետ գիտելիտիկորեն շաղկապված էն:

Ինչնդ և պայմանավորվում ուսուցման այս կամ այն մեթոդի, կամ թե բազմազան մեթոդների զուգորդված գործադրումը:

Ուսումնական նյութի մշակումը պետք է կատարվի այսպիսի մեթոդներով, վորոն մերուեն կապված են սիլա ուսումնական նյութի բովանդակության հետ յետ համապատասխանում են այդ ճաւրի բնույթին:

Որինակ՝ մաթեմատիկական նյութը բոլորովին այլ մեթոդներով ու ձեերով կարող ե մշակվել, պատմականն այլ, ինզուն՝ այլ, և այլն:

Ճիշտ է, միևնույն մեթոդական պրիմները կարող են ոգտագրութել տարբեր ուսումնական առարկաների մշակման ժամանակ: Որինակ՝ եքսկուրսիան կարող է լինել աշխարհագրական, բնագիտական, պոլիտիկանիկական, հասարակագիտական: Սակայն յուրաքանչյուր ուսումնական առարկայի մշակման դեպքում, այդ ընդհանուր մեթոդական պրիմը առարկայի բովանդակության ու բնույթին համապատասխան բեկումն է սահմանում: Առանձին առարկաներից յուրաքանչյուրի այս կամ այն բաժինը մյուսներից տարբեր մեթոդներով ու ձեերով կարող ե մշակվել, նայած տվյալ բաժնի նյութի բնույթին: Որինակ՝ վերցնենք 3-րդ դասարանի աշխարհագրության ծրագրի Ա թեմայից:

— «Ծանոթանալ շրջապատիք հետ... տեղի մակերեսը, ճարթություն, ըլուր, հովիտ, խորխորատ, գետահովիտ և այլն: Գյուղատեսնական հողաբաժիններ՝ անտառ, դաշտեր, մարգագետիններ, ձահիճներ և այլն»:

Այդ նյութը հանձնարարվում է մշակել եքսկուրսիա կատարելով և մի բարձր տեղից շրջապատը դիտելով:

Գրա նետ միասին պետք է գիտել քարտեզներ, գիագրամներ, կաղմակերպել զուույներ և այլն:

Սակայն նույն այդ դասարանի աշխարհագրության 7-րդ թեմայի «բ» մասը («Մարզի տեղագրությունը ԽՍՀՄ-ի քարտեզի վրա») եքսկուրսիայով մշակել հասարակոր չե, դա պիտի մշակել ուսուցչի զեկավարությամբ՝ գիտելով և ուսումնասիրելով քարտեզը, արտադելով քարտեզից, դասագրքիրում համապատասխան նյութը ընթերցելով և ուսուցչի կենդանի խոսքի միջոցով:

Վերցնենք նույն 3-րդ դասարանի հանարակագիտության յերկու տարբեր թեմաներ, «Հարամայրուրյան վետացումը» (IV թեմա) և «Պրամենին» (X թեմա): Առաջին թեման պատմական անցյալին և վերաբերում և այն մշակելու համար հետոյալ մեթոդներն ու ձեերն են առաջարկվում:

«Բազումավարչության դիտվամները. ա) Ի՞նչքան հող է խվել գյուղացիներից կտլվածատերերի ողափին և բ) մի քանի գյուղերում գյուղացիներին հողի հատկացման պլանը: Գեղարվերսական գրականությունից՝ հատվածների ընթերցում:

«Գյուղական ժողով» պատկերի քննարկումը:

Տեղական յերկրագիտական նյութի ոգտագործում, (վոր ցույց է տալիս, թե ինչպես և 1861 թվին կատարվել հողի հատկացումը գյուղացիներին):

Մինչդեռ «Պրամենին» թեմայի համար հանձնարարվում և բոլորութին այլ մեթոդներ ու ձեեր, այսպիս:

«Դասարանի մասնակցությունը պիտներական վաշտի հավաքին»:

Դաշտի կողմից նշանակված պիտների զուույնը դասի ժամանակ՝ աշակերտների հետ, պիտներական կազմակերպությունների խնդիրների մասին:

Աշակերտների կողմից պիտներական անկյան կազմակերպումը. ԽՍՀՄ-ի մի այլ ազգության և կապիտալիստական յերկրներից մեկի պիտներ, կազմակերպություններին նամակներ կտլմել և ուղարկելու»:

Դրա հետ նաև՝ գեղարվեստական ընթերցանություն, պիտներական յելպի սովորելը և այլն:

Այդ որինակներն արգեն իսկ պարզ ցույց են տալիս՝ 1) վոր մինչեւ իսկ նույն դասարանի նույն առարկայի տարբեր թեմաներից վերցրած նյութերը զբանց ընույթին համապատասխան տարբեր մեթոդներով ու ձեերով են մշակվում. 2) վոր վոն թե մի առարկայի նյութը, այլ և մինչեւ նույն թեման չի կարող մշակվել միմիայն մի մեթոդով, մի մեթոդական պրիմով. 3) վոր առանձին «մաքուր» մեթոդ տարբական զպրոցի գործականություն գոյություն չունի: Նյութը մշակվում է բազմազան մեթոդա-

կան ձևերի նպատակահարմար զուգորդմամբ, վորի մեջ եխսիութիւն ու գրույցը, պատկերի, տռարկայի, քարտեզի, դիագրամի ցուցադրումը, ընթերցանության ոգտագործումը և այլն կարող են իրար հետ հյուսվել: Դրանցից ամեն մեկն իր տեղն եւ ունենալու ուսուցման պրոցեսում, յեթե տվյալ գեպքում դա համապատասխանում է կոնկրետ նյութի բովանդակությանն ու բնույթին, յեթե մեծապես ոժանդակում են նյութի եփեկտիվ մշակման և ակտիվ ու գիտակցական յուրացման:

Բազմազան մեթոդների ոգտագործումը (նրանց միասնության հիման
վրա) մանկավարժական պրոցեսում պայմանավորվում է նրանով, վոր
վոչ մի մեթոդ չի կարող սպառող ձևով ընդգրկել մանկավարժական
պրոցեսի վորջ բարբությունն ու բազմակողմանի հությունը, նրա դիա-
լեկտիկ ձևունությունը: Մարքսիզմի կլասիկները յերեսութիւ բազմա-
կողմանի հությունը, նրա ձևունությունն ու կապերն ըմբռնելու, իմա-
ցություն ձեռք բերելու համար՝ ժխտում են մեկ վորեե մեթոդական
պրիոմի՝ անալիզի կամ սինթեզի, ինդուկցիայի կամ գեղուկցիայի ունի-
վերսալ գործադրումը: Նրանք ուսուցանում են՝ ուսումնասիրել յերե-
սութիւ շարժումը բազմազան մեթոդների միջոցով: Ուսումնական
պրոցեսում միայն մի մեթոդի գործադրումը անխուսափելիորեն տանում
ե դեպի այդ մեթոդի ունիվերսալացումը, դեպի Մարքս-Լենինյան դաս-
տիարակչական ուսմունքի խեղաթյուրումը:

Այսպիսով մենք տեսանք, վոր «մերովներից վկա մեկը չի կարող համարվել ուսման հիմնական լեզվ ունիվերսալ մերով».¹ Վոր խորհրդային գպրոցում պետք է ոգտագործվեն բազմազան մեթոդներ կամ, ավելի ճշշաղացնց նպատակահարմար զուգորդումը՝ Մարքուս Լենինյան մեթոդոգիայի հիմունքով. Վոր գործադրվող մեթոդները պետք է սերտ կերպով կապված լինեն և համապատասխանեն մշակվող նյութի բովանդակությանն ու բնույթին բովանդակության հետ կազմեն միասնություն։ Այդ մի կողմն ե:

Մյուս կողմից՝ մերողները պետք է համապատասխանն առաջիր-
ների առթային առանձնահատկություններին, երանց մասին մակարդա-
կին. Ուսուցման պլոցեսում պետք է հաշվի առնել տվյալ դասա-
րանի աշակերտների ընդհանուր զարգացումը, վորոշ տարիքին հատուկ
հասկացողություններն ու մտապատճենները, դասակարգային-սոցիա-
լական փորձը, յերեխայի տվյալ տարիքին հատուկ ակտիվությունը,
ուշադրության բնույթն ու նրա կապը հոգնածության հետ և այլն
կ առն:

Պարզ է, վոր վորքան ցածը և դասարանը և փոքր են յերեխաները, այնքան սահմանափակ են նրանց սոցիալական փորձը, նեղ են նրանց

«Մտահորիկոնը»: Վորքան փոքր են յերեխաներն, այնքան թույլ են զարգացած լինում նրանց ունակություններն ինքնուրույն դատելու, յերեւլութիւնների ներքին կապն ու որինաչափությունը համարակալու:

Յեկ այն չափով, վոր չափով տարբեր տարիքի յերեխաների ըմբռնողության ու յուրացման ունակությունները տարբեր են՝ տարբեր պիտի չինեն նաև նրանց հետ տարվելիք աշխատանքի վոչ միայն ուսման բովանդակությունն ու ծավալը, այլ և ուսուցման մեթոդները։ Յեթե համարանի ուսանողների հետ տարվող աշխատանքում կարեռագույն տեղ է բռնում դասախոսությունը, այդ նույն մեթոդը բոլորովին չեկարող գործադրվել տարրական դպրոցի վրանե դասարանում։ Այստեղ մանուկների տարիքային առանձնահատկություններից յելնելով՝ կողմանուածական դպրոցի շատ ավելի մեծ տեղ կրոնեն դիտողական ուսուցումը, եքսկուրսիան, գրավոր ու բանավոր վարժություններն ուսուցչի անմիջական զեկավարությամբ, հերթարիումների հավաքումը և այլն։ Մինչև իսկ միենույն տարրական դպրոցի տարբեր դասարաններում աշխատանքի տարբեր ձևեր ու մեթոդներ պիտի գործադրվեն, կամ թե նույն մեթոդները տարբեր բեկում պիտի ունենան։

Մանկաբանությունը պետք է պարզի մեզ «այս կամ այն ներգործության եֆելտիվությունը, նրանց կենսաբանական նպատակահարմարությունը, այդ ներգործությունների կենսական լիմիտաները (սահմանափակությունները) մանկան զարգացման զանազան աստիճաններում»: (Կրուպսկայա): Մանկաբանությունը պիտի ոգնի մանկավարժներին մանուկների զարգացման տվյալ աստիճանին համապատասխան մեթոդներ ոգտագործել:

Այդ աեսակետից պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական դրույթ-ները, վոր տալիս ե մեզ խորհրդային մանկաբանությունը:

Դպրոցական շրջանը յերեխայի այնպիսի տարիքային շրջանն է,
յերբ նա ուսուցչի ղեկավարությամբ ձեռք և բերում զբագիսություն,
տիրապետում և գիտությունների հիմունքներին: Այդ շրջանում յերե-
խայի հիշողությունը զարգանում ու հարստանում և անհրաժեշտ փաս-
տերով: Զարգանում են նրա վերացական հասկացողությունները, վե-
րացականաւրամարանական մտածողությունը՝ յերեսույթներին ներքին
գարգացման որինաչափություններն ըմբռնելու, ընդհանրացումներ
անելու: Կերտվում ե յերեխայի աշխարհայցքը: Յերեխան զինվում և
սոց-շինարարության ակտիվ ու ձեռներեց մասնակից դառնալու ան-
հրաժեշտ գետելիքներով և ունակություններով:

Այստեղից պարզ է, զոր մշակվող նյութն իր բովանդակությամբ, ծավալով ու խորությամբ պիտի աստիճանաբար բարդանա ու խորանա: Դրա հետ կապված հետզհետե պիտի զործադրվեն նյութի մշակման ավելի բարձրացն ու բարդ մեթոդական ձևեր, վարոնց հանրագուռմարք

պիտի նպաստի աշակերտներին տվյալ ուսման պրոցեսում ձեռք բերելու հնի հիման վրա նոր գիտելիքներ, նոր ուսնակություններ: Կամ թե դա պիտի նպաստի ամրապնդելու, խորացնելու և զարգացնելու հիմքի տեղիքներն և նախորոք ձեռք բերած ուսնակությունները, դարձնելու այդ բոլորն ամբողջական սիստեմ: Ուսուցման պրոցեսը պետք է յերեխանների մտավոր կարողություններին մատչելի լինի և համապատասխանի նրանց հետաքրքրության ու ձգտությներին: Դրան զուգընթաց՝ ուսուցման նյութն ու մեթոդները չպետք է անբողջապես յերեխանների այդ հետաքրքրության ու ձգտությներին յինթակա դարձնել վրավիճակ այդ կտահներ դեպի բուրժուական գործամոլություն (ծելլագություն):

Յերեխաների սարքը սարփ ունեցող խմբակների հետ աշխատելիս,
պես և ի նկատ ունենալ նրանց՝

ա) Մոտորային ակտիվությունը, վոր մանկության կարևորագույցն զծերից մեկն է:

բ) Մտավոր աշխատանքի և մոտոբային գործունեյության փոխարարերությունը (համաձայն Պավլովի ուսմունքին՝ վորքան բարդ և ուշարկած մտավոր պրոցեսը, այնքան թույլ է արտահայտվում արտաքին-փիզիկական շարժումը):

գ) Նյութի դիտղականությունն և եմոցիոնալ գունավորումը միծ չափով նպաստում են նրա ճիշտ լմբանելուն ու խորը յուրացման:

դ) Միապաղաղ դաստիվանդությունը (որինակ՝ ուսուցչի միալար պատմելը, մեխանիկական արտագրությունը և այլն) արագ կերպով հոգ-նեցնում ե աշակերտներին. մանավանդ, յիթե զբան չեն զուգորդվում միաժամանակ այլ գրպիտներ, քանի վոր ծախսվում է միատեսակ հներգիա, հոգնում ե տվյալ կենտրոնը. Մեթոդական ձևերը պետք են պատահարմար կերպով հերթափոխվեն, պետք ե աշակերտի բազ-մազան կենտրոններ գործի գրվեն, պետք ե մաքսիմալ չափով նպաս-տավոր պայմաններ ստեղծվեն յերեխայի ստեղծագործական հնարավո-րությունները զարգացնելու (հետազոտական, կառուցողական, դյու-տարարական և այլն): Յերեխաների ներքին ուժերն ու եներգիան դրսևը համար անշուշտ պետք ենոր ուղիներ բացել: Յեկ այլ այնքան ավելի մեծ պահանջ ե՝ վորքան փոքր են դասարանի յերե-խաները:

յեւ Աշակերտների հետաքրքրությունն ու ձգութիւնները, վոր ճիմիված
են նրանց սոցիալական փորձի վրա, վորու հունի մեջ պիտի դնել, տա-
լով դրանց նպատկանարմար ուղղություն յեկ կապելով այդ պրոլետար-
կան դասինարակչական նպատակների խաղործման հետ։ Պետք է հաշվի-
տունել այն հանգամանքը, վոր վորքան մանուկները մնենանում են,
այսքան նրանց սոցիալական փորձը լայնանում ու հարստանում է

կոնցերտիկ ըմբանների ձևով, առաջացնելով համապատասխան ցան կություններ ու հետաքրքրություններ:

զ) Դասավանդման գործում կարենը պատրագույն հանգամանք և հանդիպահում աշակերտներին պիտակցել տալ մշակվող նյութի սոցիալական խթանը: Դա առաջ է բերում յերեխաների մեջ անսպառ յեռանդ և հակայական չափով բարձրացնում և ուսումնական պրոցեսի ակտմաբերն ու դրա եփեկտիվությունը: Եյութի յուրացումն այդ գեղքում լինում է խորը, պիտակցական և կյանքում ոգտագործվում և ավելի մեծ հաջողությամբ:

Ե) Անհրաժեշտ է աշակերտների ներքին ուժերի վարոշ լարում, չորս պետք է նպաստի գրված ուսումնական խնդիրները եփեկտիվ, խորն ու գիտակցական ձևով կատարելու: Դա հնարավոր է այն գեղագում, յերբ աշխատանքը կազմակերպվում է սոցիալիստական մեթոդներով — սոցմքման և հարվածայնության լայն ծավալումով: Սոցիալիստական մերովների գաճարումը պետք է հաջի առնի յերեխաների տարիքային առանձնահատկությունները: Յերեխ չի կարելի մեծերի մեջ տարածված սոցմքման ու հարվածայնության ձեփերը մեխանիկարեն փոխադրել փոքրերի մեջ: Այդ մերովները պետք է յերեխաների մեջ ծավալի նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան ձեփերով յեթ դարձնելի եղուագույն միջոց, քե՛ ուսուցման ցուցանիշները բարձրացնելու յեթ քե՛ կոմունիստական վարչակիծ դաստիարակելու գործում:

Այսպիսով, առավելական տվյալ կուներք նյութը մը-
շակելու համար, ուսուցիչը պիտի գործադրի այդ նյութի
բափանդակուրյան յեկ առողկերտերի սարիբային առանձ-
ևնահատկուրյուններին համապատասխան մերժական ձեռ-
լեր, որքուն հաստակեանարդար զաւորդում:

Սակայն տվյալ նյութի այս կամ այն ձևերով մշակելը կապված է և մեկ կարևոր հանգամանքի հետ. թէ ի՞նչ միջավայրում և գտնվում դպրոցը, ի՞նչպիսի կոնկրետ պայմաններում և աժամանում ուսուցիչը, թէ ի՞նչ կախված կառող և նա ոգտագործել սկզբ ուսումնական նյութը մօսկելու համար:

Բնական ե, վոր արդյունաբերական ձեռնարկներով և թանգարան-ներով շրջապատված դպրոցը հնարավորություն կռւնենալոյն չափով սպասարկողների իր ուսումնական աշխատանքներում այդ նպաստավոր պայմանները: Այստեղ հասարակագիտական ազգային աշխատավայրին գաստիբարակության և այլ առարկաների համապատասխան թեմաները մշակելիս, մեծ չափով կկատարվեն արտադրական - պոլիտեխնիկական, հասարակագիտական և այլ եքսկուրսիաները: Մինչեւ զյուղական միջավայրում գտնվող դպրոցը, յեթէ մանավանդ

այն հեռու յե ՄՏԿ-ներից ու խորհանտեսություններից, նման եքսկուրսիաներ դժվարությամբ պիտի կարողանա հաճախակի կազմակերպել դեպի խոշոր արտադրություն: Բնական է, վոր ծրագրի այդ նույն բաժիններն այստեղ ուսուցիչը պիտի մշակի մեծ մասամբ այլ մեթոդական պրիմիներով:

Հարուսա լաբորատորիաներ ու կարինետներ ունեցող դպրոցում ուսուցիչը մեծ չափով կոգմագործի այդ կահավորումը հետախուզական լաբորատոր աշխատանքները լայնորեն դնելու: Մինչդեռ այդ կահավորությունից զուրկ դպրոցում ուսուցչից պահանջվելու յե խոշորագույն աշխատանք՝ հարստացնելու մանկավարժական պրոցեսն անհրաժեշտ գիտակտիկական պիտույքներով ու ձեռնարկներով:

Այսպիս, լուսաժողկոմատի «Զորբորդ նամակում» Ի դասարանում բանավոր լեզվի ուսնակությունները զարգացնելու համար առաջարկվում են հետևյալը:

«Նման զրույցների թեմաները պետք ե լինեն նորեկներին մոտիկ, վերցրած լինեն նրանց միջավայրից, նրանց մոտիկ անցյալից: Նման թեմաներ են հանդիսանում յերեխաների սիրած խաղերը, նոր, հետաքրքիր յերեսույթի դիտելը (որինակ՝ տրակտորի հայտնիվելը կոլխոզում, ելեկտրականության անցկացումը, նոր բարձրախոսի դրումը, նոր շինարարությունը և նման ուրիշ.), այլ և իրենց՝ յերեխաների կյանքի գեղագիրը: Միևնույն նպատակի համար կարելի յերեխաների անհրաժեշտ նկարը, վորպեսզի այն դիտելու հետ միասունակութել անհրաժեշտ նկարը, վորպեսզի այն դիտելու հետ միասնական մոտիկ յերեխաներին մոտիկ թեմայի շուրջը զրույց: Նման թեմա կարող ե դառնալ որինակ՝ «Տրակտորը բերեցին»:

Տված գործը ունենալու համապատասխան ունակություն-
նպատակ ունի տալու բանավոր լեզվի համապատասխան ունակություն-
ներ նորեկներին: Լեզվական զրույցի նյութը վերցվում է կյանքի այլ
և այլ բնագավառներից: Մինչդեռ մյուս առարկաներից զրույցը կաղ-
մակերպվում է՝ կոնկրետ ծրագրային նյութը մշակելու, ըստ վորում
լեզուն ստանում և սպասարկող դեր:

Այդպիսի գեղքում զրույցի նյուր կարող է դառնալ կամ սվյալ տուար-
կայի ծրագրային նյուրի վորեվի խնդրի մշակումն անմիջապես կամ ըե-
գրույց՝ վոր կազմակերպվում է սվյալ նյուրի մշակման ուղղությամբ նա-
խորն վօրու աշխատանի կատարելուց հետ: Այն ժամանակ զրույցի նյուրթ
կարող է դառնալ:

ա) Ուսուցչի կողմից նյութի սիստեմատիկորեն բանավոր պատճեն:

բ) Դասագրքի, գրքի կամ թերթի վրա կատարած աշխատանք:

գ) Եքսկուրսիայի ժամանակ կատարած դիմու

Դ) Լարութեառը աշխատանքները

յի) Դիտած նկարը, քարտեզը:

զ) Աշակերտների կենսական փորձ

ա) Ամենից առաջ՝ անհրաժեշտ ե գլուխնար վոր զբույցը պետք ե նպաստի նյութի մեթոդոլոգիական ձիւտ մշակման։ Զբույցի կազմակերպման պրոցեսում

Այստեղ կարևոր ե ընդգծել, վոր ուստցիչը պետք ե ամբողջապես տիրապետի յուր դասավանդած առարկային ու տվյալ մշակվող նյութին: Նա ամեն մի նյութ մշակելիս պետք ե ըմբռնի, զգա ու վերապրի նրա սոցիալական իմաստը, իր ամբողջ աշխատանքի ընթացքում մանկավարժական պրոցեսին տա գաղափարական գունավորում, իր ապրումներով վոգենորի աշակերտներին սոցշինարարության պաթոսով, զարգացնի մանուկների մեջ ունակություններ՝ ձեռք բերած գիտելիքները հաջողությամբ ծառայեցնելու սոցշինարարության գործին:

Յեթե ուսուցիչը լիովին տիրապետում է նյութին, յեթե նա գաղափարապես կայուն է ու ամուր, մշակվող նյութի հաջողությունն ապահոված է մեծապես: Իսկ յեթե դրա հետ նա տիրապետում է մանկավարժական վարպետության, այդ գեպքում աշակերտների ուսումնադաստիարակչական գործը միանգամայն ապահովված կարելի յեւ համարել:

Այստեղից բղխում ե այն, վոր ուսուցիչը պետք ե հետեւի իր գաղափարական-քաղաքական և ընդհանուր-կրթական մակարդակի անընդհատ բարձրացման:

բ) Ցերկորութ պահանջը կայանում ե նրանում, վոր ուսուցիչը պետք ե հետապնդի, վորպեսզի մշակվող նյուորը աշակերտների կողմից յուրացվի սփստեմատիկ, ամուռ ու զիտակցական ձեվով: Ավելին, աշակերտները մշակ-վող նյութը վոչ միայն պիտի յուրացնեն, այլև դրան պիտի տիրապետեն ու դարձնեն գենք՝ սոցիալիստական շինարարության ակտիվ ձևով մաս-նակցելու: Նյութի մշակումը պետք ե նպասի՝ աշակերտի դիտվելու:

գ) Այդ պահանջներն իրազորձելու համար, ինչպես այլ մեթոդական սլրիումներ գործադրելիս, այնպես և զրույցի ժամանակ ուսուցիչը պետք է յելակետ ընդունի լենինի ուսմունքը, վորով հանճարեղ առաջնորդը նշում է իմացության ուղին.

«կենդանի հայեցումից դեպի վերացական մտածողություն և դրանից դեպի պրակտիկա,—այդպես և ճշմարտության իմացության՝ առարկայական իրականության իմացության դիալեկտիկ ուղին».¹

Բնչ ե նշանակում այդ:
Առ համախռմ ե, վոր ուսուսման պրօցեսը պետք է կազմակերպի:

այնպես, վոր աշակերտը տեսնի, լսի, զգա, պատկերացնի, պիտի, ճանաչի, տեսիլ ձեվով ըմբռնի ուսումնաս իրվող յերևույթը՝ կենդանի պրակտիկան: Այդ ուսումնասիրած պրակտիկան պետք է վերացական մտածողությամբ մշակի, ընդհանրացումներ կատարի, ու գիտակցական ձևով յուրացնի այն, տիրապետի նրան: Ապա այդ յուրացրածը պետք է կարողանա գործնականում վոչ միայն ստուգել, այլև հաջողությամբ այն ոգտագործել:

20. Ուսուցիչ նախականացնելու համար ստուցիչը պետք է յուրաքանչյուր գրայցի համար լուրջ կերպով պատրաստի:

ա) Նա պետք է ընտրի թեման ու պարզի այն մանակցներու. կավարժական նպատակը, վորի իրականացումը նա պիտի հետապնդի դասի ժամանակի:

բ) Անհրաժեշտ չափով պետք է նախորոք մշակի տվյալ նյութը և լավ տիրապետի նրան.

գ) Խնամքով կազմի զրույցի պլանը և վորոշի տրվելիք հարցերն ու դրանց բնույթը.

դ) Ուսուցիչը պետք է գիտենա, վոր զրույցը միայն չպիտի լինի ֆորմալ փաստեր տալու միջոց, այլ պիտի նպաստի, վոր աշակերտները կարողանան մշակվող նյութն իսկապես ըմբռնել, յուրացնել նրան տիրապետել՝ պարզելով յերևույթն իր գիտելիքի ամբողջությամբ, որինաշփություններով ու կապերով:

Ներքում մենք բերում ենք ֆորմալ ու չոր զրույցի մի պատկեր, վորը կարող է այդ տիպի զրույցի մասին վորոշ գաղափար տալ: «Պատմիր, թունչ կլիմա յե հյուսիսում»: — «Այնտեղ ցուրտ ե»: «Ի՞նչ բույսեր կան»: — «մամուռ, ծառալոռ»:

«Ի՞նչ ե կառուցված Դնեպրի վրա»: — «Դնեպրոստրոյը»: «Ի՞նչն ե հարուստ Յակուտիան»: — «Վոսկով»: «Ի՞նչպես են ստունում»: — «Ավագում»:¹

Այստեղ մենք ունենք փաստերի մեխանիկական ու ֆորմալ թվարկում, առանց դրանց ներքին կապն ու պատճառականությունը, ներքին որինաշփությունը հասկանալու: Նման գիտելիքներն աշակերտը շատ արագ կմոռանա: Նման զրույցը չի կարող նպաստել աշակերտի ինքուրույն դատելուն, յեզրակացություններ անելուն, չի զարգացնի նրա մտածողությունը: Նման ձևով ձեռք բերած գիտելիքը չի կարող նրա մտածողությունը: Այս ձևով ձեռք բերած գիտելիքը չի կարող գիտակցական լինել և ոժանդակել աշակերտի աշխարհահայցքի կերտությամբ: Այդ չի կարող դառնալ նաև նրա ձեռքին զինք՝ սոցինարարությանը մասնակցելու:

¹ «География в нач. школе», стр. 4.

Աշակերտի հիշողությունը պիտի հարստացնել աշխարհագրական բոլոր անհրաժեշտ փաստերով, դա վեռական պահանջ է, վոր ներկայումս դրվում է մեր դպրոցի առաջ: Դրա հետ միասին պետք է պայքարել մեխանիկական գասավանդման դեմ և կազմակերպել աշխարհագրության ուսուցումն այնպես, վոր աշակերտը յուրացրած փաստերը կարողանա իրար հետ կապել հասկանալ դրանց ներքին որինաշփությունները, կարողանա ընդհանրացումներ անել:

Նախ քան զրույցի անցկացնելն ուսուցիչը պետք է լավ ճանաչի դասարանի աշակերտներին, իմանա նրանց ընդհանուր մտավոր մակարդակը, ավյալ մշակվող հարցի մասին նրանց ունեցած փորձը, վոր անհրաժեշտ և թե զրույցի ընդհանուր պլանավորման համար, թե առանձին հարցերը կառուցելու և թե խմբի առանձին աշակերտներին զրույցին մասնակից անելու համար: Հակառակ դեպքում զրույցը կարող է աշակերտներին անմատչելի լինել, յեթե նյութը համեմատաբար բարդ ձևով և առաջադրվում: Յեկ ընդհակառակը՝ յեթե նյութը հեշտ և և միանգամայն ծանոթ, այդ գեպքում զրույցի մանկավարժական արժեքը կընկնի, վորովհետև այն միանգամայն անհետաքրքիր կդառնա աշակերտների համար:

21. Հարցերի կազմակերպման գործում կարեվորագույն կառուցման նախակուրյուն ունի հարցերի կառուցման մերուիկան: Ի՞նչ ձևով պետք է կառուցվեն հարցերը:

Հարցը պիտի կառուցել այնպես, վոր նա համապատասխանի մեր հետեւյալ պահանջներին:

ա) Հարցը պետք է առաջ բերի աշակերտի մտի ակտիվ ստեղծագործական, ինքնուրույն կերպով դիտելու, դատելու և յեզրակացություններ անելու: Այդ տեսակետից հարցը չպետք է պարունակի իր մեջ պատրաստի պատասխանը: Որինակ. «Այսոր յեղանակը տաք ե»: — «Այն, տաք ե»: «Տզայք, առյուծը զորեղ ե»: «Այն, զորեղ ե»: Այդպիսի հարցերն արդեն պատասխանն ել միաժամանակ թելադրում են. աշակերտներին անելու վոչինչ չի մնում այլս:

բ) Հարցը պետք է ձևակերպած լինի վորոշ և հետապնդի մեկ ու վորոշակի պատասխան: Անորոշ հարցերը շփոթում են աշակերտներին. հաճախ նման հարցին վոչ մի աշակերտ չի փորձում պատասխանել: Այսպես որինակ, բնագիտության դասին մեկ ուսուցիչ հարց է տալիս.

«Ի՞նչ բան է կավը, տղայք: Սննա, ասա»:

Սննան վեր է կենում ու չի պատասխանում:

Ուսուցիչ. — «Ի՞նչ է կավը, — մածուցիկ ե, կպչուն ե, ջուր չի անցկացնում»:

Հարցն անորոշ եր, դրա համար ել իր նպատակին չհասավ: Հարցը պետք եր ձևակերպել հետեւյալ ձևով: «Ի՞նչ հատկություններ ունի կավը»:

Բացի գրանից, կավի հատկություններն ավելի դիտողական ու հասկանալի դարձնելու համար անհրաժեշտ եր նրա վրա համապատասխան փորձեր կատարել և վոչ թե դոգմատիկ կերպով հայտնել աշակերտներին «ի գիտություն» կավի մածուցիկ և այլ հատկությունների մասին:

գ) Հարցը պետք է կառուցվի ու դրվի այնպես, վոր նրա մեջ պարունակվող նոր ելեմենտն առակերտեցների զիտեցածի նետ վորու թերեւով կապվի, նոր գիտելիքն արդեն յեղած գիտելիքների վրա հիմնվի: Որինակ, յեթե աշակերտները գաղափար չունեն գետափի մասին, անմտություն կլիներ հարց տալ, թե՝ «Դոնի աջ ափը թե՞ք ե, թե՞ հարթ»:

դ) Յերբեք չի հանձնարարվում խեղարյուրված հարց տալ, կամ հարց տալ՝ պատասխանը խեղարյուրելու նպատակով (որինակ՝ «Զինաստանը վնր յերկրի մայրաքաղաքն ե»):

յ) Պարզ յեկ բարդ հարցեր տալը կախված է նրանից, թե վոր դասարանումն ե մշակվում նյութը, ի՞նչ բնույթ ունի այն և այլն: Վորքան դասարանը բարձր ե, աշակերտների մտավոր մակարդակը բարձր, այնքան նրանց միտքը պետք է վարդվի ավելի բարդ և վերացական դատողությունների՝ կյանքի իրական յերևույթների որինաչափությունը հասկանալու: Յերբ տարրական դպրոցի 1-ին դասարանի աշակերտներին մենք սկզբում պիտի տանք մի հարցանի թվարանական բանագործ վարժություն՝ 3—4 դասարանների աշակերտներին կարող ենք տալ յերկարցանի, յեռարցանի վարժություններ:

զ) Հարցը պետք է լինի լեզվական-եւրականական տեսակից նիւթ կառուցված, սեղմ, առանց նյուրին չիւրաբերող ավելորդ բառերի ու արտահայտությունների:

Որինակ.—«Ասացե՛ք խնդրեմ, կարո՞ղ եք ինձ պատասխանել, թե ինչ ե նեանակում վտակ»: Հարցը լի յե ավելորդաբանություններով, վոր թուլացնում ե նրա (հարցի) մանկավարժական իմաստը: Մինչդեռ հարցի միայն վերջին մասն ե («ի՞նչ ե նշանակում վտակ») գերաբերում նյութին: Հարցի իմաստին անմիջականորեն չվերաբերող բառերի և արտահայտությունների գործադրումը կարող ե լինել միայն այն գեպքում, յեթե դրանք նպաստում են կազմակերպելու ուսուցման պրոցեսը: Որինակ, «Հապա, յերեխաներ, ուշադրությամբ լսեցեք այս հարցը և աշխատեցեք ճիշտ պատասխանել...» և այլն:

ե) Հարցը պետք է տալ ամբողջ խմբին, բոլորին գրավել ակտիվ՝ աշխատանքի, ապա մեկին ու մյուսին առաջարկել պատասխանելու: Յեկ վոչ միայն այն գեպքում, յերբ նոր նյութ ե մշակվում, այլ և այն ժամանակ, յերբ ուսուցիչն ուզում ե ստուգել, թե այս կամ այն աշակերտը մշակած նյութն ինչպես ե յուրացըել, վորովհետև հաշվառումը պետք ե միաժամանակ նպաստի նյութի յուրացման, ամբապընդան:

ը) Հարցը պետք է տալ հանգիս, առանց շապելու, լինգֆելով զիսավոր բառերը յեկ աշակերտելուն մի բանի վարկյան ժամանակ պիտի տալ՝ մտածելու, կազմակերպելու իրենց միտքն ու ձեվակերպելու պատասխանը:

Կարենվոր նշանակություն ունի նայել հարցի պատասխանը:

Պետք ե, արդյոք, վոր աշակերտը լրիվ պատասխան տա. պատասխանն անպայման պետք ե լինի հարցի բառերով շարադրված: Այդ մասին մեր մեթոդական տեսությունը տալիս է համապատասխան դրույթներ: Այսպես, լեղվի ուսուցման մասին մենք ծրագրերում կարդում ենք, վոր պետք ե աշակերտի մեջ զարգացնել ունակություն՝ «գրված հարցին պատասխանել կարեն, բայց լրիվ նախադասություններով՝ կապված շրջապատի իրականության հետ (մանուկների կյանքի, նրանց աշխատանքի, մեծահասակների աշխատանքի, դպրոցի, բնությանը, կենցաղի և այլն):

ա) Պատասխանել «կարճ ու լրիվ նախադասություններով»: Այդ ունակությունն աշակերտների մոտ պետք ե զարգացնել տևական վարժությունների միջոցով: Հենց առաջին խոկ դպրոց մտնելու որից աշակերտից չի կարելի պահանջել «կարճ ու լրիվ նախադասություններով» պատասխանել լրված հարցերին:

Ուսուցիչը պետք է տևական և ամենորյա աշխատանք տանի, աշակերտներին վարժեցնելու կարճ և լրիվ նախադասություններով հարցերին պատասխանելու: Դա հաջողվում ե մանավանդ այն ժամանակ, յերբ ուսուցիչը զրույցի ընթացքում դնում ե մի շարք հարցեր, վորոնց պատասխանն աշակերտը ձեւակերպում ե վորպես փոքրիկ պատմվածք: Նման աշխատանք անհրաժեշտ է կատարել մանավանդ լեզվի դասերին: Մենք բերում են կուսակցությունը 4-րդ նամակից մի հատված, ուր համոզեցուցիչ կերպով այդ ցույց ե տրվում:

«Լրիվ պատասխաններին վարժեցնելու ամենահարմար պրիմեներից մեկը հետեւյալն ե. ուսուցիչն ասում է յուր պատասխի գրացակցին. «Հապա, պատմիր այժմ, թե դու ի՞նչպես պատրաստվեցիր դպրոց գալ: Ասա, զու յերբ սկսեցիր պատրաստվել դպրոց գալու և նախորդը ումհետ պայմանավորվեցիր միասին դպրոց գալու: Սկսիր պատմել այսպես. «յես սկսեցի պատրաստվել դպրոց»... Աշակերտի համար դժվար չե հիշել առաջադրած յերկու հարցերը, վոր միանում են իրար հետ: Նրան հուշվում է կապակցած պատմության սկիզբը, այսինքն՝ յերկու դրված հարցերի լրիվ պատասխանը: Աշակերտից այդ պայմաններում կարելի յես սպասել մոտավորապես այսպիսի պատասխան. «Յես վաղուց եյի սկսել պատրաստվել դպրոց գալու: Շարունակ հարցնում եյի մորս, շնուր պիտի գնալ դպրոց: Յես նախորդը Միքայելի հետ պայմանավորվել եյի՝ միասին գալ դպրոց»:

Նման ձեռու ժամանակի ընթացքում աշակերտը վարժվում է լրիվ պատասխաններ տալ: Յերբ ունակությունն անհրաժեշտ չափով

ամբացած ե, աշակերտներին որինակների վրա գործնականորեն բացատրվում ե, թե ինչպես պետք ե լրիվ պատասխաններ տալ Այնուհետև անհրաժեշտ դեպքում ուսուցիչը հիշեցնում է աշակերտներին «տալ լրիվ պատասխան»:

Պետք ե զիտենալ, վոր որինակ, թվաբանությունից, կարող ե տըրվել նաև կարձ պատասխան, մանավանդ բանավոր վարժությունների ժամանակ. որինակ՝ աղյուսակը սովորելիս. «Հինգ անգամ յոթ քանի՞ս կանի».—«Յերեսուն և հինգ»:

Պատասխանը բնական ե և լրիվ: Այստեղից պարզ ե, վոր պատասխանի կարձ կամ ընդարձակ լինելը սերտ ու անխղելի ձեռվ կապված է նյութի բովանդակության հետ, նրա բնույթի հետ, և վերացական ձեռվ այս կամ այն գեղատոմում չի կարելի առաջարկել:

Բ) Աշակերտը պետք է վորու չափով ազատ լինի հարցի պատասխանը. ձեռվակերպելու գործում: Զպիտի պահանջել, վոր հարցն անպայման այն բառերով ձևակերպվի, ինչ բառերով ուսուցիչն է ուզում: Բավական ե, վոր մտքի և լեզվական տեսակետից պատասխանը ճիշտ ե:

Գ) Հարցի պատասխանը յուրաքանչյուր աշակերտ նույն արագությամբ չի կարող տալ. կան այնպիսիները, վորոնք դանդաղ են մտածում: Անհրաժեշտ և հաշվի առնել աշակերտի անհատական ուսակություններն ու առանձնահատկությունները:

Դ) Յեթե աշակերտն սկսում է սխալ ձևակերպել ճիշտ միտքը, պետք ե ուսուցիչն ոգնի նրան, լեզվական տեսակետից միտքը հետև ձեռվակերպելու: Ուսուցիչը ղեկավարող դեր պիտի ունենա ինչպիս հարցերը տալիս, նույնպես նրանց պատասխանները ձևակերպելիս: Իսկ յեթե աշակերտն սկսում է և մտքի տեսակետից սխալ պատասխանել, այդ դեպքում չըպետք ե կոպիտ նկատողությամբ նրան ընդհատել, այլ հանդիսատ կերպով առաջարկել մտածելու: Յեթե ուսուցիչը կարծում է, վոր լրացուցիչը հարցերով կարող է ոգնել աշակերտին հասկանալ հարցի հիմնական իմաստն ու ճիշտ պատասխաննել, պետք ե այդ դեպքում նոր հարցով կամ դիտողությամբ նրան ոգնի: Իսկ յեթե համոզվում է, վոր աշակերտը դրանից հետո ևս ճիշտ չի պատասխանելու, այն ժամանակ նա պետք ե հարցն ուրիշին ուղղի:

Զրույցն ընթանում է վորու ետակերպություն:

23. Զրույցի ետակերպությունը ուսուցիչը պարտավոր է ինչպիսերեն ու վոր ե խնամքով մշակել դասի պլանն ու պարզել թե ինչպիսի հարցեր ե տալու և վնր աշակերտներին: Նա պետք ե լավ պատերազմի դասի նպատակն յել նրա առողջապահը: Առանց դասի ընթացքի պարզ պատերազման և առանց

¹ Տ գյալ գեպը մենք վերցնում ենք այնպիսի զրույց, վորի միջոցով ուսուցիչը նոր նյութ է մշակում:

նրա մանկավարժական նպատակը պարզելու՝ մշակվող դասն իր արժեքը կկորցնի:

Յեթե ուսուցիչն արդեն պարզել ե զրույցի մանկավարժական նպատակն ու պլանը, միայն այն ժամանակ նա պիտի սկսի մշակել Զրույցը պետք ե սկսել՝ կարձ կերպով կրկնելով անցած նյութը և նորը կապելով անցածի հետ: Ապա անհրաժեշտ ե աշակերտներին մատչելի կարձ ու պարզ ձեռվ ծեվակերպել մշակվող ուսուցման հյուրի թեման ու դասի նպատակը:

Այնուհետև ուսուցիչն սկսում է մշակել նյութը զրույցի միջացով՝ հետապնդելով դասի իրազործումը և անընդհատ ղեկավարելով խումբը: Նա հետեւում է, վոր դասի նյութի մշակումը գնա պլանով, չշեղվի հիմնական գծից: Զրույցի ընթացքում ուսուցիչը պետք ե չեղաքացնի դասի ընթացքը խանգարող բոլոր հանգամանքները, ինչպիսին են մանավանդ աշակերտների կողմից տրված նյութին չվերաբերող կողմնակի հարցերը:

Ուսուցիչը պետք ե մորիկիզացիայի յենթարկի աշակերտների ունեցած գիտելիքներն ու փորձերը: Նա պետք ե ձգտի, վոր աշակերտների ամբողջ կոլեկտիվը ակտիվորեն զրույցին մասնակցի: Յերեք հանձնարարելի չե՝ հարցնել այս կամ այն հերթականությամբ (նստարանների կարգով), այբուբենական կարգով և այն), այլ անհրաժեշտ ե այնպես անել, վոր բոլոր աշակերտներն իրենց միտքն ակտիվ ստեղծագործական աշխատանքի դնեն՝ պահանջելով լուրջ աշխատանքային կարգապահություն: Զրույցը պիտի անցիացվի կենդանի, աշխոյժ:

Մշակման ընթացքում ուսուցիչը պետք ե վարպետորեն ղեկավարի խումբը, այս կամ այն լրացուչից բառով, «համբ» հարցով և այն ոգնի մեկին, կանգնեցնի, հանգստացնի խումբը, խրախուսի յերկորդին և այն:

Մշակվող նյութը նախորոք բաժանված պիտի լինի դիտակտիկորեն ամբողջություն կազմող պարզ, վորոշ ու բովանդակալից մասերի, վորոնք միասին, վորպես հաջորդական ետակետներ՝ կազմեն մեկ ամբողջություն: Այդ կապակցությամբ դասի ընթացքը միապաղապաղ չե, դասն ունենում է մի քանի հանգույցային մասեր. աշակերտների ուշադրությունն առանձնապես կենտրոնացվում է այդ հիմնական ողակների շուրջը: Ուսուցիչն առանձնապես պետք ե այդ մոմենտներն ընդգծի և տա լրիվ, բայց կարձ ձևավակերպությունը, ձգտելով, վոր աշակերտներն այդ հանգույցային մոմենտները յուրացնեն ամուռ ու գիտակցորեն: Զրույցի վերջում ուսուցիչը աշակերտների ակտիվ մասնակցությամբ (վորքան դասարանը բարձր է, այնքան մեծանում է աշակերտների մասնակցության աստիճանը) պիտի սկսած մատեմատիկացնի, ձևակերպի մշակած նյութն ու այդ յեղակացը ությունները սեղմ նախադասու-

թյուններով գրել տա աշակերտներին, յեթև այդ անհրաժեշտ ե համարում: Սուաջին ու յերկրորդ խմբերում այդ զբանցումը պետք ե կատարվի գրատախտակի վրա, վորից աշակերտները, պետք ե արտագրեն տեսարերում:

Բնական ե, վոր զրույցը թե՛ իր բնույրով յեվ թե՛ իր տեվողությամբ բոլորովին տարբեր պետք ե լինի դպրոցական տարբեր դասարաններում:

Վորքան դասարանը ցածր ե, այնքան այդ զրույցի տևողությունը պետք ե կարճ լինի: Առհասարակ բնավ հանձնարարելի չե մինչև իսկ բարձր դասարաններում զրույց անցկացնել մի ամբողջ դասի ընթացքում: Դա չափից գուրս հոգնեցնում ե յերեխաններին և իջեցնում դասի արժեքը: I-II դասարաններում զրույցը պիտի տևի 5—15 րոպե: III-IV դասարաններում զրույցը կարող ե մինչև 20—25 րոպե տևել: Բայց չպիտի մոռանալ, վոր զրույցն անողայման պետք ե հյուսվի աշխատանքի բազմազան ձևերի հետ, նպատակահարմար ձևով հերթափխվի ուսուցչի և աշակերտների ընթերցանության, զրույցի առանձին մոմենտները նկարելու, պատկերի, քարտեղի, և այլ ձեռնարկի ցուցադրման, այս, կամ այն ֆորմուլայի, ձևակերպված մտքի, զրույթի գրանցման, դրամատիզացիայի և աշխատանքի այլ պրիորների հետ:

24. Զրույցի թյուն, վոր անց ե կացրած հարց ու պատասխանի մի որի- ձևով՝ ոգտագործելով գիտողական պիտույքներ:

Թեման ե՝ «Ճամացույցը յեվ ժամանակի վիրուսումը ժամացույցը»: II դասարանի ծրագրում դրված ե այդ նյութը հետևյալ ձևով:

«Նախորդության ժամացույցի հետ: Փամանակի վիրուսումը ժամացույցը՝ մի ժամի նետությամբ: Ժամ, որ, ամիս, եանի որ ունի ամիսը, եանի ժամ ունի որը»:

Մեր բերած որինակում ժանոթություն ե արվում ժամանակի վորոշման մասին $\frac{1}{2}$ ժամկան ճշտությամբ:

Որինակը վերցված ե «Յա ոլուտեխնացէսկոյ ակոլոյ» հանդիսի՝ 1932 թվի № 2-3-ում զետեղված ընկ. Անանյեվի հողվածից՝ կրօնություններով:

Ընկ. Անանյեվը գրում ե.

«Դասի առաջին մասն ուղղված ե այն բանին, վոր աշակերտները ձեռք բերեն ժամացույցի և նրանով ժամանակը վորոշելու հիմնական պրիորների մասին զիտելիքներ: Մյուս մասն ուղղված ե առաջին ետապում յուրացրածի քննության, կանոններ հանելուն և գրանց ձևակերպելուն վերջին, յերբորդ մասը՝ ձեռք բերած գիտելիքների գործադրման»:

ԴԱՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ուսուցիչ: Այսոր մենք պիտի սովորենք ժամանակը հաշվել և ժամացույցի հետ վարվել: Վոր ժամանակ ե ծագում արել: Յերեք և մայր մտնում: Վորքան ժամանակ ե անցնում արեկի ծագելուց մինչև մայր մտնելը: Ի՞նչպես ե կոչվում այդ ժամանակամիջոցը:

Յերեկն ու գիշերն իրար հետ վերցրած՝ կոչվում ե յերկրային որ: Յերկրային որն ունի 24 ժամ: Բանի որ ունի ամիսը («30 որ»): Պատմեցեք այժմ ամեն ինչ վոր գիտեք յերկրային որվա, ցերեկվա, գիշերվա և ամսվա մասին: Ժամի քանիսին ե սկսում պարապմունքը զպրոցում: Վորքան ժամանակ ե տևում մինչև ճաշ: Բանի ժամ ե պարունակում որը:

Կրկնեցեք բոլորը, ինչ վոր իմացաք որվա մասերի վերաբերյալ:

Այժմ մենք պետք ե ժանոթանանք այն գործիքի հետ, վորով կարելի յե վորոշել ժամացույցի հետ: Դուք բոլորդ ել գիտեք ժամացույցի մասին: Սա ի՞նչպիսի ժամացույց ե (զըրպանի): Ո՞վ գիտե ուրիշ տեսակի ժամացույց: Ո՞վ կարող ե սրա մասին պատմել: Ժամացույցի այս մասը՝ թվացույցն ե (զսիքերձլատ) Այժմ յես ձեր ցույց կտամ մեծ թվացույց:

(Ուսուցիչը ցուցադրում է թվացույցի մի մեծ մողել):

Նկարագրեցեք այդ: Թվացույցի վրա նկարած ե շրջագիծ, վորը բաժանված ե 12 մասերի: Ամեն մի այդպիսի մասի տակ գրված ե թիվ: Վերկում, դեպի աջ՝ մի շարք թիվը են 1-ի հետ: Նրանց հաջորդում են 2, 3, 4 և այլն, մինչև 12. (Այդ 12 մասերից յուրաքանչյուրը բաժանվում ե 5 հավասար մասերի: Ընդամենը գրանց թիվը 60 ե: Թվացույցով շարժվում են յերկու սլաքներ և այլն):

2. Դասի յերկրորդ մասը նույնպես յերկու մոմենտ ունի. առաջնում հիմք ե ստեղծվում կանոնի, որինքի, ընդհանուր նշանակություն ունեցող դամանակը համար: Յերկրորդում՝ ձևակերպվում են հիշած ընդհանուր կանոնները: Այդ յերկու մոմենտներն ել իրար հաջորդում են թեմայի մշակման պրոցեսում կատարվող հաշվի համեմատ, վոր արվում ե ամբողջ թվերով, կիսաժամերով:

Նայեցեք այժմ ուշագրությամբ, թե ինչպես են դրված սլաքները և ինչպես են դրանք շարժվում: Դնենք յերկու սլաքներն ել 12-ի վրա: Յերեք յերկու սլաքներն ել կանգնած են ահա այսպես՝ դա նշանակում ե, վոր ժամի ուղիղ 12-ի: Ուշագրություն դարձեք, թե ինչպես են հետո շարժվում սլաքները: Յեթե սլաքները կանգ-

նած են ահա այսպես՝ ժամ 1 եւ 12-ից մինչև մեկ անցնում եւ մեկ ժամ։ Նայեցեք սլաքների շարժումն այժմ։ Այժմ ժամացույցը ժամի քանիսն եւ ցույց տալիս (ժամի 2, 2, 4 և այլն)։ Շարունակվում եւ սլաքների տեղափոխումը։

Թող սլաքները կանգնեն այսպես, վոր ժամացույցը ցույց տա ուղիղ ժամի 12, 1, 2 և այլն։ Այդ ի՞նչպես պիտի լինի, Ուրեմն բնչ ձևով ենք իմանում լրիվ ժամերը։ (Վարժությունը շարունակվում է, մինչեւ լավ յուրացնեն ժամանակի հաշիվը լրիվ ժամերով)։

Նայեցեք՝ յերկու սլաքներն եւ գտնվում են 12-ի վրա։ Եռից նայեցեք սլաքների շարժման (մեծ սլաքը գտնվում եւ 6-ի վրա։ Փոքրը՝ 12-ի և 1-ի միջև)։ Յեթե սլաքներն այսպես գտնվեն, դա կնշանակե տասներկուս և կեսն եւ։ Յեթե սլաքներն այսպես գըտնվեն, ժամի մեկ և կեսը կլինի։ Վորքան ժամանակ և անցնում տասնյերկուս և կեսից մինչև մեկ և կեսը։ 12-ից մինչև մեկ և կեսը։ (Շարունակվում եւ սլաքների տեղափոխումը ժամերի ու կես ժամերի բաժանումների վրա)։ Ի՞նչպես են սլաքները շարժվում, յեթե ցույց են տալիս կես ժամը։ Ի՞նչպես ենք իմանում կես ժամը։ Կանոն։ Վարժություններ։

3. Դասի յերրորդ մոմենտը՝ գործադրումը։

Յերեխաները յուրացրած գիտելիքները գործադրում են։ Նրանք ժամացույցի վրա կատարում են մի շարք հաշիվներ։

Փոքրիկ սլաքը կանգնած է 1-ի վրա, 5, 8, 9, 11, 4 և այլն, մեծը՝ 12։ Ժամի քանիսն եւ այդ գեպքում։ Ի՞նչպես պիտի կանգնեն սլաքները, յերբ ժամացույցը ցույց եւ տալիս ժամի ուղիղ 7, 9, 6։ Իսկ յեթե փոքրիկ սլաքը կանգնում է 5 և 6 ժամերի մեջտեղ, իսկ մեծը 6 վրա՝ ժամի քանիսն եւ այդ գեպքում։ Իսկ ինչպես պիտի սլաքները կանգնեն, յերբ ժամացույցը ցույց եւ տալիս, 2^{1/2}, 9^{1/2}, 11^{1/2}։

Վարժությունը շարունակվում է, մինչեւ վոր աշակերտները լիովին տիրապետում են հաշիվել ժամացույցով։ Կես ժամվա ձբշտությամբ։

Թվացույցի նկարելը՝ սլաքների զանազան դրությամբ։

«Դասի բերած նկարագրությունից մենք տեսնում ենք, — շարունակում ենք։ Անանյեվը՝ հարցերի վարպետորեն ոգտագործում։ Հարցերը կոնկրետ ու պարզ են, ստույգ են, խիստ հետեղական ու սիստեմատիկ։ Նրանց մեջ վոչինչ ավելորդ չկա, պարզ են ու հասկանալի։ Դրանք բոլորն եւ գրգռում են աշակերտների միտքը։ Վերջինների ուշադրությունը չի թուլանում։ Հարցերը հետո բերում են կանոնների վորոշակի ձեւակերպման։

Կարելի յեւ, իհարկե, նշել դասի վորոշ չորությունը, հարցերի մանրակրկիտությունը, վոր կարող եւ հոգնեցնել աշակերտներին, թուլացնել նրանց հետաքրքրությունը գեպի դասը։ Բայց չի կարելի կասկածել, վոր դասից աշակերտները դուրս կդան՝ լիովին տիրապետած դասի թեմային և բովանդակությանը։ Այդ բանում հսկայական դեր խաղաց հարցերի ոգտագործման արվեստը»։

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԵՐՆ ԵՔՍԿՈՒՐՍԻՑՆ ՏԵՐՐԱԿԵՐՆ ԴԳԲՈՅՑՈՒՄ

25. ԵԽՈՒՐԵ- Համկոմկուսի (թ) ԿԿ 1932 թվի ոգոսասի 25-ի գո-
ԱՓանակ- րոշման մեջ մենք կարդում ենք հետևյալը. գործադրել
Անդ մեր դրա- «զանազան ձեր փորձերի, պիտույքների ու գործիք-
րոցում։ ների ցուցադրում, եխակուսիաներ (դեպի գործարան,
բանգարան, դաս, անտառ յեվ ուրիշ)» (Ընդգծումը մերն ե. Զ.)։

Վերջապ ե այդ դիրեկտիվը կատարվում մեր դպրոցներում։
Ահա թե ինչ ե գրում ուսուցչությանն ուղղած իր կոչի մեջ ընկեր Բուրնովը եքսկուրսիայի մասին։

«Այդ պրիումը մինչև այժմ թույլ ե գործադրվում մեր դպրոցում։ Դպրոցները շրջելիս հաճախ կարելի յեւ տեսնել թե ինչպես ուսուցիչը չի տիրապետում անհրաժեշտ ունակության՝ ոգտագործելու գործարանը, թանգարանը, բնությունը և այլն, վորպեսզի առարկայի դասավանդումը դարձնի դիտողական և դրանով ոժան- դակի աշակերտների կողմից «գիտությունների հիմունքների» վոչ թե ձեական, այլ իրական ու խոր յուրացման։ Իսկ այնաեղ, ուր այդ եքսկուրսիաները կազմակերպվում են շատ գեպքերում զբանք անհրաժեշտ չափով չեն նախապատրաստվում, թույլ՝ կամ համարյա բոլորվին չեն կազմում դասավանդվող առարկայի հետ, վորի շը- նորհիկ և կրում են մակերեսային, ձեական ու կազյոննի բնույթ»¹։ Այդպես ե առաջմ մեր դպրոցական իրականությունը։ Մինչեռ եքսկուրսիայի մանկավարժական նշանակությունը հըսկա- յական եւ։

Եքսկուրսիայի միջոցով աշակերտներն անմիջականորեն ուսումնա- սիրում են կյանքի կոնկրետ յերեսույթը կամ իրը. իրենց բնական գը- րությամբ, իրենց կապերով այլ յերեսույթների հետ, իրենց որինաշա- փություններով։ Նման ուսումնասիրությունն ունի այն առավելու- թյունը, վոր յերեխան յերեսույթն ուսումնասիրելու համար զործ և դնում իր բազմազան զգայարանքները։ Ուսումնասիրվող յերեսույթը և իրը դառնում են դիտողական, ապագորիչ, հեշտությամբ աշակերտի կող-

¹ Բուրնով. «Այժմ գործը ձեզ ե մնում, ընկեր ուսուցիչներ և դպրոցական աշխա- տողներ» ՅԿՌ, 1933 թ. № 211.

մից յուղացվում են ու խորը նստում նրա հիշողության մեջ: Մյուս կողմից այդ մեթոդական ձևը հնարավորություն ե ընձեռում ամբողջական պատկերացում ձեռք բերելու ուսումնասիրվող յերեւյթի մասին, վորն իր հերթին ունի խոշոր զարգացողական նշանակություն:

Յելակեա ընդունելով այդ բոլորը և կենտկոմի վորոշակի դիրեկտիվը եքսկուրսիան ոգտագործելու վրապես մեթոդական լավագույն պրեսներից մեկը, յուրաքանչյուր դպրոց ամեն մի առարկայից, ուսումնա-արտադրական պլանը կազմելիս պետք ե վորոշի՝ թե տվյալ առարկայի վնար թեմաների վնար խնդիրները մշակելու համար անհրաժեշտ և հնարավոր ե եքսկուրսիան ոգտագործել: Այդ եքսկուրսիաների ցուցակը նախորոք կազմելիս պետք ե հաշվի առնել նյութի բնույթը, աշակերտների տարիքային առանձնահատկություններն ու մտավոր կարողություններն և այն, թե եքսկուրսիաների ինչպիսի որյականեր կան տվյալ դպրոցի միջավայրում:

26. Ուսումնական երաների սահմանը:
ա) Նա կարող ե յելակեա դառնալ ծրագրային տվյալների տարբեր բնույթը
յալ նյութի մշակման համար. այդ դեպքում եքսկուրսիան պետք ե կազմակերպվի տվյալ թեմայի (կամ խնդրի) մշակման սկզբում:

բ) Եքսկուրսիան կարող ե կազմակերպվել նյութի մշակման վերջում, վորապես նյութը խորացնելու, լրացնելու և ամրապնդելու, մի միջոց:

գ) Վերջապես եքսկուրսիան կարող ե այլ մեթոդական պրիորների հետ հյուսված անցկացվել նյութի (թեմայի) մշակման ընթացքում:

Յեթե նյութի մշակման հիմնական պրիոր գտանում ե եքսկուրսիան, այն ժամանակ նա ստանում է հանգույցային նշանակություն, այլ մեթոդական պրիորները՝ ընթերցանությունը, զրույցը, գրափոր վարժությունը, կուեկտիվաների կազմումը, լաբորատոր աշխատանքը և այլն՝ հյուսվում են եքսկուրսիայի հետ՝ վորապես ոժանդակ, լրացնող պրիորներ:

Այսպես, լրսողկոմատի հիմքերորդ մեթոդական նամակում հետևյալ որինակներն ե բերվում եքսկուրսիան նյութի մշակման սկզբում, միջում կամ վերջում անցկացնելու մասին. «Եքսկուրսիան կարող ե տեղի ունենալ վորևե առարկայի մշակվող թեմայի սկզբում, յերբ այն հետագա աշխատանքի համար անհրաժեշտ նյութ ե տալիս: Որինակ, ուսուցման առաջին տարում «Աշուն» թեմայի կապակցությամբ (ընագիտության ծրագրից) նշվում ե եքսկուրսիա դեպի անտառ, պարտեզ, կամ այդի՝ աշնան բնության պատկերները դիտելու նպատակով (տերեւաթափի, ծառերի գունավորման և այլ յերևույթները): Այդ եքսկուրսիան պետք ե թեմայի աշխատանքի սկզբում կատարվի, վորովհետեւ այն կոնկրետ պատկերները ու նյութ ե տալիս գտարանում հետագա աշխատանքը:

Մյուս դեպքերում եքսկուրսիան նպատակահարմար ե դնել թեմայի մշակման միջում կամ վերջում, յերբ եքսկուրսիայի նպատակը հանդիսանում ե արդին ուրիշ ճանապարհներով ձեռք բերած գիտելիքների խորացումը, լրացնումն ու հարստացումը: Որինակ, մշակվում ե հասարակացիական բանվարեցիների ու գյուղացիների հեղափոխական պայքարը» թեման: Կուրսի պատմական մասը պետք ե տրվի իրար հետ հյուսված ցայտուն պատկերներով: Նյութին ցայտունություն, կենդանություն ու դիտողականություն կարող ե տալ և ուսուցչի պատմածը, և ընթերցած գեղարվեստական պատմվածքը, և՝ դասարան բերած գիտական նյութը, և՝ դիտած կինոնկարը: Սակայն նյութը ամենամեծ չափով կոնկրետացնելու համար լավագույն ոժանդակությունը կարող ե տալ եքսկուրսիան դեպի հեղափոխական թանգարանը:

Եքսկուրսիաները դեպի արտադրություն (պոլիտեխնիկական-աշխատանքային ուսուցման ծրագրում) պետք ե կատարվեն թեմայի մշակման վերջում, քանի վոր այս կամ այն մեքենայի կառուցվածքն ու աշխատանքը հասկանալու համար անհրաժեշտ և մեքենաների կազմության հետ նախորոք ծանոթանալ մոդելներով, գրանց գծագրությամբ ու նկարներով»:¹

Յուրաքանչյուր ուսումնական եքսքուրսիա ունենում ե յերեք հիմնական ետապ:

ա) Նախապատրաստական - կազմակերպչական աշխատանք:
բ) Եքսկուրսիայի ընթացքը՝ յերեւյթի, որյեկտի ուսումնասիրությունն ու համապատասխան նյութերի ժողովումը:
գ) Զերք բերած նյութի մշակումը յեղակացություններն ու դրածարությունը:

Ամենից առաջ ուսուցիչը պետք ե պարզի, թե որվագույն ուսումնական նյութը վերջափառ մանկավարժական արդյունք կտա, յեթե մշակվի եքսկուրսիայի միջոցով: Վերջինս պայմանավորվում ե նրանով, թե ուսումնական կազմակերպությունը որյեկտը վերջափառ տվյալներ ունի մշակվող աշխատանքը լինդից յուրացների համար, թե վերջափառ այն մասնիկի յերեխաների համար:

Յերբ արդեն եքսկուրսիայի նպատակն ու օրյեկտը վորոշված են ուսուցիչը նախորոք անպայման պիտի այցելի եքսկուրսիայի վայրը և բազմակողմանի ձևով ծանոթանա ուսումնասիրվող որյեկտի հետ: Այդ նախական ծանոթության ժամանակ ուսուցիչը պետք ե նշի այն բոլոր մոմենտները, վոր տվյալ կանգնի մշակման առաջարկությունը պատկերու և ուսումնասիրելու արժեքը են ներկայացնում: Նա լին պետք ե տեղն ու

¹ «Как организовать и проводить экскурсию в начальной школе», НКПН, с. 5.

տեղը վորոշի, թե ինչ ուղիյով պետք ե ընթանա եքսկուրսիան։ Այսուհետեւ կազմվում ե եքսկուրսիայի կոնկրետ պլանը։ Եքսկուրսիայի պլանը պետք ե պատկերացնի նրա հետևողական ընթացքն իր բրոր ետապներով։ Այդ իր հերթին սերտորեն կապված ե ուսումնասիրվող որյեկտի բնույթի հետ ու կախված է մշակվող թեմայից։ Պարզ ե, փոքրագիտական եքսկուրսիան գեպի դաշտ, պարտեզ, անտառ՝ այլ ընթացք պիտի ունենա։ Եքսկուրսիան գեպի ՄՏԿ, խորհանուեսություն, այս կամ այն գործարանը՝ այլ գեպի թանգարան՝ այլ, գեպի ակումք՝ այլ, և այլն։

Անհրաժեշտ ե գիտենալ, վոր եքսկուրսիան չպիտի կատարել «ընդհանրապես», վոր յուրաքանչյուր եքսկուրսիա կատարվում ե ծրագրային նյութի հատուկ թեման կամ խնդիրը մշակելու նպատակով։ ուրեմն և այն պիտի ունենա ամբողջապես ուսումնա-դաստիարակչական նշանակություն և վորոշակի թեմա։ Եքսկուրսիայի ընթացքում աշակերտները պիտի ձեռք բերեն այսինչ կամ այնինչ գիտելիքները և վոչ թե «թամաշա» անեն։ Ուսուցիչը պետք ե պահան այն հաշվով կազմի ու այնպես յուրացնի, վոր եքսկուրսիան մաքսիմալ չափով ծառայի զրված ուսումնա-դաստիարակչական նպատակներին։

Եքսկուրսիայի պլանավորման ժամանակ անհրաժեշտ ե կանխորոշել ու նշել թե ուսուցիչի դերը, վոր պիտի լինի գեկավարող ու պատասխանատու և թե այն, թե աշակերտներն ինչ ձևերով, ինչ պրիորներով պետք ե ուսումնասիրեն տվյալ յերկույթն եքսկուրսիայի վայրում։

Այդ պրիորները բազմազան են և կապված եքսկուրսիայի բնույթի հետ։ Որինակ, գետն ուսումնասիրելիս պիտի դիտել չափել գծել։ Եքսկուրսիան գեպի անտառ մի քանի տեսակի ամենատարածված գեղարույցների հետ ծանոթանալու համար՝ կապահանջի վորոնել այդ գեղարույցները, դիտել գրանք տեղն ու տեղը, ժողովել գրանց նմուշները, հետո դասարանում զանազան աշխատանք կատարել գրանց վրա և այլն։ Փոքր գաղրոցականները շատ հաճախ նայում են իրի, յերեսույթի վրա, բայց այն չեն տեսնում, կամ տեսնում են այլ պրիզմայով։ Ուսուցիչը նախորոք պիտի պարզի և աշակերտներին ցուցմունքներ տա այն մասին, թե նրանք ինչ լիվ ինչպիս պիտի դիտեն լիվ ուսումնասիրեն։ Նախ քան եքսկուրսիան սկսելը, պլանավորումից անմիջապես հետո ուսուցիչը պետք ե ծանոթացնի աշակերտներին եքսկուրսիայի հիմնական նպատակի ու պլանի հետո Աշակերտները պիտի վորոշակի գիտենան, թե ուր են գնալու, ինչու յեն գնալու, ինչպես պիտի գնան, տեղում ինչն և ինչպես պիտի ուսումնասիրեն, ինչ տվյալներ պիտի հավաքեն, թե վորը, վոր ժամին պիտի կատարվի այդ եքսկուրսիան, թե ամեն մի աշակերտ ինչ պիտույքներ պիտի ունենա իրա հետ և այլն։

Պետք ե, արդյոք, աշակերտներին տալ եքսկուրսիայի գրավոր պլանը։ Այդ կախված ե նրանից, թե վոր գասարանի հետ ե տարվում եքսկուրսիան։ Տարբական գպրոցի ցածր գասարանների աշակերտներին գրավոր պլան տալն աննպատակ է, մինչդեռ III և IV գասարանների աշակերտներին մի քանի կետից բազկացած գրավոր պլանը կոդնի ուսուցչի գեկավարությամբ ուսումնական այս կամ այն խնդիրը կատարելու և կվարժեցնի նրանց ընդհանրապես պլանով աշխատելու։

Ահա թե Մովկայի Սոկոնիցիկի շրջանի № 28 գպրոցի IV դասարանի աշակերտներին ուսուցիչն ինչ գրավոր առաջադրություն և տվել՝ գեպի բնություն եքսկուրսիա կատարելու համար։

«Նոյեմբերի 3. Նախապատրաստական աշխատանք՝ եքսկուրսիա կատարելու գեպի բնություն։

1. ին առաջադրություն ժողովել սերմեր և պտուղներ՝ կռատուկի, տատասկափշի կաղնու, թղկու, լորու, կեչու։

2-րդ առաջադրություն։ Հավաքել արմատներ՝ կռաբանջարի, հաճարի, վարսակի, սիղախոտի։

3-րդ առաջադրություն։ Հավաքել զանազան ձեր ցողունավոր բույսեր՝ հաճար, պատատուկ, զայլուկ, ստեպին, կռապանջար։

4-րդ առաջադրություն։ Հավաքել տարրեր մեծության ու ձեր տերևներ։¹

Այս նախապատրաստական աշխատանքից հետո կատարած եքսկուրսիան ավել և լավագույն արդյունքը (տես եջ 66)։

Յեթե եքսկուրսիան կազմակերպվում ե գեպի հեռավոր վայր, այդ գեպը պատճեն ել ավելի մեծ նշանակություն ունի կազմակերպչական նախապատրաստական աշխատանքը։ Պետք ե անհրաժեշտ ձևով յերեխաները հագնվեն. պետք ե հոգալ սննդի մասին և այլն։

Թե ինչ պիտույքներ պիտի վերցնել եքսկուրսիային, այդ կախված ե առաջին հերթին նրանից, թե ինչ նպատակով ե կատարվում եքսկուրսիան և ինչ բնույթ ունի եքսկուրսիայի որյեկտը։ Որ յեթե ուսումնասիրվելու յե գետը՝ անհրաժեշտ ե ունենալ պարան, կողմանույց, ցցեր, ժամացույց, վրա, խցան և այլն։

Հանքարանական եքսկուրսիայի համար պետք կլինի վերցնել հատուկ մուրճ, տոպրակ, կողմանացույց և այլն։ Սակայն ինչ բնույթ ել ունենա եքսկուրսիան, ամեն մի աշակերտ պետք ե անպայման զինված լինի տետրով ու մատիտով, վորոնք անհրաժեշտ են տեղում համապատասխան զիտողություններ, թվական հաշիվներ ու անհրաժեշտ գծագրություններ կատարելու։

Եքսկուրսիան, նայած պայմաններին՝ կարող ե կատարվել ամբողջ կատարանով՝ ուսումնասիրելու յերեսույթն ամեն կողմից։ Կարող ե և

¹ НКП. «Есіествоование в начальной школе».

բրիգադային ձևով կազմակերպվել։ Թե մեկ և թե մյուս դեպքում անհրաժեշտ ե վորոշել զիտելիքների այն մինիմումը, վոր եքսկուրսիային մասնակցող ամեն մի աշակերտ անպայման պիտի ձեռք բերի։ Բրիգադային ձևով կազմակերպելիս՝ գրանից զատ ամեն մի բրիգադի պետք ե համապատասխան առաջադրություն տրվի, վոր պիտի լինի պարզ, վորոշակի և մանուկների կարողություններին մատչելի։ Բրիգադների կաղմը պիտի նախորոք վորոշել և նշանակել պատասխանատու բրիգադիներ։

Եքսկուրսիան պիտի կազմակերպել այն հաշվով, վոր ուսումնական աշխատանքի նորմալ ընթացքը չխախտվի։ Հանձնարարվում է կազմակերպել կամ ուսումնական որվա սկզբում, կամ վերջում։ Յեթե եքսկուրսիային վերաբերող զասը դասացուցակով առաջինն ե, կարելի յե եքսկուրսիան՝ ^{1/2—1} ժամ առաջ սկսել, վորով եքսկուրսիան կտևի ^{1/2—2} ժամ։ Յեթե վերջին դասն ե՝ այդ դեպքում դասի 1 ժամի հետ ^{1/2—1} ժամ ավելացնելով՝ պիտի վերջացնել այն։ ձգտելով, վոր աշակերտների համար եքսկուրսիան հոգնեցուցիչ չլինի։

Եքսկուրսիայի ամբողջ ընթացքում ուսուցիչը պիտի հետևի աշակերտներին, վոր նրանք ապահով լինեն այս կամ այն վտանգից (գետը չենկնեն, մեքենայից չվնասվեն, թունավոր ոձերից, բռւյսերից պատվինեն և այլն)։ Ուսուցիչը այդ տեսակետից պատասխանատու յե ամեն մի աշակերտի համար։

Այդ բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարելուց հետո ուսուցիչը աշակերտների հետ մեկնում ե եքսկուրսիայի։

28. Եթուր. Եքսկուրսիան ընթանում է ուսուցչի անմիջական փայտի անց- զեկավարությամբ։ Ուսուցիչը պետք ե ուղղություն կացնելը տա աշակերտների ամբողջ աշխատանքին, հետապնդելով հասնել դրված մանկավարժական նպատակին։ Սակայն միաժամանակ ուսուցիչը չպիտի խեղդի աշակերտների ինքնուրույնությունն ու ակտիվությունը։ Բնդիհակառակը, նա պետք ե ոգնի աշակերտներին՝ մաքսիմալ չափով հետախուզական աշխատանք կատարել՝ դիտել ուսումնասիրել յերևույթը, պարզել ու հասկանալ նրա որինաչափությունները, կատարել ընդհանրացումներ ու վորոշ յեղակացություններ անել։ Ուսուցիչը կազմակերպում ե այդ անհրաժեշտ հարցերը դնելով, աշակերտների ուշադրությունն ուսումնասիրվող յերևույթի կամ առարկայի այս կամ այն կողմի վրա հրավիրելով, անհրաժեշտ լրացումներն անելով և այլն։ Հարց ու պատասխանը, աշակերտների կողմից յերեվույթի և իրերի ինքնուրույն դիտումն և ուսումնասիրությունը, ուսուցչի պատմելը՝ զուգորդվում, լրացնում են իրար։ Մանավանդ հասարակագիտական և պատմական խնդիրների լրացնումը և առարկայից և եքսկուրսիան), վորոնք անհրաժեշտ են նյութի անմիջական կամ հետապնդ ուսումնասիրության համար։

Փոխական եպիզոդները, հերոսների սխրագործությունները կամ մասսաների հեղափոխական շարժումները, դարձնելու այդ բոլորը հուզական, պատեկերագոր, ու տապալորիչ, վոր կապվելով ուսումնասիրվող նյութի հետ՝ լրիվ, ամբողջական ձևով կյուրացվի աշակերտների կողմից։ Նույնը պետք ե անել և սոցիալիստական հսկաների շինարարությունն ուսումնասիրելիս։

Պիտի նշել վոր եքսկուրսիայի բուն ընթացքը կապված լինելով մշակվող նյութի հետ՝ միաժամանակ պայմանավորվում է դրված մանկավարժական նպատակով։ Նայած թե եքսկուրսիան նպատակ ունի տալ նոր նյութեր, վոր պիտի ծառայեն թեմայի ծավալուն մշակման՝ թե գրա նպատակն ե նախորոք մշակված նյութը լրացնել դարձնել դիտողական ու ամրացնել այն։

Առաջին դեպքում աշակերտներից ավելի լարված ու դժվարին աշխատանք ե պահանջվում ուսուցչի ղեկավարությամբ յերևույթը դիտել, ուսումնասիրել պարզել նրա մասերի որինաչափությունները, ընդհանրացումներ անել և ուսումնասիրվող իրել, յերևույթի մասին ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ։ Միաժամանակ ուսուցչի կազմակերպող ու ղեկավարող դիրն այդպիսի ժամանակ ավելի յե մեծանում։ Յերկրորդ բնույթ ունեցող եքսկուրսիայի ժամանակ, յերևույթներն աշակերտների համար հեշտությամբ ըմբռնելի յեն։ Որինակ, յեթե զասարանում նկարի, գծագրության ու մոգելի վրա աշակերտները ծանոթացել են տվյալ մեքենայի (որ սերմազարիչ) կառուցվածքի ու աշխատանքի սկզբունքների հետ, եքսկուրսիայի վայրում նրանք հեշտությամբ կհասկանան այդ մեքենայի իրական կառուցվածքը, նրա մասերի միացման սկզբունքներն և աշխատանքը։ Աշակերտները տվյալ դեպքում պիտի ստուգեն ու պարզեն իսկական մեքենայի վրա իրենց ձեռք բերած տեսական գիտելիքները, վերջնական յեղակացություններ ու ընդհանրացումներ անեն, խորն ու տեկական դարձնեն իրանց ձեռք բերած գիտությունն այդ մեքենայի մասին։

Բնագիտական ու աշխարհագրական եքսկուրսիաների ժամանակ աշակերտները կատարում են մի շարք մոտորային աշխատանքներ՝ չափել փորել շոշափել իրել, ժողովել բուսական, կենդանական, յերկրաբանական և այլ բնույթ կրող նմուշներ (նայած ինչ առարկայից և եքսկուրսիան), վորոնք անհրաժեշտ են նյութի անմիջական կամ հետապնդ ուսումնասիրության համար։

Յեթե առաջադրությունները տրված են բրիգադներին, ուսուցիչը պիտի հետևի, վոր յուրաքանչյուր բրիգադի աշխատանքն ընթանա անհրաժեշտ ուղղությամբ՝ լրիվ կատարելու տրված առաջադրությունները։

29. Եքսկուրսիայի յերրորդ հիմնական ետապն ե՝ ձեռք բերած արդյունքների մշակումն և հաշվառումը, վոր յունի ների նայած եքսկուրսիայի բնույթին, կարող ե կատարվել մշակումն ու դանազան ձևերով:

Այսպես, յեթե կազմակերպվել ե բնագիտական եքսկուրսիա գեղի անտառ, ծանոթանալու մի քանի ամենատարածված ծառերի ու թփուտների հետ (1 դաս.), դասարանում աշակերտները պիտի դասավորեն հավաքած տերեներն ու ճյուղերը. կարող են առանձին ծառերի տերեները նկարել տետրերում: Ուսուցիչը զրույցի միջոցով կլրացնի, կամրապնդի ձեռք բերած գիտելիքները. կընթերցի, վորև մանկական գրքից համապատասխան մատչելի հոդված կամ պատմվածք ծառերի տեսակների, նրանց կյանքի, նրանց նշանակության մասին: Բարձր դասարաններում նման աշխատանքին պիտի զուգորդի գրավորը. «Ի՞նչ տեսա և ինչ իմացա եքսկուրսիայում» կամ այլ հարմար թեմայով. կամ թե ամբողջ դասարանով կատարում են ձեռք բերած գիտելիքների մասին յեղբակացությունների գրանցում:

Ահա թե Մոսկվայի № 28 դպրոցի IV դասարանի աշակերտներն իրենց տեսրերում ինչպես են զրանցել գեղի բնույթյունը կատարած եքսկուրսիայի արդյունքները, (վորի պլանը մենք վերևում բերեցինք տես՝ եջ 63):

Սեպտ. 7-ին Լաբորատոր աշխատանք սերմերի յեվ պտուղների վրա:

1. Փետրիկալոր սերմեր.

Տատասկափուշ (նկար), կուաբանջար (նկար).

2. Թեկվալոր սերմեր

Հացենու (նկար), թխկու (նկար), լորու (նկար), կեչու (նկար):

3. Փեիկալոր յեվ կարքավոր սերմեր.

Մոշու (նկար), կուատուկի (նկար), յերկժանու (նկար):

4. Պտուղներ, հատապտուղներ.

Սնձենու (նկար), թանթրվենու (նկար), ընկուզի (նկար), խողակաղնու (նկար):

Յեղրակացություն

Թևագոլ սերմերը տարածվում են քամու ոգնությամբ: Կարթավոր սերմերը տարածվում են կենդանիների և մարդկանց միջոցով:

Հատապտուղներ՝ թուչուններին:¹

Այսպիսով, եքսկուրսիայի արդյունքները մշակելիս իրար հետ են զուգորդվում, հյուսվում մեթոդական զանազան պրիմիներ՝ լարորատոր աշխատանքը, զրույցը, ընթերցանությունը, նկարչությունն ու

գծագրությունը, զրանցումը և այլն, վորի ընթացքում աշակերտներն ընդհանրացումներ ու յեղբակացություններ են անում և ձեռք են բերում գործնական ունակություններ՝ կյանքում ոգտակործելու:

30. Եքսկուրսական նախակություններ՝ կյանքում ոգտակործելու:

Ներքեւ մենք բերում ենք եքսկուրսիաների որին այսի որի նակներ, վորոնք ցույց են տալիս եքսկուրսիայի նակներ կազմակերպման ու անցկացման մեթոդիկան:

III. Դասարանի աշակերտների նետախուզական եխկուրսիան գեղի գետը:

«1. Եխկուրսիայի նպատակը. Վորոշել գետի ընթացքը դպրոցին մոտիկ շրջանում: Զափել նրա լայնությունն ու խորությունը: Վորոշել հոսանքի արագությունն ու ջրի անկման ույժը:

2. Եխկուրսիայի անհրաժեշտ պիտույքները. պարան, կողմնացույց, ցցեր, քար, ժամացույց:

3. Եխկուրսիայի նախապատրաստական աշխատանքը. անց ե կացրած ներածական զրույց եքսկուրսիայի նպատակը պարզեցու: Հետո աշակերտները բաժանվել են բրիգադների, ամեն մի բրիգադին առվել ե առանձին առաջադրություն:

4. Եխկուրսիայի ընթացքը. Յերեխանների առաջին խմբակը պարանով չափում ե գետի լայնքը՝ վերածելով այն մետրերի: Յերկրորդ բրիգադը չափում ե գետի խորությունը յերեք տեղում՝ ափին մոտիկ, գետի կենտրոնում և մյուս ափին մոտիկ՝ ծայրին 1-2 կգ քար կապած պարանով: Յերերրդ բրիգադը ժամացույցով և լողացող իրով պարզում ե գետի հոսանքի արագությունը մի վարկյանում: Չորրորդ բրիգադը զրի յե առնում չափերը:

5. Եխկուրսիայի նյութերի մօակումը դասարանում. անց ե կացված եքսկուրսիայի մասին զրույց, պարզված ե գետի միջին խորությունը. վորոշված ե գետի կտրվածքի ծալվան ու ջրի անկման ուժը մի վարկյանում: Այսուհետև անց ե կացված զրանցում»:

Այս որինակն ունի իր մի շարք դրական կողմերը:

Ուսուցչի կողմից աշակերտների առաջ գրվել ե մանկավարժական կոնկրետ խնդիր: Եքսկուրսիայի հիմնական ընթացքը կառուցվել ե հաջող. ոգտակործվել ե աշակերտների ակտիվությունը՝ հետախուզելու եքսկուրսիայի որյեկտը. ոգտակործվել են նյութի մշակման բազմազան մեթոդական պրիմիներ: Աշակերտներն անշուշտ ձեռք են բերել զրված խնդիրների շուրջը վորոշակի գիտելիքներ և ունակություններ:

Ընդհանրապես պետք ե ինկատի ունենալ վոր բրիգադների ինքնուրույն աշխատանքն եքսկուրսիայի ընթացքում պիտի լինի ուսուցչի անմիջական ղեկավարությամբ: Աշակերտների ինքնուրույնության աստիճանը պետք ե պայմանավորված լինի մի կողմից մանկավարժական

¹ «Եղանակ գերազանց և «Էքսկուրսիա մեթոդական նամակից».

1 «Естествознание в начальной школе», стр. 26.

մեծ եփքեկտ ստանալու անհրաժեշտությամբ, մյուս կողմից աշակերտների ինքնուրույն աշխատանք կատարելու ուղղությամբ նախորոք ձեռք բերած ունակություններով:

Բ. ԵԹՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊԻ ԶԵՐՄԱՍՊՈԽԵՐԸ (ՊԱՐՀԱԿԻ)

(Ուսուցման յերրորդ տարվա համար)

Ուսուցման յերրորդ տարրում անց և կացվում դարնանային եքսկուրսիա «Բույսերի կյանքը» (բնագիտություն) թեմայի մշակման վերջում՝ վաղ զարգացող կուլտուրական բույսերի հետ ծանոթանալու համար («կանխահաս բանջարեղենները, աշնանացան հացարույսերը և նրանց տնտեսական նշանակությունը», ծրագիր, Ռուս. հրատ. եջ 40):

Եքսկուրսիայի նպատակն է, ծանոթացնել յերեխաներին զանազան բանջարեղենների աճեցման միջոցների և խոշոր սոցիալիստական տնտեսության այս ուղղությամբ կատարած ազրոտեխնիկական նվաճումների հետ:

Տվյալ եքսկուրսիայի ժամանակ ոգտագործվում ե արդեն մշակված «Ող» (հասկացողություն այրման մասին) թեմայի նյութը: Այս նյութի նախորոք ծանոթացումն անհրաժեշտ նախապայման է հանդիսանալում տվյալ եքսկուրսիան նշված ծավալով անցկացնելու համար:

Այս դեպքում եքսկուրսավայրը և ընտրվում խոշոր սոցիալիստական բուսաբուծական այնպիսի տնտեսություն (խորհունտեսություն), վորտեղ հնարավոր և ցույց տալ մի շարք ագրոտեխնիկական նվաճումներ: Կարելի յե ընտրել նաև այլ եքսկուրսավայրը: Նախորոք ծանոթանալով եքսկուրսավայրի հետ, ուսուցիչը հայտնաբերում է այն նյութը, վոր անհրաժեշտ և եքսկուրսիան նշված ծավալով անցկացնելու համար և կազմում ե եքսկուրսիայի նյութի մշակման հաջորդականության պահանջներին համապատասխան մարզրութը:

Կազմակերպելով խումբը՝ ուսուցիչն ընդգծում է աշխատանքի ընթացքում խիստ կարգապահության և աշակերտների դասավորման վորոշ կարգի պահպանման անհրաժեշտությունը ջերմածուները նայելիս, մշակույթները մոտիկից քննելիս, ինչպես նաև անհրաժեշտ զգուշությունը ապակած շրջանակների միջով անցնելիս և այլն:

Եխակուրսիայի անցկացումը

ծանապարհը դեպի խորհունտեսություն: Եքսկուրսիոն դիտություններն սկսվում են դեպի խորհունտեսություն տանող ծա-

նապարհից, վորտեղից բացվում ե տեսարան դեպի ջերմածության տնտեսությունը: Խումբը դիտում ե բուսաբուծական տնտեսության ընդհանուր պատկերը՝ ապակած շնչանակներով սպիտակին տվող չերմածուների յերկար զուգահեռ շարքերը: Այստեղ աշակերտների ուշագրությունը հրավիրվում է խոշոր սոցիալիստական տնտեսության վրա և առաջարկվում է ծանոթանալ նրա ագրոտեխնիկայի բնագավառում ունեցած նվաճումների հետ: Ամբողջ եքսկուրսիայի ընթացքում ուսուցիչը հարցերի միջոցով ուղղում է աշակերտների ուշագրությունը գեղի վորոշյալ որյեկտները: Այդ հարցերը չպետք է կրեն հուշելու բնույթի և չպետք է զրկեն յերեխաներին ինքնուրույնությունները, ինչպես զրված հարցերին պատասխանելու, նույնպես և յեղբակացություններ հանելու տեսակետից:

Ջերմածուների առաջին շարքը վաղահաս կաղամբի ածվատունկերն են: Տվյալ ջերմածուական տնտեսության մեծության վերաբերյալ ուսուցչի տվյալ հարցերին պատասխանելով, մանուկները յեղբակացություն են անում նրա մասին՝ վորպես խոշոր բուսաբուծական տնտեսության: Սրանից հետո խումբը մոտենում է ջերմածուների առաջին շարքին և գասավորվում է այնպես, վոր բարորն ել տեսնեն ջերմածուների մշակույթները:

Դիտողության առարկա յե հանդիսանում վաղահաս կաղամբի ածվատունկը, վոր արդեն բավական մեծացած ե: Կենտրոնացնելով աշակերտների ուշագրությունը ածվատունկերի մեծության վրա, դեկավարը հարց է տալիս, թե ի՞նչպես վաղ գարնանը, յերբ գեռ յեղանակը բավական չի տաքացել և առավտներն ու գիշերները ցրտեր են լինում՝ ջերմածուներում այդքան մեծացել են ածվատունկերը: Այն հարցը, թե «Ի՞նչ սիջոցով կարելի յե այդպես վաղ անցնել բանջարեղենները»՝ ուղղում է աշակերտների ուշագրությունը դեպի ջերմածուներ կազմակերպելու միտքը: Հնարավորություն չունենալով ցույց տալ ջերմածուի կորպածքը, դեկավարն ոգտագործում է մոտերքում գոնվող ազգի կույտը: Այդ մնացած աղբից յերեխաները յեղբակացնում են, վոր ջերմածուներում կա աղը, վոր վերեկից ծածկված է հողի շերտով: Իսկ նկատելով, վոր աղբի կույտի մեջ աաք ե, յերեխաները յեղբակացություն են անում այն մասին, թե վորն է ջերմածվի տաքության աղբյուրը, այսինքն նրանք հասկանում են, վոր ջերմածվում տաքությունը առաջ է գալիս նրա մեջ յեղած ազգի այրման հետևանքով: Նեկավարն ոգտագործում է այստեղ այն զիտելիքները, վոր յերեխաները ձեռք են բերել «Ող» թեմայի մշակման ժամանակ թթվածնի հատկության և «այրման» մասին.

¹ Արբենակը վերցրած ե՝ «Методы обуч. в начальной и средней школе» գրքից:

Շարունակելով պահել մանուկների ուշադրությունը ջերմածուների կազմակերպման խնդրի շուրջ՝ ուսուցիչը հարց է հարուցում շրջանակների նշանակության մասին (ինչու համար ջերմածուն ծածկվում է ապակած շրջանակներով): Մանուկներն առանց դժվարության կասեն, վոր այդ շրջանակները պահպանուեն ջերմածուները ցրտից, բաց թողնելով միենույն ժամանակ բույսերի կյանքի համար անհրաժեշտ լրւյար:

Սրանից հետո յերեխաների ուշադրությունը դարձվում է ջերմածվի մոտ գարսած հարդից հյուսած գորգերի վրա: Պարզվում է նրանց նշանակությունը ջերմածվային բույսերը գիշերվաց ցրտից պահպանելու խնդրում:

Ջերմածուների յերկրորդ շարքն ուշ հասնող կաղամբի ածվատունկերն են: Խումբն անցնում է դեպի ածվատունկերի այդ շարքը: Խումբը դասավորելու ժամանակ պահպանվում է վերևում հիշված կարգը:

Դիտվում է ուշ հասնող կաղամբի տեսակների մեծությունը: Ուշ հասնող տեսակների ածվատունկերի պակաս մեծությունը յերեխաներին յեղրակացնել ե տալիս, վոր սրանք ավելի ուշ են տնկված և ուշ ել զարգանում են: Սրանից հետո ընդհանուր յերրակացություն ե արվում կաղամբի տարրեր տեսակների ընտրության ձեռնտու լինելու մասին (կաղամբի վաղահաս և ուշ հասնող տեսակներ), վորովճետե դա հնարավորություն ե տալիս մեծ քանակությամբ և այնպիսի վորակի կաղամբ աճեցնել, վոր համարյա պատասխանում ե և կանուխ գործածելու, և ձեռնովա համար պահպանելու նպատակներին: Ջերմածուների յերրորդ շարքը զուգակցված (կօմբանորովահայե) մշակույթներն են: Կաղամբը դիտել վերջացնելուց հետո, ուսուցիչն առաջնորդում է յերեխաներին դեպի ջերմածվի Յ. Բ. Պ. շարքը՝ զուգակցված մշակույթները: Աշակերտներին առաջարկվում է վորոշել, թե ինչպիսի մշակույթներ են միացվում միենույն ջերմածվում: Նրանք գտնում են այստեղ վարունգ և սալատ, վարունգ և սամիթ: Կուծելով այն հարցը, թե վնար մշակույթներն ավելի վաղ են հասնում ու ժողովում աշակերտները գալիս են այն յեղրակացության, վոր միենույն ջերմածվում միացվում են այնպիսի մշակույթներ, վորոնք կարող են աճել առանց իրար խանգարելու (ջերմածվում յեղած ազատ տեղերը վարունգի զարգացման սկզբնական շրջանակում ոգտագործվում են ուրիշ մշակույթների համար, վորոնք մինչև վարունգի հասնելը արդեն ժողովվում են):

Յերեխաների համար հասկանակի յե դառնում է տարրեր մշակույթների միենույն ջերմածվում միացնելու իմաստը. գործե-

նմանողինակ կազմակերպման ժամանակ ջերմածուն ոգտագործվում է 100%-ով և հնարավորություն ե ստեղծվում ունենալ մեծ քանակությամբ վաղահաս բանջարեղենների:

Վաղահաս բանջարեղենների ստացումը նկատվում է վորպես ջերմածուական տնտեսության նվաճում:

Մշակույթների գիտումը վերջացնելուց հետո, ուսուցիչը յերեխաների ուշադրությունը հրավիրում է ջերմածվի բռնած տարածության վրա և հարց է հարուցում ջերմածուների սպասարկման համար անհրաժեշտ բանվորական ձեռքերի քանակության մասին: Մանուկների համար հասկանալի յե դառնում, վոր ջերմածուները բռնում են մեծ տարածություն և պահանջում են մեծ քանակությամբ բանվորական ձեռքեր: Ղեկավարն անցնում է մարշրուտի վերջին կետի դիտողությանը՝ ջերմոցին:

Զերմոցներ (տեղական): Նախ վորոշում է ջերմոցի տարածությունը՝ համեմատած ջերմածվի բռնած տարածության հետ (վորը մեծ է): Մանուկները յեղրակացնում են, վոր ջերմոցը բռնում է ավելի փոքր տարածություն: Ապա հարց է հարուցվում այն մասին, թե վորը բռնույթ է տեղափորվում ջերմոցի մեջ:

Ջերմոցի ապակյա կտուրի և պատերի միջով յերեխաները տեսնում են իրար վրա (հարկերով) դարսած բռնույթը: Յեղրակացություն ե արվում տարածության տնտեսության և փոքր տարածության վրա մեծ քանակությամբ բռնույթը տեղափորելու հնարավորության մասին: Վերջապես, հարց է առաջ գալիս ջերմոցի տաքության աղբյուրի մասին: Նկատելով ծխախողովակը, յերեխաները յեղրակացնում են, վոր ջերմոցը արհեստական ձեռվ տաքացվում է: Պարզվում է, վոր ջերմոցում բռնույթը կարող են ապրել ամբողջ տարին (վոր ջերմոցը հնարավորություն ե տալիս շուրջ տարին բանջարեղեններ ստանալու): Լուծվում է ջերմոցի համար անհրաժեշտ բանվորական ձեռքերի քանակի հարցը, համեմատած ջերմածուային տնտեսության հետ: Ընդհանուր յեղրակացություն ե արվում ջերմոցային տնտեսության առավելությունների մասին, համեմատած ջերմածուայինի հետ: Զերմոցային տնտեսությունն ընդգծվում է վորպես խոշոր սոցիալիստական տնտեսության նվաճում: Պարզվում է ջերմոցային տնտեսության նշանակությունը քաղաքների աշխատավորության սպասարկումը լավացնելու խընդրում:

Սրանով եքսկուրսիան վերջանում է: Հետագա աշխատանքների ընթացքում դպրոցում կարող են հարուցվել անցկացված եքսկուրսիայի հիմնական բաժիններին վերաբերող հարցեր: Նրանց պատասխանները կարող են տրվել ինչպիսի բանավոր, նույնպիս և գրավոր:

Եքսկուրսիայի ժամանակ ձեռք բերած գիտելիքները կարող են զործադրվել դպրոցական հողամասում աշխատելիս, մասնավորապես դպրոցական բանջարանոցի համար ածվատունկեր աճեցնելու փոքրիկ ջերմոց կազմակերպելիս:

Աշխատանքի դասերին կարելի յէ առաջարկել յերեխաներին պատրաստել ջերմածույի և ջերմոցի մոդելներ: Եքսկուրսիայից հետո լավ ե տեսածը նկարել, կազմել եքսկուրսիայի յուրաքանչյուր բաժնի հաշվետվությունը, կազմել մի շարք խնդիրներ ջերմացային տնտեսության ձեռնութվության շուրջը, հաշվել դպրոցական բանջարանոցի համար անհրաժեշտ ծառատունկերի քանակը և այլն:

4. ԼԵՐՈՒՏՈՐ ԱՅԽԵՑՄՆՔՆԵՐԸ ՏԱՐՐԸԿՐՆ ԴՊԲԱՑՈՒՄ

31. Լաբօւասոր աշխատանքների նշանակած աշխատանքների նկատմամբ հետաքայլ աշխատանքները առաջարկությունը առաջարկությունը ակադեմիական աշխատանքը և լաբորատոր պրիումը) մեխանիկորեն միացվել են իրար հետ, սատվել են որ վորակ՝ բացասական արժեք ունեցող: Այդ իսկ պատճառով Համկոմկուսի (ը) կենտրոնի իր 1932 թվի ոգոստոսի 28-ի վորոշման մեջ հրահանգեց, վերացնել «բըրիգադուլարորատոր» մեթոդի խեղաթյուրումներն և պայքարել մեկ մեթոդի ունիվերսալացման գեմ:

Նույն վորոշման մեջ կենտրոմը հանձնարարում ե.

«Լայնորեն գործադրելու»—«վորոշելի ցուցադրումն (ընդգծածն իմն ե. Զ.) և եքսկուրսիաներ (գեղի գործարան, թանգարան, դաշտ, անտառ և այլն): Հստ վորում ուսուցիչը պարտավոր ե գժվարությունների գեղագում, ամեն ձեռք ոգնել յերեխաներին նրանց ուսումական աշխատանքներում»:

Լաբորատոր աշխատանքներն ու փորձերի ցուցադրումը տարրական դպրոցում պիտի ոգտագործել գլխավորապես բնագիտությունից, պոլիտեխնիկական-աշխատանքային ուսուցման առարկայից և յերեխն մաթեմաթիկայի, հասարակագիտության և այլ առարկաների տարրեր նյութերը մշակելիս: Միջնակարգ դպրոցում լաբորատոր աշխատանքները մեծ տեղ են բռնում առանձնապես ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության ու պոլիտեխնիկական աշխատանքի բազմաթիվ խնդիրները մշակելիս: Լաբորատոր աշխատանքները, յերեկոյթների վրա կատարած գիտողություններն ու փորձերը (եքսպերիմենտներն) ունեն մի կողմից այն նշանակությունը, վոր աշակերտները ձեռք են բերում դրական գիտելիքներ տվյալ յերեկոյթի մասին, մյուս կողմից՝ այդ աշխատանքի

պրոցեսում աշակերտը ձեռք ե բերում ունակություններ ինքնուրսույն ձևով յերեկոյթը դիտելու, ճանաչելու նրա զարգացման որինաչափուրյաներն ու կապերը: Ուսումնական պրոցեսում այդ աշխատանքն ես կատարվում ե ուսուցչի մշտական ղեկավարությամբ: Նման մեթոդով կատարած աշխատանքը խոշորագույն նշանակություն ունի յերեխայի դիտելեկտիկա-մատերիալիստական աշխարհայցքը կերտելու գործում:

Լաբորատոր աշխատանքն ունի զանազան ձևեր:

ա) Աշակերտներին տրվում ե բնությունից անմիջապես վերցրած նյութեր (տերեկների, միջատների, բույսերի, հանքային նյութերի նմուշներ, կավ, ավազ, քարածուխ, նավթ, կիր և այլն), վորոնց վրա նրանք ուսուցչի տնմիջական ղեկավարությամբ ու ոգնուրյամբ կատարում են աշխատանք՝ դիտում են, համեմատում, չափում, դասավորում, ստուգում ու իմաստում են տվյալնյութի հատկություններն ու կապն այլ յերեկոյթների հետ և համապատասխան յերրակացություններ անում: Նման աշխատանքն ունի խոշոր մանկավարժական արժեք հետեւյալ պատճառներով. աշակերտներն այդ տիպի աշխատանքների ժամանակ հանդես են բերում մեծ հետաքրքրություն, ակտիվություն ու ինքնագործուներություն: Վարդգում են ինքնուրույն գիտել, ուսումնասիրել ընդհանրացումներ ու յեղրակացություններ անել: Իսկ նման աշխատանքը՝ լրացված ուսուցչի բանավոր խոսքով և գրքից ընթերցած հոդվածի նյութով՝ խոշոր չափով ոգնում ե յերեխաներին՝ ձեռք բերելու ամուր, խորն ու գիտակցված գիտելիքներ: Դրան ոգնում ե մանավանդ այն հանգամանքը, վոր այդ տիպի աշխատանքը չափազանց գիտողական և ու մատորային: Աշակերտն ուսումնասիրած նյութը և աշխատանքները աշխատանքները վորով ամբողջական:

բ) Լաբորատոր աշխատանքի յերկրորդ ձևն այն ե, յերբ աշակերտներն իրենք ուսուցչի ղեկավարությամբ կատարում են այս կամ այն փորձերը: Հստ վորում, յերեկոյթն ուսումնասիրվում ե վորոշ չափով արհետական ձևով ստեղծած պայմաններում: Որինակ, զանազան փորձերը տարրական դպրոցում ջրի տարրեր վիճակների փոխվելու վրա, ողի հատկությունների վրա, մաքմինների տաքությունից լայնանալու ու սղմկելու վրա և այլն: Այստեղ աշակերտները փորձի միջոցով գիտում են յերեկոյթն իր զարգացման ու փոփոխության որինաչափություններով, վորոշում են յերեկոյթի զարգացման պատճառական կապակցությունը, ընդհանրացումներ ու յեղրակացություններ անում և վարժվում են ձեռք բերած գիտելիքները կյանքում գործադրելու:

գ) Լաբորատոր աշխատանքի յերրորդ ձևն և ուսուցչի կողմից այս կամ այն փորձի ցուցադրումը: Ուսուցչին ինքն և փորձը կատարում ու ցուցադրում, յերբ այդ աշակերտների համար գժվար:

գ) Լաբորատոր աշխատանքը կարող ե կատարվել և տեսական ձևով՝ ցանած սերմերի աճման ընթացքն ուսումնասիրելով, դիտողություն կատարելով պարտիզում, բանջարանոցում կամ դաշտում տրված փորձերի վրա, միջատի (մոծակի, մեղամանձի, շերամի վորդի և այլն) կերպարանափոխությունն ու զարգացումն ուսումնասիրելով և այլն:

Լաբորատոր բնույթ կրող յուրաքանչյուր աշխատանք, պիտի զուգորդել ու հյուսել մեթոդական այլ և այլ պրիմիների հետ, ինչպիսին են՝ ուսուցչի պատմելը, զրույցը, դասագրքից կամ համապատասխան այլ գրքից անհրաժեշտ հոդվածի ընթերցումը, գծագրումը և այլն:

Յերեխաների յեղակացությունները, վոր արդյունք են արած դիտողությունների՝ պետք ե ձևակերպվեն ու տրվեն կարճ ու, լրիվ նախադասություններով, վորոնք պիտի անհրաժեշտ դեպքում զրանցվեն տեսրերում:

Լաբորատոր բնույթ ունեցող աշխատանքները շատ հաճախ եքսկուրսիայի անբաժան մասն են: Եքսկուրսիայի ընթացքում ձեռք բերած բնագիտական, պոլիտեխնիկական ու այլ նյութերը լաբորատոր աշխատանքի միջոցով պիտի մշակվեն (տես «Ուսումնական եքսկուրսիաներ» գլուխը), հավաքած նմուշները տեսակապորվեն, կազմվեն ժողովածուներ, հերթարիմներ և այլն (տերեկներից, խոտարույսներից, ծառապատղներից, մշակվող փայտի տեսակներից, հանքային տեսակներից, բղեններից և այլն):

Լաբորատոր աշխատանքները տարրական դպրոցում, (բարձր դասարաններում, նաև լաբորատորիայում, կարիքնետում) կարող են կազմակերպվել կամ ամբողջ դասարանի հետ, այսպես ասած թրոնտալ ձեռք կամ բրիգադներով կամ թե՝ անհատական ձեռք: Ամբողջ դասարանի հետ լաբորատոր աշխատանքն, ինչպես վերևում նշեցինք, կատարվում է փորձի ձեռքով, վոր կազմակերպվում ե ուսուցչի կողմից նրա դեկավարությամբ՝ անհատ աշակերտի կամ բրիգադի միջոցով:

Նյութի բնույթի կապակցությամբ և պիտույքների քանակի համատ փորձերն ու դիտողությունները կարելի յե կազմակերպել բրիգադներով. պայմանով, վոր ուսուցչի անմիջական դեկավարությամբ ապահովվի յուրաքանչյուր աշակերտի ակտիվ մասնակցությունն ու ծրագրային նյութի անպայման լրիվ մշակումը: Բրիգադային-կոլեկտիվ աշխատանքի ձևերը հաճախակի պիտի գործադրել, միշտ հաշվի տոնենով անհատական ու կոլեկտիվ աշխատանքի ճիշտ զուգորդումը: Պետք ե վարժեցնել աշակերտներին կոլեկտիվ խնդիրներ դնել, քննարկել յեղակացություններ անել:

Պետք ե միանգամ ևս նշել վոր բրիգադները կայուն ու պարտադիր չեն կարող լինել:

Լաբորատոր աշխատանքի կազմակերպման արժեքավոր ձևն ե նաև

աշակերտների անհատական ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցչի անմիջական դեկավարությամբ: Այդպիսի դեպքում խմբի բոլոր աշակերտները ստանում են միենույն առաջադրությունը, անհատական ձևով դիտում են փորձը կամ կատարում են բաժանած նյութերի վրա դիտողություններ, պետք յեղած դեպքում նրանք դիմում են ուսուցչի աջակցության, ուսումնասիրում են նյութերը, կամ յերկույթը և վորոշ յեղակացությունների անում: Կատարած դիտողությունների, փորձերի (եքսպերիմենտների) ժամանակ աշակերտները պետք ե տեսնեն յերեվույթի մեջ կատարվող քանակական և վորակական փոփոխությունները, կարողանան հասկանալ այդ փոփոխությունների պատճառականությունն ու կապը շրջապատի հետ: Բացի այդ՝ աշակերտները պիտի կարողանան տվյալ յերկույթի ուսումնասիրելիս աշակված գիտելիքները գործնականում ստուգել ու ոգտագործել: Դիտի տեսնեն նրա կապը սոցիալիստական շինարարության հետ (կամ, ավագը, բույսերի արեսատական աճեցումը, մետաղների հատկությունները, ոդի ու ջրի հատկությունները, շոգին և այլն ուսումնասիրելիս աշակերտները պետք ե պարզեն նաև զրանց նշանակությունը սոցշինարարության առողջապահում):

Բոլոր դեպքերում ել լաբորատոր աշխատանքի հետևանքները զերույցի միջոցով պետք ե մշակվեն, ճշտվեն, լրացվեն, կատարվեն ընդհանրացումներ, յեղակացություններ և համապատասխան ձևակերպումներով, անհրաժեշտ դեպքում՝ զրանցվեն:

Աշակերտները կատարած աշխատանքի ժամանակ կարող են նկարել գրեթե տեսրերում իրենց դիտողություններն ու յեղակացությունները:

Լաբորատոր աշխատանքները տարրական դպրոցում պիտի բավարարեն նետելիյալ նիմնական պահանջներին.

ա) Աշակերտները պիտի ունենան այդ աշխատանքների համար համապատասխան պատրաստություն և ունակություններ:

բ) Ուսուցիչն աշակերտների հետ նախորոք պիտի պատրաստած լինի կատարելիք փորձը կամ յերկույթն ու իրը դիտելու, ուսումնասիրելու համար անհրաժեշտ բոլոր պիտույքներն ու նյութերը: Ավելի լավ ե՝ ուսուցիչը դասից առաջ փորձն անի ստուգելու, թե ամեն ինչ կարգին ե ու պատրաստ, փորովհետև անհաջող փորձը չափազանց բացասական ազդեցություն ե թողնում աշակերտների վրա և չի տալիս անհրաժեշտ դիտելիքը:

Ուսուցիչը պետք ե փորձն այնպես կազմակերպի ու անցկացնի, վոր ամբողջ դասարանը կարողանա հետևել ու տեսնել նրա ամբողջ ընթացքը:

գ) Յեթե աշակերտները պիտի փորձը կատարեն ինքնուրույն ձևով (անհատական կամ բրիգադային), ուսուցիչը պետք ե նրանց վրացակել ու սպառիչ ձևով յուցմունքներ տա այդ ուղղությամբ:

գ) Հաբորատոր աշխատանքի ժամանակ նախապատրաստական աշխատանքից մինչև նրա յեղբափակումը ուսուցիչը պիտի դասարանը կազմակերպի, անընդհատ հետեւ ու զեղավարի, պետք յեղած գեղագում անհրաժեշտ ուղղությունը տա և ոգնի աշակերտներից ամեն մեկին:

33. Լաբորատոր աշխատանքին ու լաբորատոր աշխատելիքի միջնական աշխատանքին:

Առաջին որինակ. Յ ըդ գասարանի բնագիտության ծրագրի «Ոգտակար հանույթներ» թեման մշակելիս անհրաժեշտ ե ծանոթանալ ավագի ու կավի հատկությունների հետ:

Այդ հատկություններն են. ա) ավագի հատկային լինելը. ամեն մի ավագանատիկի ձևն ու մեծությունը, դրանց գույնն ու կարծրությունը, ջրում չլուծվելը: բ) Կավի փոշիացումը չոր ժամանակ, կարծրությունը, ջրի անհագ ծծումը, ջրում չլուծվելը, մածուցիկ լինելը:

Ահա թե Յերկրության մեթոդական բյուլետենում ինչպես և առաջարկվում այդ նյութը գասարանում մշակել.

Ավագի և կավի հետ կատարվելիք բոլոր աշխատանքները (գպարզում) շատ պարզ են, ուստի պետք ե այդ անպայման անցկացնել ամեն մի սեղանի վրա՝ լաբորատոր ձևով. Դասի համար պիտի պատրաստել լվացած ավագ սովորական, գեղին կավ, ափսեներ, փորձանոթներ, ապակու կտորներ, ջուր: Կարելի յե ընտրել աշխատանքի հետեւյալ ընթացքը: ա) Յերեխանները փորձում են սեղմել ափի մեջ չոր ավագը՝ նա թուփում ե (ավագի հատիկավոր լինելը): Դիտում են առանձին ավագանատիկի չափն ու մեծությունը (նշում են բաղմազանությունը): Մի պտղունց ավագ վերցնելով՝ սեղմում ու գծում են ապակու վրա՝ չանգուստ և ապակին (կարծրությունը): Ավագը ջրի հետ լցնում են փորձանոթի մեջ, խառնում. չի լուծվում: բ) Յերեխանները կավի կտորը խփում են սեղանին՝ ձայն ենանում ու չի թափվում (ամրությունը), արորում են մի կտոր չոր կավը, դարձնում փոշի (թափիլու հատկությունը): Չոր կավի կտորի վրա կաթեցնում են ջուր, ջրի կաթիլներն անմիջապես ծծվում են (ջրի անհագ ծըծելու հատկությունը): Կավի կտորը փորձանոթի մեջ են գցում ջրի հետ, խառնում. ջուրը պղառը վառ է, ապա կավը նստում է տակը (ջրում չլուծվելը): Ափսեններում կավից խմոր են շաղախում շինում են գնդակ (մածուցիկ լինելը):

Յերկրուգդ որինակ: Լաբորատոր աշխատանք պոլիտեխնիկական աշխատանքին ուսուցման ծրագրից¹:

¹ Մշակված զարդ բերված ե «Համալսարանական աշխատանքի աշխատանքին ուսուցման ծրագրից» (թաղվածքը վերցրել ենք «Անալիզ занятий в рабочей коммнате» գրքույթից)

Այս դասը ցույց ե տալիս, թե ինչպես ուսուցման բազմազան մեթոդական պրիորներ հյուսվում են իրար հետ: Այդ դասը լաբորատոր աշխատանքի մի հաջող որինակ ե, վորի վրա կարելի յե տեսնել հետեւյալ:

ա) Ուսուցչի ղեկավարող ղերի հետ շաղկապված աշակերտների մաքսիմալ ակտիվությունը:

բ) Աշակերտներին հետախուզական աշխատանքի ունակությունների պատվաստումը:

գ) Ուսումնական պիտույքի հաջող ցուցադրումը, ուսուցման դիտուականությունը:

դ) Հարցերի վարպետ դրումը:

յե) Զեռք բերած տեսական գիտելիքների կապելը գործնական աշխատանքի հետ:

զ) Ամբողջ նյութի կապը սոցշինարարության հետ:

ՇՐԳԵԿԱԹՍՍ.ՑԻ, ՇՐԳԵՄԵՔԵՆԸ.ՑԻ ՅԵՎ. ԶՐԱՏՈՒՐԲԻՆԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ:

Ուսուցչուհին ցուցադրում ե ջրատուրբինի մոդելը:

— «Ի՞նչն ե պտտեցնում ջրատուրբինը»:

— «Ընկող ջրի ույժն ե պտտեցնում» — պատասխանում են յերեխանները:

Ուսուցչուհին լցնում ե ջուրը...

Յերեխան բաները. — «Տես, տես, պտտվում ե»:

Ուսուցչուհին. — «Նայեցք՝ վորքան ուժեղ ջրի հոսանքը»:

Յերեխան բաները... — «այնքան արագ ե պտտվում տուրբինի անիվը»:

Յերեխաններն իրենք դնում են ջրի աման ավելի բարձր, ապացածը և գիտում են տուրբինի անիվի պտտելը:

Այսուհետև յերեխաններն անցնում են շոգեկաթսայի ուսումնասիրության:

Ուսուցչուհին ցույց ե տալիս շոգեմեքենայի մոդելը. «Սինչ ե»:

Յերեխան բաները. — «Շոգեկաթսա»:

Ուսուցչուհին. — «Ինչու համար ե պետք շոգեկաթսա»:

Յերեխան բաները. — «Նրա մեջ առաջացվում ե շոգի»:

Ուսուցչուհին. — «Շոգու ոգնությամբ գործարանում ի՞նչն ե շարժման մեջ դրվում: Ո՞վ ե տեսել»:

Յերեխան բաները. — «Շոգեկումը»:

Ուսուցչուհին. — ««Ե՞լ ինչը»»:

Յերեխան բան. — «անվանում են»...

Ուսուցչուհին. — «Իսկ դուք շոգեկաթսա տեսել եք»:
Յերեխաները — (մի քանիսը) «Վհչ, չենք տեսել»:

Ուսուցչուհին. — «Այժմ այս մողելի վրա ծանոթանանք շոգեկաթսայի կազմության հետ վո՞րտեղ ե գտնվում ջուրը»:
Յերեխաները ցույց են տալիս. «Իսկ վո՞րտեղ ե առաջանում շոգին»:
Ցույց են տալիս.

Ուսուցչուհին. — «Շոգին խողովակի միջոցով անցնում է բաշխչարկղը և շարժման մեջ և դնում մխոցը»:

Շարժումը մխոցից կարելի յե աշխատող մեքենային փոխանցել առանձին փոխանցող մեխանիզմի միջոցով»:

Այնուհետև յերեխաներն սկսում են ծանոթանալ շոգեմեքենայի մողելի հետ. Ուսուցչուհին բացատրում ե»:

Մեկ աղջիկ նայում ե և ասում. «Դա շատ նման է շոգեշարժի, կաթսան ու մյուս մասերը»...

Ուսուցչուհին. — «Կաթսայի ներսում ի՞նչ ե գտնվում»:

Աղջիկը. — «Խողովակներ են այնտեղ»...

Ուսուցչուհին բացատրում է շոգեկաթսայի ներքին կազմությունը»:

1 - ին աղջիկը. — «Շոգին ուժեղ ե»...

2 - դ աղջիկը. — «Յերբ թեյամանն յեփում ե՝ շոգին վեր և թողնում կափարիչը»:

1 - ին տղան. — «Ստեֆենսոնն յերբ յուր շոգեշարժը հնարեց՝ նանույնպես փորձեր եր կատարում թեյամանի ու ինքնայենի հետ»:

Յերեխաներն ուսումնասիրում են բաշխէչ արկղի և մխոցի կազմությունը»:

Ուսուցչուհին. — «Շոգին ի՞նչպես և ոգտագործվում արտադրության մեջ»:

3 - դ տղան — բացատրում է շոգետուրբինի կազմությունը: «Ահա այսպես տուրբինի անիվը պտտվում ե և շարժման ե դնում մեքենաները»...

Ուսուցչուհին. — «Յերեխաներ, դուք ի՞նչ եք կարծում, մեծ նշանակություն ունի շոգին»:

Յերեխաները — (խմբով) «Մե՛ծ... շատ մեծ»:

4 - դ աղջիկը. — «Իսկ ելեկարականությունն ավելի մեծ»:

Յերեխաները. — «Ո՞վ ե պատրաստել ջրատուրբինի այդ մողելը»:

Ուսուցչուհին. — «4-րդ դասարանի աշակերտները»:

Յերեխաները. — «Մենք ել կպատրաստենք... կպատրաստենք... իհարկե կպատրաստենք»...

Ուսուցչուհին. «Իսկ կարող եք դուք պատրաստել»:
Յերեխաները. «Կարող ենք... իհարկե՝ կարող ենք»:

Հաջորդ դասին յերեխաները պատրաստում եյին ջրի և շոգու տուբերիններ»:

Այդ շարժիչների հետ լաբորատոր պայմաններում կատարած նախանկան ծանոթությունը յերեխաներին հնարավորություն տվեց համեմատաբար հեշտությամբ՝ աշխատանքը կատարել:

Այդ դասին շարժիչների մողելները պատրաստելիս յերեխաները հնարավորություն ունեցան լայնացնել ու ամրապնդել լաբորատոր պայմաններում ստացած իրենց տեխնիկական գիտելիքները»:

Դինամիկ մողելների լաբորատոր ուսումնասիրության ժամանակ յերեխաներին պիտի հնարավորություն տրվի իրենց կողմից համապատասխան փորձեր ու գիտողություններ կատարելու և ըստահմանափակվել միայն ուսուցչի կողմից մողելի ցուցադրումով»:

Անհրաժեշտ ե, վոր շոշափումը լրացնի տեսողական ու լողական տպավորությունը»:

Դինամիկ մողելների լաբորատոր ուսումնասիրությանը պիտի շաղկապվի համապատասխան գրականության ընթերցումը, իսկական մեքենաների նկարի դիտումը, վորի (մեքենայի) մողելն ուսումնասիրում են յերեխաները: Բացի այդ, յերեխաները պետք ե իրենց աշխատանքի տեսրերում անպայման գրանցեն մեքենայի գլխավոր մասերի տեխնիկական ճիշտ անունները, տան մեքենայի կազմության համառոտ նկարագիրը և նկարեն ամբողջ մեքենայի կամ նրա մողելի ընդհանուր պատկերը կամ գոնե՛ նրա առանձին մասերը»:

Յերրորդ որինակ բնակիտական ծրագրի յուրաքանչյուր թեմա ձշակելիս կարելի յե բազմապիսի փորձեր կատարել: Ներքեւ մենք բերում ենք III դասարանի բնագիտության ծրագրի թեմաներից մեկի մշակման համար անհրաժեշտ փորձերի բազմաթիվ որինակներ, վոր համարյամեն մի գպրոցում, կարելի յե կատարել քանի վոր այդ փորձերը կատարելու համար պահանջվում են ամենատարրական պիտույքներ, այն ել չնչին քանակությամբ, վոր ամեն մի ուսուցիչ կարող ե ձեռք բերել: Բերած որինակները ցույց են տալիս, թե ինչպես բազմապիսի ելեմենտար փորձերի միջոցով կարելի յե մանկավարժական պրոցեսն ածխուժացնել, դարձնել աշակերտների նամար նետարկիր ու գրավիչ, զարգացնել ներացնեախուզական ունակության ներացնեախուզական մեջ մասիմայդիքուականուրյան, ցույց տալ յերեկուրյան իր զարգացման որինաչափություններով յեվ ստանալ ուսումնադասի աշխական մեծ եֆեկտ: Դրա ներ

հայել պարզվում է, թե ինչպես աշխատանքի մերողը սերտեն կապված է նյութի բովանդակության յեվ աշակերտների տարիի մեջ յեվ այլն:¹

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ «ԶՈՒԹ ՅԵՎ ՈԴ» ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Ո Դ.

Հասարակ փորձերի միջոցով յերեխաները համոզվում են ողի ներկայության: Յերբ բաժակը շուռ տված ջրի մեջ ենք թաղում՝ ջուրը չի լցվում բաժակը. յեթե բաժակը թեքում ենք, ողը պղպջակներով դուրս ե գալիս, իսկ ջուրը գրավում է նրա տեղը: Սեղանի վրա փուած թերթի և նրա տակ գրած քանոնի փորձն առանձին եֆեկտով է համոզում ողի ճնշման գոյությունը. ողը զիմաղություն ե ցույց տալիս, - և քանոնի ծայրին խփելիս, թերթը մնում է իր տեղում:

Ո ՂԻ ԱՌԱՋՔԱԿԱԲՈՒՐՅՈՒՅՔ

Ողի առաջքականության և նրա սեղմիելու հատկության հետ կարելի յե ծանոթանալ հետեւյալ փորձով. սագի փետրի ծայրը յերկու կողմից հավասար կտրած (կարելի յե վերցնել և ապակե խողովակ) խցկում է կարտոֆիլի խցաններով, (սկզբում մեկ ծայրը հում կարտոֆիլի մեջ խրելով, հետո՝ մյուս): Բարակ փայտիկով մեկ խցանը ներս մղելիս՝ սղմում է ողը և մյուս խցանը դուրս գցում:

Ո ՂԻ ԼԱՅՆԱՆԱՄ ԹԱԲՈՒՆՈՒԾ

Ողի այլ հատկության հետ ծանոթանալու համար հետեւյալ փորձերն են արվում.

1. Դատարկ շախ վրա անց և կացվում մեջը ապակե խողովակ անցկացրած խցան. խցանի կողքերը շախ բերանի և ապակե խողովակի մոտ ծածկվում ե մոմով (ող չանցնելու). խողովակի դրսի ծայրից ներս և թողնվում մի կաթիլ ջուր՝ թանաքով ներկած. շիշը պետք ե թեթևակի տաքացնել և խողովակն իջեցնել ներկած (թեկուզ թանաքով, Զ.) ջրի մեջ. շախ միջի ողը սառելու հետ ջրի ներկած կաթիլը կանցնի խողովակով ներս. շիշը տաքացնելով ու սառեցնելով մենք կստիպենք կաթիլին խողովակում տեղափոխվել վեր ու վայր (ողային ջերմաչափ):

2. Յեթե շիշը (առանց խցանի) շուռ տված իջեցնենք ջրով լի բաժակի մեջ և սկսենք շիշը տաքացնել, ողը կսկսի պղպջակներով ջրի միջով դուրս գալ:

¹ Փորձերի այդ որինակները կազմված են ընկ. Ծիգուլի կողմից և ապազրված «Методика политехнической школы» հանդիսի 1932 թվի № 2-ում (բերում ենք կրծանալիքով):

3. Ողի նույն հատկությունը ցույց տալու համար՝ յերրորդ փորձը կայանում է հետեւյալում. դատարկ շիշը փակվում է կարտոֆիլի խցանով և ապա տաքացվում՝ տաքությունից լայնացած ողը դուրս է գցում խցանը:

Ո ՂԻ ԸԱՐԺԱՄԾ. Բամու աշխատանքի բնօւրյան մեջ

Ողի շարժումը կարելի է դիտել շենքի մեջ, բաց անելով զրաբ դուրս. սառը ողը ներքեց և անցնում (մոմի բոցը թեքվում է շենքի ներսը), իսկ տաք ողը բարձրանում է վերև և այնտեղ հետզհետեւ սառում ե: Յեղբակացություն. սառն ողը տաքից ծանր ե: Իրա հիման վրա յերեխաները հասկացողություն են ձեռք բերում քամու մասին՝ վորպես ողի շարժման...

Ուսուցչի զրույցի և գրքերի ընթերցման միջոցով յերեխաները ծանոթանում են քամու աշխատանքի հետ բնության մեջ. փոթորիկներ, վորոնք մեծ ավելումներ են անում, ավագի սյուներ (բլուրներ) առաջացնում: Ինչպես են մարդիկ դրանց գեմ պայքարում: Անհրաժեշտ է կանգ առնել մարդու կողմից քամու ուժի ողագործման վրա. քամու աղացների կառուցվածքը (դրա սկզբունքները յերեխաները հեշտությամբ կհասկանան մանկական քամու աղացի որինակով), քամու շարժեչներ:

ԶՐԻ ՅԵՐԵՒ ՎԻԽՈՎԿՐ

Զրի յերեք վիճակի մասին յերեխաները հասկացողություն են ձեռք բերում հետեւյալ փորձով. ձյունը և սառույցը սենյակ են բերվում՝ դրանք դառնում են ջուր: Զուրը պետք է յեռացնել, գոլորշիացնել ամբողջովին. իսկ յեռացման ժամանակ շոգու վրա գնել մի վորես սառը իր (յերկաթյա շերտ, ապակի), վորի վրա գոլորշուց ջրի կաթիլներ կգոյանան: Այդ ձեռվ կաթելի յե ընդհանուր գծերով բացատրել, թե ինչպես ե առաջանում ամպը, անձրկը, ձյունը, նեչա բերելով ձյունով լի բաժակը (ներս բերելուց առաջ բաժակը պետք ե բոլորովին դրսից չորացնել), յերեխաները կտեսնեն, վոր նրա դրսի պատերի վրա «քրտինք» ե առաջ գալիս: Այդ փորձի վրա կաթելի յե հասկացողություն տալ ցողի և յեղյամի առաջանալու մասին:

ԶՐԻ ԼԱՅՆԱԳՅՈՒՄԾ ԹԱԲՈՒՆՈՒԾ յիշ սառույց դառնալիս

Զրի ընդարձակվելը տաքանալուց հայտնաբերվում է հասարակ փորձով. շիշը՝ խցանի միջով անցկացրած ապակե խողովակով (վոր սկզբում գործ ե ածվել վորպես ողագործմաչափ) լցվում է մինչև խցանը ջրով. ջուրը տաքացնելով մենք տեսնում ենք, վոր

զերջինս բարձրանում և խողովակով։ Դրա վրա և հիմնվում է ջերմաչափի սկզբունքների հետ ծանոթացումը։

Զըսպառչութեան մասին պարզվում է հետեւյալ փոքր
ձոգ. շիշը լիքը լցվում է ջրով և խցանով ամուր փակվում, վարից
հետո դրվում է սառնամանիքի տակ: Վորոշ ժամանակ անցնելուց
հետո ջուրը սառույցի և փոխվում և շիշը պայմանական է առաջնական գործությունների համար առաջնական գործությունների համար:

Ծանօթագում զերմաշափի սինվածքին

Իսկական ջերմաչափի հետ աշակերտները ծանոթանում են հետեւյալ ձևով. Ջերմաչափի գունդը (սնդիկային կամ սպիրային) տեղափոխում են հալչող ձյունով լի բաժակի մեջ (նույնը կարելի յե և սառուցցով անել): Յերբ արդեն սնդիկը խողովակում կանգ կառնի, պետք են այցել թե չափանիշի վեր թվի վրա և հանունում. յեթե ջերմաչափն ուղիղ են կանգ կառնի 0^o վրա:

կանգնում. յորս շիւռը է առաջ գալու հաջում ե՝
Գարնան եքսկուրսիայի ժամանակ, յերբ ձյունը հալչում ե՝
ջերմաչափն իշխցիում ե ձյունի մեջ, յերեխաները նշում են, վոր
ջերմաչափը ցույց ե տալիս 0°. Հետագայում նրանց ուշադրու-
թյունը դարձվում ե այն բանին, վոր յեթե ողի ջերմությունը
հավասար ե 0°, սկսվում ե հալցցքը (ձյունը հալչում ե), իսկ յերբ
այն 0°-ից ցածը ե՝ ջուրը սառչում ե:

ԶԱՅՈՒԹԻՒՆ ծածկոցի նշանակությունը

Զյունի ծածկոցի նշանակրությունը, վորպես աշխանացանը ցըստա-
հար լինելուց պաշտպանի՝ պարզվում և հետեւյալ փորձով: Վերցնում
եք յերկու միատեսակ շշեր՝ ջրով լի. տեղավորում եք, մեկը ձյան
վրա, մյուսը՝ ձյան տակ, գետնին մտու (փորձը պետք եւ կատարել
ձմբան, սառնամանիք որ). 30 րոպեյից հետո շշերը հանում եք և
համեմատում (ձյան յերեսին ջուրն ուժիւթիւ շուտ և սառչում): Կա-
րելի յեւ և, համեմատելու համար, ջերմաչափով ձյան վրա և ձյան
տակ ջերմությունը չափել (սառնամանիք յեղանակին):

ԶԵՒ ԱԿԱԴԻ ՊԳՏԱԳԱՐՃՈՒՄԸ ԽԱՐԴԱՐ ԿՈՂՄԻՑ

Զըազացի կառուցման սկզբունքներին ծանոթացնելու հմտմար
ցանկալի ե շինել հասարակ մողել:

Պատմվածքները կարդալով յերեխաները՝ հասկացողություն են կազմում այն մասին, թե ինչպես են ԽՍՀՄ-յում ջրի ույժն ողակագործում արդյունաբերության համար ելեկտրոէներգիա ստանալու (Դնեպրոցին և այլն):

34. Լարուս-
ուր յեզ ցացա-
դրականուսուց
ման պիտոյի-
ների պատրաս-
տումբ դպրոցի
ու մեռութ

34. Լարուա-
սոր յեզ ցացա-
քրական ուսուց
ման պիտոյք
ների առաջար-
դարձն իր ուսումնական տնտեսությունը խոշոր չա-
փով կարող է լրացնել իր շրջապատում հավաքելով մի
շարք ուսումնական նյութեր:

Տարբական դպրոցի բնագիտության ծրագիրը պահմերով՝ հանջում ե, վոր յուրաքանչյուր դպրոցում անպայման ուսումնասիրվի տեղական բնությունը և տեղական տնտեսությունը՝ հողը, սոցակար հանաձնուերը, բույսերը, կենդանիները, գյուղատնտեսությունն՝ ընդհանրապես, գործարանային ու տնայնագործական արտադրությունը և այլն:

Պարզ ե, զոր այս բոլորի ուսումնասիրությունը պետք է կատարվի նախ և առաջ տեղական բուսական և կենդանական աշխարհի առարկաների վրա և վոչ թե միայն գրքերի միջոցով կամ ուսուցչի պատճենով, ինչպես այդ արվում նոր հին դպրոցում։ Այս, զոր անմատչելի յե անմիջական ուսումնասիրության համար, կարող է մշակվել պատճենների, մոդելների և պլիեպարատների միջոցով։

Իսկ այս հանգամանքը յուրաքանչյուր դպրոցի պարտավորեցնում և ապահովել իրեն համապատասխան քանակությամբ բնական և արտադրական ուսումնական նյութերով։ Այդ նյութերի հավաքումն ու պատրաստումը չափաղանց հեշտ գործ ե. անհրաժեշտ ե միայն այդ կազմակերպել ծրագրված և վարպետորեն։

Հարց ե ծագում, թե ի՞նչ և ինչպես պետք ե դպրոցը հավաքի իր ընթապատճեմ:

Հօդք յեվ յերկտաբանական ալլ Եյուրերը: Պետք ե հավաքել տեղական ոռոր հողերի տարրեր վորակի նմուշները՝ գաշտային, բանջարանոցային, մարդապետնային, անտառային, պարարտացրած, չպարարտացրած, երկար ժամանակ պառկած և այլն: Հողերի նմուշները պետք ե հալաքել մանր կտորներով կամ փշրված ձևով (նայելով նրանց կառուցածքին): Նմուշները պետք ե վերցնել վերին շերտերից և պահել ոռուփերի շշերի, սրվակների կամ արկղների մեջ, վորոնցից յուրաքանչյուրի վրա պիտի գրել թե ինչպիսի հող ե, վորտեղից և յերբ եներցրած: Դպրոցը պիտի հավաքի տվյալ վայրի առավելապես տիպիկ նական հողերի մոնոլիտները՝ առանց խանգարելու նրանց ամբողջությանը, վորպեսզի կարելի լինի տեսնել շերտերը և ուսումնասիրելողիք:

Բացի հողից՝ անհրաժեշտ է հավաքել տեղական բոլոր լեռնային տեղակների, ոդտակար հանածոների (յիթև այդպիսիները կան ույսում) քարացած մարմինների նմուշները (հնախոսական նյութեր):

¹ Чистый К. Рук. Рыб. Конобеевск. «Самооборудование начальной школы наглядными пособиями» (Библиотека в помощь начинающему учителю, вып. 10).

Հեռնային տեսակներից և ուգտակար հանածոներից անհրաժեշտ են հավաքել զանազան տեսակի և գույնի ավաղի ու կավահողի նմուշներ, ավաղաքար, կավային թերթաքար, կրաքար, դաշտային սպաթ, սպիտակ և կարմիր կայծաքար, սովորական վորձաքար, տորփ, բրիկես, տորփային մամուռ, թեթե դպրոցի ուայոնում կա քարածուխ և այլ հանգեր, դպրոցն անվայրման պետք են հավաքի նրանց զանազան տեսակների և ճեղքի նմուշները:

Բուսական նյութեր: Բուսական աշխարհից դպրոցի ուսումնական աշխատանքների համար անհրաժեշտ են հետեյալ նյութերը.

1) Կուլտուրական բույսերի սերմերի նմուշները. ա) հացաբույսերի՝ հաճարի, ցորենի, վարսակի, գարու, կորեկի և այլն. բ) մարգագետնային և կերի բույսերի՝ առվույտի, վիճիկի, յերեքնուկի և այլն. գ) բանջարանոցային բույսերի սերմեր՝ սիսեռի, վարունդի, կաղամբի, ճակնդեղի, բողկի և այլն. դ) տեխնիկական թելավոր և յուղաբեր բույսերի (կանեփ, վուշ, արեածաղիկ, մանանեխ, գոնգեղ և այլն). 2) Վերևում հիշած հացաբույսերի, մարգագետնային կերի և տեխնիկական բույսերի ցողունները և հասկերը. դաշտային, մարգագետնային բանջարանոցային մոլախոտերը և նրանց սերմերը, մակարույծ (պարագին) բույսերը. 3) Դեղաբույսեր: 4) Թունավոր բոյսեր՝ մոլեխինդ և այլն:

Անհրաժեշտ են ժողովել միանգամայն հասած սերմեր և պահել տուփերի մեջ (ապակյա ծածկոցով): Իսկ վորձերի համար լավ են ունենալ ավելի մեծ քանակությամբ սերմեր՝ տոպրակների մեջ պահած: Սերմերի բոլոր նմուշները պետք են ունենան ետիկետներ, վորոնց վրա դըրվում են սերմի անունը, հավաքման ժամանակը և տեղը, ընթացիկ տարվա բերքի տվյալները (հացահատիկների և յուղաբեր բույսերի սերմերի նկատմամբ) և այլն:

Բույսերն անհրաժեշտ են ժողովել նաև ծաղկման շրջանում, կանաչ պրությամբ և հասունացած: Վորոշ բոյսերի նմուշները պիտի վերցնել արմատով:

Բացի հացաբույսերի և այլ բույսերի սերմերից ու ցողուններից դպրոցը պիտի հավաքի բուսական աշխարհի հետեյալ նյութերը. ա) ճյուղեր և բների կտրվածքներ, ծառերի և թփերի տեղական տեսակների կեղեւ և տերեւներ. բ) պտուղներ՝ խոզակաղին, կաղին, փղատերև ծառերի կոներ, կնձենու, հացենու և կաղամախու թևապտուղներ և այլն: Պտուղներ պետք են հավաքել գլխավորապես աշխանը, իսկ միքանիսմա՝ ամառը: Պտուղները պահպանվում են տուփերի կամ արկղների մեջ: Փշատերև ծառերի կոները պետք են հավաքել ձմբան վերջերին կամ գարնան սկզբին, յերբ գեռես նրանց մեջ կան սերմեր: Մասների ճյուղերը և բների կտորները պահպանում են կամ վորպես հավա-

քածու կամ թե՛ տուփերի մեջ. գ) դաշտային, մարգագետնային և անտոպային մշակվող և վայրի ծաղիկները (ծաղիկները պահպատ են այնպես, ինչպես մյուս բույսերը). դ) դաշտային պտուղներ և սունկեր՝ ինչպես գործածելի, նույնպես և վոչ գործածելի:

Կենդանական աշխարհի ուսումնասիրության առարկաներ հանդիսանում են՝ միջատները, ջրային կենդանիները, ձկները և այլն, ընտանի և վայրենի կենդանիները և մարդը:

Ուսումնասիրության համար նյութ կարող են ծառայել՝ գյուղատնտեսության համար ոգտակար միջատները, գյուղատնտեսության, դաշտի, պարտեղի, բանջարանոցի, անտառի և ամբարների միաստուները. մեր բնակարաններում ապրող միջատները, գետնի մեջ ապրող միջատները (աղբային բզեզներ և այլն), տեղական ջրային բնակիչները՝ միջատները, գորտերը, շերեփուկները, տարբեր ցեղի ձկները՝ մանր կենդանիներ՝ վողնիներ, ճագարներ, մկներ և այլն:

Վերոհիշյալ միջատներն ու կենդանիները ձեռք են բերվում եքակուրսիաների կամ հատկապես կազմակերպված արշավների ժամանակ՝ համապատասխան գործիքների ոգնությամբ:

Բնական նյութերի հետ միասին դպրոցը պիտի հավաքի նաև տեղական գործարանային յելի կոոպերատիվ-տնայնագործական արդյունաբերության արտադրույթը նմուշներ:

Այսաեղ պետք են հավաքել վոչ միայն պատրաստի իրերը կամ ֆաբրիկատները, այլև այն հումուռյթը, վորից պատրաստվում և տվյալ ապահովը՝ բատ հնարավորության նրա մշակման բոլոր հիմնական աստիճաններում:

Ծառ մեծ արժեք կունենա դպրոցի կողմից արտադրության առանձին բնորոշ պրոցեսների, ինչպես և այդ արտադրության գործիքների ու մեքենաների լուսանկարումն ու դրանց սինեմատիկ մոդելների պատրաստելը:

Բացի տեղական իրերից, դպրոցը կարող է հավաքել ուրիշ շատ իրերի նմուշներ ևս, վորոնք չեն արտադրվում տվյալ սայոնում, բայց անհրաժեշտ են ծրագրային նյութը մշակելու համար: Այսպես որինակ, հեշտությամբ կարելի է հավաքել յերկաթից, պողպատից և չուգունից պատրաստած զանազան մետաղյա իրեր, տարբեր հաստության յերկաթարի կառուներ, պողպատայ զալանակներ, գործելու հին շյուղեր, չուգունի կամ վորես այլ ձուլվածքի կառուներ, զանազան տեսակի յերկաթյա թիթեղների կառուներ, մեխեր, պատուակներ և այլն:

Հեշտ են նաև գունավոր մետաղից պատրաստած իրերի ժողովումը. ինչպես պղնձյա կոճակների կամ գրամների, ալյումինից պատրաստած լրամների կառուների, արծիքների կամ ցինկից պատրաստած իրերի և այլն: Ե՞ւ ավելի հետո են սամբակյա, բրդյա և մետաքսյա զանազան ահ-

սակի, զույների և զարդանկարներով պործվածքների ինչպես և հարձապակյա (ֆայնօբանի) և ճենապակյա (ֆարֆօրօնանի) իրերի կտորներ հավաքելը:

Դպրոցը կարող է նաև ձեռք բերել ելեկտրական այրված լավագույն էլեկտրական այրված լարեր, մեկուսիչներ, այրված խցաններ և ելեկտրական ու ռադիոյի այլ և այլ մասեր։ Այս և սրա նման «անպետք նյութերը» (брюссելյան մատերիալ) դպրոցը հաջողությամբ կարող է ոգտագործել վագեստ ցուցադրական պիտույքներ և լաբորատոր աշխատանքների համար՝ դպրոցական ծրագրի համապատասխան բաժինները մշակելիս:

Բոլոր այս նյութերը կարելի ե հավաքել զանազան ձեւերով ու ճամանապարհներով. բնական նյութերը՝ եքսկուրսիաների ժամանակ, արտադրական նյութերը՝ եքսկուրսիաների և հետազոտությունների ժամանակ, «անպետք նյութերը»՝ յերեխաները կրերեն տնից կամ կծողովեն տնտեսական հիմնարկների արհեստանոցներում:

Հավաքած նյութերից կարելի ե կազմել կուեկցիաներ, աղյուսակներ-ստվարաթղթի վրա կարել առանձին նմուշներ, դասավորել նրանց հաջորդական կարգով՝ ըստ արտադրության պրոցեսի ընթացքի՝ կցելով համապատասխան բացատրական:

Դպրոցն առանձին ուշագրություն պիտի դարձնի ուսումնական նյութերի կազմակերպման վրա, գորովճետե միմիայն ճիշտ կազմակերպած և մեթոդապես ճիշտ դասավորած տեղական նյութը կարող է ծառայել մանկավարժական պրոցեսում վորպես ուսումնական ոգտակար պիտույք:

5. ԳԵՐԱԳՈՒՆՆՈՒԹՅՈՒՆԻ ՅԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՅ

35. Գիտողական նյութի ամուր ու գիտակցական յուրացման և դրա տիրապետման գործում կարևորագույն տեղ է գրավում մշակվող նյութի դիտողական լինելը։ Դիտողականությունը դարձնում է մշակվող նյութը կոնկրետ, հնարավորություն և տալիս տեսնել յերեւայիթի դինամիկական դարգացումը։ Նա հնարավորություն և տալիս զանազան ձևերով վերաբերական դպրոցում

կազմության, արտադրական պրոցեսի հետ (աղոլիտեխնիկական-աշխատանքային ուսուցում), դարձնում են մաթեմաթիկայի չոր, վերացական հասկացողությունները կոնկրետ ու լմբունելի:

Այդ բոլորը ցույց ե տալիս, թե ինչ հսկայական նշանակություն ունի՝ դիտողականությունն ու դիդակտիկական պիտույքների կամ դւսումնասիրվող իրեն ցուցադրումը յերկույթի ուսուցման գործում:

Այստեղից պարզ է նաև, վոր դիտողականությունը չպիտի նեղ հասկանալ վոր այն հանդես է գալիս շատ հաճախ մեթոդական այլ պրիմարի պրոցեսում։ Այդպես. մի վորեւ նյութ վարպետորեն, գեղարվեստական ու պատկերավոր ձեռվ ստամելին՝ աշակերտները վերաբարագրում են իրենց մտքեւմ ու կարծեք տեսնում են ամբողջ պատկերներ, գործողություններ։ Նման ձեռվ տրված (թեկուկ և բանավոր) գիտելիքները յուրացվում են ամուր և յեթե աշակերտի համար հասկանալի յե մշակվող նյութի նաև սոցիալական-դասակարգային իմաստը, նա յուրացնում է նյութը գիտակցորեն ու ամուր։ Պետք է սակայն նախագործացնել, վոր գեղարվեստական ու պատկերավոր խոռը յերբեք ինքնանպատակ չպիտի լինի ու չպիտի կրի սխոլաստիկ բնուլը։ Այն պիտի լինի միջոց, վոր աշակերտները լուսակաղ նյուրը յուրացնեն ամուր ու գիտակցական, բմբոնեն նրա սոցիալական իմաստը, սրբավետն նյուրն ու ձեռվ բերեն ունակություններ՝ կյանքում ոգտագործելու։

Մշակվող նյութի գիտողական դարձնելու մի այլ ձևն է նկարչությունն ու գծագրությունը։ Սխեմաների, գիտաբանների, գծագրերի (պերտեղ) ցուցադրումը մեծ չափով ոգնում և հաճախ վերացական, գժվար-ըմբռնելի նյութը դարձնելու յերեխաներին դիտողական ու մատչելի։ Այս կամ այն յերեսույթների վերաբերյալ պատմելիս կամ բացատրելիս՝ ուսուցիչը պետք է անհրաժեշտ դեպքում միշտ դիմի կավիճին ու գրա-տախտակին՝ գծելու, նկարելու, կոնկրետ ձևով պատկերացնելու պատմածը, բացատրածը։ Նույնն և նաև աշակերտների աշխատանքի ժամանակ կատարած փորձի նկարումը տեսրում, լարուատոր աշխատանքի պրոցեսում կատարած դիտողությունների նկարելը։ Որի-նակ, Մուկվայի տարրական դպրոցներից մեկի Լին դասարանում հե-տեւյալ պարզ գրանցումն ե կատարված։

(Նկար) Կաղնու տերեւ.

(Նկար) Թղթի տերև

(Նկար) Սոճու ճյուղ

(Եկար) Յեղենու ճյուղ:


Սոճին ու յեղենին տել

Գրանցումը հակիրճ է և հարուստ նկարագարդ:

Digitized by srujanika@gmail.com

¹ «Естествознание в начальной школе», инстр. мет. материал., вып. 4 стр. 28

Մաթեմաթիկայի դասավանդման ժամանակ նույնպես հսկայական դեր ե կատարում գծագրությունն ու նկարը: Որինակ, տոկոսային հարաբերությունը ցույց տալու համար կազմած կլոր կամ սյունակաձև դիագրամը կօնկրետ ու դիտողական ե դարձնում նյութը: Վերցնենք հետեւյալ քառակուսին:



«Սա բաժանվում է 100 հավասար մասերի: Հետեւյար, յուրաքանչյուր մասը կկազմի ամբողջ քառակուսու մեկ հարյուրերորդ մասը: Գրանցությունը այդ, համեմատաբար հեշտությամբ կարելի ե հաշվել, թե քառակուսու վա՞ր մասը կստանանք, յեթե, որինակ՝ 0,02-ը վերցնենք 4 անգամ: Այդպիսի ցանցի վրա կարելի յե նաև ցուցադրել հասկացողություն առկուների մասին: Այսպես՝ մեկ բջիջը կկազմի քառակուսու մեկ հարյուրերորդ մասը, կամ տվյալ քառակուսու մեկ տոկոսը»¹ և այլն: Այդպիսի դիտողական ձևով ել կարելի յե սկզբնական հաշվիք սովորեցնել տարրական դպրոցում: Այդ ուղղությամբ կարելի յեր բաղմաթիվ որինակներ բերել (թվահաշիվը քառակուսիներով, շըրջագծերով և այլն):

Մշակվում ե նյութը, և այն ամրապնդելու լավագույն միջոցը հաճախ դառնում ե համառոտ կոնսպեկտի, թեղիներեկ, ազյուսակի, դիագրամի ձևով նյութի գրանցումը, գծագրումը կամ նկարումը:

Բերում ենք Ռուսովի (Դ|վ.) № 13 որինակելի դպրոցում աշխարհագրությունից կազմած հետեւյալ աղյուսակը, վոր գաղափար կարող ե տալ այն մասին, թե ինչպես վերացական կամ փաստական նյութը կարելի յե պատկերավոր ձևով տալ: Սա գոտիների աղյուսակն ե.

¹ В. Злено Յ., «Наглядность в обучении математики», № 4.

Աշակերտների գրանցումները նկարագարդված են.

Գոտու անունը. ինչ մարդկեր, յերկամասեր և հանրապետություններ կան այդ գոտում	Հուման	Բուռականությունը	Կենցաղական աշխարհը	Աղջախնակ շնոթական գոտում	Ինչ աղջուական գոտում

36. Նկարներն ուսուցման գործում շատ խոշոր տեղ ու պատկերներն ու պատկերները, ինչպես և կիրառելու ուսուցման գործում Դիտողական ուսուցման գործում նկարը, դիտապահիների ցուցադրումը: Նկարների, պատկերների, կինո-նկարների ու դիտապահիների միջոցով, ինչպես ասացինք, լավագույն ձևով վերաբերագրվում ե հեռավոր պատմական անցյալը, հեռավոր յերկրների և Խորհրդային Միության հեռավոր մարզերի ու յերկրամասերի սոցշինարարությունը, ժողովների կենցաղը, կուլտուրան, զբաղմունքը, բնական պատկերները և այլն: Նկարներն ու պատկերները, մանավանդ կինո-նկարն ու դիտապահիները զորեղ միջոց են թե գիտելիքներ տալու և թե կոմունիստական աշխարհայուցք կերտելու գործում (որինակ. կինո-նկար՝ բակտերիաների կյանքի մասին, կինո-նկար «Պատյումին զրահանավը» և «Զապայնը» վորպես պրոլետարիատի հեղափոխական ընդլայնման ցայտուն որինակներ):

Նկարի, պատկերի, կինո-նկարի, դիտապահիների ցուցագրումը անհրաժեշտ վեպքում զուգորդվում և զրույցի, բացատրությունների, միջնակարգ գովորոցի բարձր խմբերում դասախոսությունների հետ:

Վորպես որինակ այն բանի, թե ինչպես վերացական ու դժվարին նյութը պատկերներով ու նկարներով կարելի յե կոնկրետ ու դիտողական դարձնել բերում ենք կուսադողություն, վոր տրվել ե Լենինգրադի № 194 դրագուցի յերրորդ գասարանում՝ «Պիոներներ» թեմայի մշակման ժամանակ:

Դասը նվիրված ե Համկեր (բ) կենտկոմի 1932 թվի ապրի 21-ի վորշման՝ պիոներ կազմակերպության աշխատանքների մասին: Ուսուցիչը դասին լավ պատրաստվել ե. դասն ընթանում է հետեւյալ պլանով:

- ա) Անցածի կրկնություն (զրույց):
- բ) Աշխատանք՝ վորշման տեքստի վրա (նկարների ոգտագործումով):
- գ) Պիոներ զեկի զեկույց:
- դ) Ուսուցիչը. — Կոմունիստական կուսակցությունն 1932 թվի ապրիլի 21-ին մեզ ցույց տվեց, թե ինչպես պետք ե սովորել և

աշխատել: Այժմ մշակենք այդ վորոշումը: Դիտեցեք գրատախտակին կախած նկարները: Հովհանիսյան, մոտեցիր գրատախտակին, դիտիր առաջին նկարը յեվ տաս՝ ինչ ե նկարված:

Աշակերտ. — Պիոներները սովորում են դպրոցում:
Ուսուցիչ. — Տես՝ ի՞նչ ե նկարած 2-րդ նկարում:

Աշակերտ. — Պիոներն աշխատում ե արհեստանոցում:
Ուսուցիչ. — Կարդա, ի՞նչ ե գրած տակը:

Աշակերտ. — Կարդում ե. «գլորոցը մեր աշխատանքի գըլ-խավոր տեղն ե. Պիոներ, պայքարիր պոլիտեխնիկական դպրոցի համար, ուսման բարձր վորակի համար, գիտակցական կարգապեհության համար»:

Ուսուցիչ. — Ահա, տղայք, ինչ ե ասում կուսակցության կենտկոմը պիոներական կազմակերպության մասին: Ինչո՞ւ համար մենք պիտի պայքարենք:

Աշակերտ. — Ուսման բարձր վորակի, գիտակցական կարգապահության համար:

Ուսուցիչ. — Որևէվա, կարդա՝ ի՞նչ ե գրած մյուս նրակի տակ:

Աշակերտ. — (Կարդում ե). «Զգտել վոր պիոներն ամենուրեք որինակ լինի բոլոր յերեխաներին»:

Ուսուցիչ. — Այս նկարի վրա պիոներներն ումն են սգնում:

Աշակերտ. — Պիոներներն ոգնում են կոլտնտեսականներին՝ հացահատիկը հավաքելու:

Ուսուցիչ. — Լվագ, կարդա մյուս նկարի վրայի գրությունը:

Աշակերտ. — Պիոներներ, պայքարեցեք տեխնիկան ուսումնասիրելու համար: Ծավալենք տեխնիկական խմբակների աշխատանքը, լինենք պատանի գյուտարարներ:

Ուսուցիչ. — Ինչո՞ւ պետք ե ուսումնասիրել տեխնիկան:

Աշակերտ. — Տեխնիկան պիտի ուսումնասիրել նրա համար, վոր մարդ յուրաքանչյուր մեքենայի հետ վարվել կարողանա:

Ուսուցիչը կանչում ե մի ուրիշ աշակերտի, վորը շարունակում է կարդալ կենակոմի վորոշումը:

«Երիտասարդները պետք ե ավարտեն կոմունիզմի գործը. նրանք գեղ պիտի պայքարեն կոմունիզմի համար և նրանք այդ կովին պետք ե դիմավորեն կայուն և առողջ»:

Ուսուցիչ. — Ի՞նչպիսի առողջություն պիտի ունենալ նման դժվար խնդիրը լուծելու համար:

Աշակերտ. — Պիոները պետք ե լավ առողջ լինի նա պիտի ֆիզիկուլտուրայով զբաղվի:

¹ Բնագծությունները մերն են. Զ.

Աշակերտը կարգում ե հաջորդ մասը, վորը գրված ե նկարի վրա. «Պիոներ, մաքրության և առողջության պայքարում որինակ հանդիսացիր»:

Այս կարգով, խմբի բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությամբ և ցուցադրական ձեռնարկների ոգնությամբ՝ բացատըրվեցին կենտկոմի հիմնական վորոշումները պիոներ կազմակերպության մասին:

Ուսուցիչն ամփոփում չարավ, վորովհոտե հետևյալ գասին պիտի շարունակվեր նյութի մշակումը: Դասի յեզրափակող մոմենտ հանդիսացավ պիոներների զեկույցը, վորով նա պարզեց գլորոցի պիոներղեկի կատարած աշխատանքը՝ կենտկոմի վորոշում իրացնելու ուղղությամբ: Հետեւյալ դասի համար պիոներ զեկավարին առաջարկվեց հայտնել, թե ինչպես ե ընթանում աշխատանքն այդ ուղղությամբ:

Նկարագրած դասն ունի խոշոր արժեքավոր կողմեր: Նյութը մշակված ե բազմազան մեթոդներով՝ հարց ու պատասխան, նկարների դիտում, տեքստի ընթերցում, պիոներ զեկի զեկույց, այդ բոլորը հյուսվելով անշուշտ հանդիս են բերել աշակերտների ակտիվ ստեղծագործական աշխատանքն և աշակերտներին տվել են մշակվող խնդրի մասին ամուր և զիտակցորեն յուրացրած զիտելիքներ:

Յեվ այդ դասում նկարների դերը նյութը կօնկրետ, դիտական ու բմբոնելի դարձնելու համար՝ հսկայական ե ու անփոխարինելի:

Աշխարհագրության դասավանդման գործում նկար-
37. Պիտողա- կան այլ պի- ներից ու պատկերներից վոչ պակաս կարենոր նշանկու-
տույթների ոգ- թյուն ունեն բազմատիպի քարտեղները (քաղաքական,
տագործումը վարչական, կենդանաբանական, բուսաբանական, ար-
դյունաբերական, առեւտրական, ազգագրական և այլն և այլն), ինչպես
և զրոբուսը (տես ներքեսում բերած դասի նկարագրությունը. «աշխա-
տանք գրոբուսի վրա»):

Ե՞լ ինչ տպակի դիտողական ձեռնարկներ են գործածված դպրոցական:
Դրանք բազմապիսի յեն. այսպես՝

Մողելներ, խրովիլակներ, հանքային, բուսական ու կենդանական ժողովածուներ, յերկրաչափական ձեռք, թվաբանական համրիչներ և այլն և այլն (վորոնցից շատերը գլորոցը պետք ե իքնասպասավորման կարգով իր ույժերով պատրաստի):

Պետք ե նշել, վոր փորձերի ցուցադրումը, եքսկուրսիաների ընթացքում տեսած ուսումնասիրած որյեկտները (յերկույթները, իբերը) նույնպես հանդիսանում են դասավանդումը գիտողական ու կոնկրետ դարձնելու միջոցներ:

Իրի կամ յերկույթի բնական վիճակում ուսումնասիրելը, գիտո-

դականության բարձրագույն աստիճանն եւ հանդիսանում: Դիտողական ուսուցման ոժանդակում են, ինչպես մենք տեսանք, նաև լաբորատոր աշխատանքները, կատարած փորձերը, յերեւութների դիտելն իրենց բնական վիճակում և այլն: Կը կնում ենք, փորձան խումբը ցածր եւ այնքան դասավանդումը կոնկրետ ու դիտողական եւ լինելու. փորով-հետև աշակերտների վերացական մտածողությունը փոքր տարիքում չափազանց ցածր եւ նրանք աստիճանաբար, տեսական աշխատանքի պլոցեսում միայն, ձեռք են բերում վերացական հասկացողություններն ըմբռնելու, վերացական դատողություններ և ընդհանրացումներ անելու ունակություններ:

Ուսուցիչը պետք եւ գիտենա, վոր իրը, նկարը, փորձը կամ յերե-վույթը դիտելը պետք եւ լինի գիտություն և իմացություն ձեռք բե-րելու մի մոմենտը, վոր աշակերտները վոչ թե պիտի դիտեն յերեւութն իր քարացած, անշարժ վիճակում, այլ ըմբռնեն դիտած յերեւութի կապն իր շուրջն յեղած յերեւութների հետ, տեսնեն նրա որինաչա-փությունները, կարողանան հասկանալ յերեւութը՝ փորպես դիտելու կական պրոցես:

38. Ի՞նչ էրմ-
հանդիսի պա-
հանդիսի պի.
սի բավարարի
գա ստ վ ա ն -
դումը

ի՞նչ նիմենական պահանջներ են դրված դիտողական
նախանդակությունը հանդիսավոր պատասխանի ավագա-
լա վարական ձեռնարկը համապատասխանի ավյալ
ուսումնական առարկայի ուսումնասիրվող նյութի բո-
վանդակությանն ու բնույթին և լինի մաքսիմալ չափով կոնկրետ:

բ) Գործադրվող ձեռնարկները պետք եւ ճշգրիտ պատկերացնեն ուեալ իրականությունը, պետք եւ գեղարվեստորեն ձևավարված լինեն.

գ) Ուսուցիչը պետք եւ տիրապետի դիտողական դասավանդման և դիտողական ձեռնարկների ու պիտույքների ցուցադրման եփեկտիվ ոգտագործման մեթոդիկային ու աեխնիկային: Նա պիտի գիտենա ժա-
մանակին ու տեղին ոգտագործել ավյալ ձեռնարկը:

դ) Ուսուցիչը պիտի նախորոք լուրջ պատրաստի ամենաեֆեկտիվ ձևով ավյալ դիտողական ձեռնարկը մանկավարժական պրոցեսում ոգ-
տագործելու:

Միաժամանակ նա պիտի հանդես բերի մաքսիմալ չափով ստեղծա-
գործական աշխատանք, ինքնուրույն ձեռնարկներ պատրաստելու և
դրանով մանկավարժական պրոցեսը հարստացնելու:

39. Դիտողական
ուսուցման մի
վրանուն գործու-
թան գործու-
թան գործու-

Ներքեւ մենք բերում ենք մի դասի նկարագրու-
թյուն, վոր ցույց եւ տալիս, թե ինչ խուռա-
դյունք եւ տալիս ցուցադրական ձեռնարկը (սկզա-
գրավում գլոբուլը) ուսումնական պրոցեսում, յեր-
եա նաջող ձեռքավ եւ ոգտագործում յեվ դրա հետ շաղկապիում են մերս-

դական բազմազան պրիուներ: ¹ «Որինակ բերենք կոլպինակիյ գըպ-
րոցի (Լինինգրադի քաղլուսբաժին, ուսուցչունի ընկ. Լուկաշեկ),
3-րդ դասարանի համեմատաբար լավ պլանավորած, մշակած դասից:

Դասի թեման ե՝ ինչ ձեվի յերկիրը:

Դասի բովանդակությունն ու ընթացքը հետեւյալն ե. ուսուց-
չունին գրատախտակին գրել ե դասի նպատակը և հետեւյալ հար-
ցերն ե առաջադրում:

Ի՞նչ եյին մտածում յերկրի մասին հին ժամանակ: Ի՞նչ գիտեն
այժմ յերկրագնդի մասին: Գիտնականներն ի՞նչպես իմացան,
վոր յերկիրը գնդի ձև ունի:

Աշակերտին առաջարկվում ե կարգալ բոլոր հարցերը: Հետո
յերկրորդ աշակերտը կարգում ե առաջին հարցը, վորի պատաս-
խանն առաջարկում ե աշակերտներին գտնել: Աշակերտները
դժվարանում են, վերջապես մեկն ասում ե «Ասել եմ, վոր յերկիրնքը
միանում ե յերկրի հետ»: Յերկրորդը՝ «Յերկիրը կանգնած ե յերեք
կետերի (կետը ջրային կենդանի յե) վրա»: յերրորդը՝ «Յերկիրն
ունի սահման, վերջ»:

Ուսուցիչը պատմում ե, թե ինչ եյին մտածում հին ժամանակ
յերկրի մասին. (համարում եյին նրան տափակ, սեղանի նման,
կարծում եյին, վոր յեթե շարունակ միևնույն ուղղության գնաս,
կհանենս սահմանին ու կգլորվես անդրւնդը):

Առաջարկում ե աշակերտին կարգալ յերկրորդ հարցը:

Ուսուցիչ. — Ո՞վ կպատասխանի այս հարցին:

Մի աշակերտ ասում ե, թե յերկիրը կլոր ե գնդի նման: Ուսու-
ցիչը բացատրում ե, վոր յերկրագունդն ուսուցիկ ե, գնդի ձև ունի:
և սահման չունի:

Ուսուցիչ. — Վերիչիենք աշնանը կատարած առաջին եքս-
կուրսիան: Ի՞նչ տեսանք, յերբ կանգնած նայում եյինք մեր
չորս բոլորը.

Աշակերտ. — Տեսանք ցրջան, կարծես յերկինքը միանում եր
յերկրին:

Ուսուցիչ. — Դուք ի՞նչ տեսաք, յերբ բարձրացաք աշտա-
րակի վրա:

Աշակերտ. — Յերբ մենք բարձրացանք աշտարակի վրա,
հորիզոնի գիծը մեզանից հեռացավ:

Ուսուցիչ. — Ի՞նչպես ե կոչվում այդ գիծը.

Աշակերտ. — Այդ գիծը կոչվում ե հորիզոն:

¹ Դասը վերցրած ե՝ «География в начальном школе» ԽՍՀՄ ժողովական ինս-
տիտուտի մեթոդական նյութի ծ-րդ պրակից (Այս գրքույկը թարգմանված ե հա-
յերեն ու հրատարակված «Հյուս» կողման հրատարակչության կողմից):

Ուսուցիչ. — Յեթե յերկիրը հարթ լիներ, մենք այդ գիծը միենույն տարածության վրա կտեսնելինք: Քանի վեր ենք բարձրանում, այնքան լայնանում ե այդ շրջագիծը: Սա ցույց ե տալիս, վոր յերկիրը վոչ թե տափակ ե, գաթայի նման, այլ ուսուցիկ ե և ունի զնդի ձև (Աշակերտներն ակտիվ մասնակցում են զբույցին):

Առաջարկում ե 3-րդ հարցը կարդալ:

Ուսուցիչ. — Ո՞վ կպատասխանի այս հարցին:

Աշակերտ. — Մարդիկ պտտեցին յերկրի շուրջը և խմացան, վոր նա գունդ ե:

Վորովհետեւ մյուս աշակերտներն այդ բանը չգիտեն, ուսուցչուհն առաջարկում ե հետեւ թե ինչպես զնդի (գլոբուս) յետեղից յերեան ե գալիս թղթե առաջաստանավը: Փորձը կրկնվում ե 2 անգամ:

Ուսուցիչ. — Սկզբում մենք ինչ տեսանք:

Աշակերտ. — Սկզբում յերեաց առաջասար, հետո ամրող նավը:

Ուսուցիչ. — Նավը տանում ե հակառակ ուղղությամբ: Աշակերտները հետեւում են և ասում: — Սկզբում աչքից հեռացավ նավի ստորին մասը, հետո միջին մասը, ամենավերջը՝ առաջասար:

Հետո անց են կացնում մոմի փորձը: Աշակերտները հետեւում են.

Ուսուցիչ. — Ի՞նչ նկատեցիք մոմի մոտեցնելու ժամանակ:

Աշակերտ. — Սկզբում ծուխն ե յերեւմ, հետո՝ բոցը, իսկ ամենավերջը՝ մոմը:

Ուսուցիչ. — Ի՞նչ կարելի յենկատել մոմը հեռացնելու դեպքում: (Փորձը շարունակում ե):

Աշակերտ. — Սկզբում անհայտացավ մոմի ստորին մասը, հետո միջին մասը, հետո՝ ամրող մոմն ու ծուխը:

Ուսուցիչ. — Ի՞նչն ե մեզ խանգարում առարկան միանգամբ լրիվ աեսնելու:

Աշակերտ. — Գնդի կլոր լինելը:

Ուսուցիչ. — Ո՞վ ե ձեզանից յեղել ծովափին, հիշեցեք, ի՞նչ ելք նկատում շոգենավի մոտենալու ժամանակ:

Աշակերտ. — Սկզբում նկատվում ե փոքրիկ կետ: Նավի մոտենալով աստիճանաբար յերեւմ ե ծուխը, հետո ծխնելույզը, շոգենավի միջին մասը, իսկ հետո՝ ամրող շոգենավը:

Ուսուցիչ (բացատրում ե). — Յերբ կանգնած ես լինում բաց տեղում և տեսնում ես, վոր առարկան քեզ ե մոտենում, նրան միանգամբ ամրողովին չես տեսնում: Ազգային նկատում ես նրա վերին մասը, հետո միջինը և հետո՝ ամրող առարկան:

Ուսուցիչ. — Ի՞նչ կարող եք ասել ծովի մասին:

Աշակերտ. — Ծովն ուսուցիկ ե:

Ուսուցիչ. — Ուսուցիկ ե միայն մի՞ ուղղությամբ:

Աշակերտ. — Ծովն ուսուցիկ ե ամեն ուղղությամբ:

Ուսուցիչ. — Իսկ յեթե ծովը տափակ լիներ՝ մենք ինչպես կտեսնելինք շոգենավը:

Աշակերտ. շովովում են:

Ուսուցիչ. — Յեթե ծովը տափակ լիներ՝ մենք կտեսնելինք ամբողջ նավը, միայն սկզբում նա կերեար փոքրիկ ապա ավելի ու ավելի մեծ:

Աշակերտ. — Այժմ պարզեցինք, վոր ցամաքի վրա առարկայի մոտենալու դեպքում սկզբում յերեւմ ե վերին մասը, հետո միջինը, իսկ ամենավերջը՝ ամբողջ առարկան:

Ուսուցիչ. — Իսկ առարկայից հեռանալու դեպքում:

Աշակերտ. — Սկզբում անհետանում ե ստորին մասը, հետո միջինը, իսկ ամենավերջը՝ ամբողջ առարկան:

Ուսուցիչ. — Իսկ յեթե յերկիրը տափակ լիներ, առարկան ինչպես կերեար:

Աշակերտ. — Մենք միանգամբ ամբողջ առարկան կտեսնելինք. սկզբում փոքր, իսկ հետո՝ ավելի ու ավելի մեծ:

Ուսուցիչ. — Ինչով բացատրել այդ:

Աշակերտ. — Դա կարելի յենցատրել յերկրի ուսուցիկ ձևով:

Ուսուցիչ. — Ի՞նչ կարելի յե ասել ցամաքի մասին:

Աշակերտ. — Ցամաքը ամեն ուղղությամբ կլոր ե:

Ուսուցիչ. — Հիշեք, անցյալում ի՞նչ եյին մտածում ցամաքի մասին:

Աշակերտ. — Թէ՛ ցամաքը տափակ ե, սեղանի նման: Կանգնած ե յերեք կետերի վրա և այլն:

Ուսուցիչ. — Իսկ այժմ մարդիկ ի՞նչ գիտեն յարկրի մասին:

Աշակերտ. — Յերկիրը զնդանեւ ե, նա սահման չունի:

Ուսուցիչ. — Գիտնականերն ի՞նչպես ապացուցին, թե յերկիրը գնդի ձև ունի:

Աշակերտ. — Մոտեցող ե հեռացող առարկաների վրա գիտություններ անելով:

Ուսուցիչ. — Վար առարկան ե ամեն կողմից հավասարապես ուսուցիկ:

Աշակերտ. — Գունդը:

Ուսուցիչ. — Ի՞նչ ձև ունի յերկիրը:

Աշակերտ. — Գլոբուսի ձև:

Ուսուցիչ. — Գլոբուսը յերկրագնդի մոդելն ե: Այժմ գրենք այն, ինչ սովորեցինք:

«Մարդիկ յեղբակացրին, վոր ցամաքն ու ծովն ամեն կողմից հավասարապես կլոր ե: Յերկիրը գնդանեւ ե: Յերկրագունդն ուսումնասիրել կարելի յերկրութիւնությամբ:

Գլորուաը յերկրագնդի մոդեն ե:

«Դասին կարգապահությունը լավ եր» — յեղբակացնում է դպրոց հետազոտողը:

Վերն ե այս դասի արժեքավոր կողմը:

Նախ և առաջ, դասի սկզբին աշակերտների առաջ պարզ ու հասկանալի ձեռվ դրած ե դասի նպատակը: Ուսուցիչն աշխատում ե նախապես կազմած պլանով: Դասի ընթացքը մեթոդակես ճշշտ ե: Յեղբակացություններն աշակերտների վզին չեն փաթաթվում: Ուսուցիչը հենվում է աշակերտների դիտողությունների վրա, վորը մասամբ նախապես կազմակերպել եր ուսուցիչը: Աշակերտները գիտելիքները մտածելով են յուրացնում, գիտակցաբար ընդունում:

Դասի թերությունը կայանում է նրանում, վոր ուսուցիչն աշակերտների ուշադրությունը չհրավիրեց հակակրօնական նյութի վրա: Պետք ե յենթադրել, վոր համապատասխան հակակրօնական աշխատանք տարվել ե նախորդ դասերին, կամ տարվելու յե հետագա աշխատանքներում: Մրագրի բովանդակությունը բացարձակապես այդ եր պահանջում: Այս դասին ևս անհրաժեշտ եր շոշափել յերկրի ձեր մասին գիտության հանդեպ յեկեղեցու ցուցադրած վերաբերմունքը, պարզել նրա այն թշնամական վերաբերմունքը, վոր նա հայտնաբերել ե յերկրի ձեր ու կառուցվածքի մասին ճիշտ ուսմունք ստեղծող գիտնականների հանդեպ:

Նույն դպրոցին վերաբերող նյութերից մենք իմանում ենք, վոր տվյալ խմբի տետրակներում հաջող ձեռվ նկարել են մոտեցող և հեռացող շոգենավը: Սա, ինարկե, աշխատանքի արդյունքի շատ լավ ամրապնդումն ե և անկասկած ոժանդակել ե համապատասխան գիտելիքների լավ հասկանալուն և յուրացմանը:

Յեթե այս թեմայի մշակման ժամանակ գիտապողիտիվներ ել ողտագործվեյին, ապա աշխատանքը կարելի յեր միանգամայն լավ համարել:

6. ԱՇԽԱՏԵՐԸ ԳՈՎԱԳՔԻՒ, ՄԱԿԱԿԱՆ ԳՐԸ ՈՒ ԹԵՐԹԻ ՀԵՅ

40. Կայսեր

43. Բուրժուական դպրոցը տալիս ե այնպիսի գիտելիք խօսերդատելիքներ, վորոնք՝ ինչպես լենինն և առում ինը դպրոցաւմ տասերորդով անպետք են և մեկ տասերորդով խեղաքյուրված: Բուրժուական դպրոցը տալիս ե «գրքային» ուսուցում, վոր կտրված ե կյանքից, իրականությունից, վոր կյանքի յերևութ-

ները դրսենորում է զգվելիորեն խեղաթյուրած: Լենինը 1920 թվին կոմյերիտմիության III-դ համագումարում արտասանած իր ճառում քննադադեռով հին դպրոցի «գրքային» ուսուցումը, միաժամանակ նախազգուշացնում է յերիտասարդության, վոր չնայած մեր գրքերն իրենց բովանդակությամբ վոչնչով նման չեն բուրժուական գրքերին, այսոււամենայնիվ «Առանց աշխատանքի, առանց պայքարի, կոմունիստական ըրոշուրներից ու աշխատություններից ձեռք բերած գրքային գիտությունը կոմունիզմի մասին՝ վոչինչ չարժե: Վորովինեաւ դա կշարունակեր տեսականի ու գործնականի միջև յեղած հին ճեղվածքը, այսն հին ճեղվածքը, վոր հին, բուրժուական հասարակության ամենազգվելի գիծն եր հանդիսանում»:¹

Դասագիրքն, ինչպես և մանկական գիրքը պետք է ոգտագործվի մեր դպրոցում մատաղ սերունդը դաստիարակելու կոմունիստական վոգով: Աակայն գրքի ու դասագրքի ոգտագործումը պետք է սերտորեն կազմած լինի կյանքի և արտադրական աշխատանքի հետ: Գիրքն ու դասագիրքը յերբեք չեն կարող աշակերտների համար գիտությունների հիմունքները տիրապետելու միակ միջոցը, միակ աղբյուրը զառնալ: Միաժամանակ անհրաժեշտ են նշեր, վոր աշակերտներին գիտությունների հիմունքները տարու, նրանց կոմունիստական աշխարհացացքը կերտելու բազմազան ձևերի ու միջոցների մեջ դասագիրքը ըստն ե իր կարենոր տեղը:

Մինչև Համկոմկուսի(թ)կենակոմի հատուկ վորոշումը դասագրքերի մասին՝ մեր դպրոցը չուներ կայուն դասագրքեր: «Զախերի» «դպրոցի մահացման» հակալենինյան տեսությունն այստեղ ել իր գործը տեսել եր: Ամեն տարի դասագրքերը փոխվում եյին: Կայուն դասագրքերի փոխարեն սկսել եյին հրատարակել բրոյալներ, թերթիկներ, վորոնք գոչ թե սիստեմատիկ գիտություն:

Ընկ. հագանովիչը Համկոմկոմի 17-րդ համագումարին արած իր գեկուցման մեջ հատկապես կանգ առաջ ինչպի վրա: Բերում ենք մի փոքրիկ հատված նրա գեկուցումից:

«Կադանովիչ. — Կեոմը տեղեկանում ե, վոր յերեխաները դասագրքեր չունեն: Ընկ. Ստալինը կանչում հարցնում ե, թե ինչպես ե դասագրքերի խնդիրը: Պարզեցեք: Հետո Քաղբյուրոյում պարզվում ե, վոր մենք կայուն դասագրքեր չունենք:»

Ստալին. — Ամեն տարի դասագրքերը փոխվում եյին: Կադանովիչը իրոք վոր, ամեն տարի դասագրքերը փոխվում եյին: Փոխվում եյին ամեն տարի նաև ծրագրերը: Դպրոցի

¹ Ленин, том XXV стр. 385—386.

մահացման «ձախլիկ» տեսաբաններն ապացուցանում եյին, վոր յեթէ մենք դասագիրքը կայունացնենք մի քանի տարի, դա մեզ հետ կքաշի. մինուույն ժամանակ չեյին նկատում, վոր յերեխաներք՝ դասագիրք չինելու պատճառով՝ կիսագրագետ են»:¹

Համեկ (բ) կենտկոմը մեր հանձնարեղ առաջնորդ Ստալինի նախաձեռնությամբ հատուկ վորոշում հանեց 1933 թվի փետրվարի 12-ին՝ կայուն դասագրքերով դպրոցն ապահովելու մասին:

Ներկայումս արդեն հսկայական հաղթանակ եւ տարված դպրոցը կոյուն դաստիքերով ապահովելու գործում: Մեծ աշխատանք եւ տարվում նաև յերեխաների համար մանկական գրականության հրատարակման գծով:

41. Այսուհետեւ Յուրաքանչյուր ուսուցիչ պետք եւ ամենառաջադիր դասագրքի ոգություն մեջ պատճեն կայուն դասագրքը քերը, տիրապետի այդ դասագրքերին ու դարձնի դըրանք ուսումնա-դաստիարակչական աշխատանքի լավագործում գույն զենք:

Ուսուցիչը պիտի իր ամեն մի դասը պլանավորելիս վորոշակի ձեռվ պարզի դասագրքի ոգտագործման անհրաժեշտությունն ու ձեր թե դասարանում և թե տանը:

Լեզվի դասագիրքն ի՞նարկե գլխավորապես ոգտագործվելու ելեզվական գիտելիքներ և ունակություններ տալու համար: Սակայն լեզվի դասագրքից մշակվող այս կամ այն նյութը հաճախ լրացուցիչ գեր եւ ունենում և ոժանդակում եւ աշակերտների գիտական պաշարն այլ և այլ առարկաներից լրացնելու (բնագիտական, հասարակագիտական, աշխարհագրական և այլն):

Իր հերթին բնագիտության, աշխարհագրության, հասարակագիտության և այլ առարկաների դասագրքերի ընթերցանությունն այդ առարկաներից գիտելիքներ ձեռք բերելու հետ զուգընթաց՝ պիտի նպաստի աշակերտին՝ տիրապետելու լեզվական կուտուրային, տիրապետելու ընթերցանության տեխնիկային, գիտակցարար մոտենալու ընթերցած նյութին, հարստացնելու յերեխայի բառապաշարը, վարժեցնելու նրան գրքի վրա աշխատելու և կարգացածը հասկանալու գործում:

Ուսուցիչը պետք եւ աշակերտներին հենց սկզբից վարժեցնի դասագրքի ու գրքի վրա ինքնուրույն աշխատելու տեխնիկային: Ամենատարրական գիտելիքներն և ունակություններն այդ ուղղությամբ պիտի տրվեն սկսած 2-րդ դասարանից: 3-ում ու 4-ում սրանք պիտի լրացվեն ու խորացվեն:

Դասագրքի հետ աշակերտին ծանոթացնելը պետք եւ սկսել հենց վերնագրից: Այսպես՝ դասագրքի անունը. հեղինակը. հրատարակման

¹ Բնկ. Կագանովիչի գեկուցումը XVII-րդ Կուսամագումարին. „Պրաւդ”, 13 փետրվարի 1934 թ. № 42.

անդն ու տարեթիվը. ցանկն ու դրանից ոգտվելու աեխնիկան, դասագրքի բաժինները. վերնագրերը. խոզորատառ, շղատառ ու մանրատառ բնագիրն ու դրանց նշանակությունը:

Նույն ձեռվ ել պիտի բացատրել աշակերտներին մանկական գրքի մասին և վարժեցնել նրանց մանկական գրքից ոգտվելու:

Դասագրքից ոգտվելու մեթոդիկան մեծապես կապված է դասավանդվող առարկայի ըրվանդակության և մշակվող նյութի ընույթի հետ: Նայած թե վոր դասարանի աշակերտների հետ եւ տարվում աշխատանքը, և նայած թե ինչ մանկավարժական խնդիր եւ դրվում ավյալ դեպքում՝ դրա համապատասխան ել ոգտագործվում եւ դասագրքի նյութը: Դասարանական և անային ընթերցանության գործը կազմակերպելունախապայմաններից մեկը հանդիսանում է այն, վոր աշակերտներն ուսուցչի ղեկավարությամբ վարժվեն նյութն ընթերցել գիտակցորեն, ըմբռնելու յուրացնել ընթերցածի հիմնական մտքերը, զատել զիմավորը յերկրորդականից:

Ընթերցման նյութի պահով մշակումը կարևորագույն միջոցներից մեկն և դասագրքից, մանկական գրքից ու թերթից նպատակահարմար ձեռվ ոգտվելու: Ուստի և գրքի վրա աշխատելիս, ուսուցիչը պետք եւ աշակերտներին վարժեցնի նյութը պլանով մշակելու:

Նյութը պլանով մշակելու վարժությունը պիտի սկսել ցածր դասարանից: Այդ աշխատանքի սկզբնական, պարզ ձեռն այն եւ, յերբ զրուց եւ կազմակերպվում ընթերցած նյութի շուրջը և ուսուցիչը հաջորդական ձեռվ (գորոշ պլանով) դնում է հարցերը: Այսուհետև ընթերցած նյութը կարող եւ մշակվել գրատախտակին կամ տեսարելում գրանցած մի քանի հարցերից կազմած պլանով: Ավելի ինքնուրույն աշխատանք կտարվի, յեթե ուսուցիչը դնի մի քանի հարցեր (բանավոր ապա և գրավոր), վորոնց ուղղությամբ և աշակերտներն ինքնուրույն ձեռվ ընթերցեն ու մշակեն դասագրքի հոդվածը, թերթի նյութը, մանկական գրքույկը: Վերջապես՝ աշակերտները պիտի վարժվեն սկզբում ուսուցչի ոգնությամբ, ապա և բոլորովին ինքնուրույն՝ ընթերցած նյութի պարզ պլանը կազմել և բանավոր կամ գրավոր ձեռվ վերաբարդել այն (պատմել շարադրել): Աշխատանքի այդ բոլոր ձեռքի ժամանակ պիտի հանդես բերվի աշակերտների ստեղծագրծական աշխատանքը, մշակվող նյութը կապվի կյանքի, սոցշինարարության հետ, աշակերտների շրջապատի յերեկությունը հետ:

Դասագրքից ոգտվելու վատթարագույն ձեռ հանդիսանում է այն, յերբ մինենույն նյութը մեխանիկորեն աշակերտներին անվերջ ընթերցել են տալիս: Նման դեպքում գիտակցական մոտեցում, նյութի գիտակցական յուրացում աշակերտների կողմից չի կարող լինել, մինչեւ դա հիմնականն է: Բայց այդ, նման աշխատանքը վերին աստիճանի ձանձրակի յեւ բթացնող: Ուստի և անհրաժեշտ ոգտագործել ստեղծա-

գործական բնույթ կըող ընթերցանության ձևեր: Յեթե անհրաժեշտ է՝ վոր աշակերտները նյութը մի քանի անգամ ընթերցեն (որինակ՝ ընթերցանության տեխնիկան զարգացնելու համար), այդ դեպքում պետք է ամեն անգամ յերեխաների առաջ նոր խնդիր դնել վորպեսդի ընթերցանության վարժեցնելու հետ միասին նրանց միտքն ակտիվ ստեղծագործական աշխատանք կատարի:

Անհրաժեշտ է աշակերտներին վարժեցնել լուր ընթերցանության Այդ նպատակով վարժություններ պիտի կատարել թե դասարանում և թե տանը, ինչպես դասադրքի, նույնպես և մանկական գրքի գրադատք ե առաջարկել աշակերտներին տվյալ հոդվածը «մտքում» ընթերցելու: «Յերեխաներ, առանց ձայնի ուշադրությամբ կարդացեք այս հոդվածն և աշխատեցեք ճիշտ ու անսխալ կարդալ, լավ հասկանալ, թե ինչի մասին ե գրված: Վերջացնելուց հետո ուսուցիչն առանձին աշակերտների պատմել ե տալիս կամ հարց ու պատասխանի միջոցով ստուգում ե, թե յերեխաներն ինչպես են հասկացել նյութը: Սկզբում ավելի լավ ե ծանոթ նյութերի վրա վարժություն կատարել այնուհետև կատարել նաև անծանոթ նյութերի վրա:»

Դասագրքի նյութը մի դեպքում կարող ե ծառայել վորպես նոր գիտելիքներ տալու ազբյուր: Մի ուրիշ դեպքում կարող ե ոգտագործվել պատմելու, զրույցի, եքսկուրսիայի, լաբորատոր և այլ մեթոդական պրիոնների հետ շաղկապված՝ մշակվող նյութը լրացնելու, խորացնելու կամ ամրապնդելու նպատակով: Մի յերրորդ դեպքում այն կարող ե զորեղ միջոց հանդիսանալ աշակերտների ինքնուրույն աշխատանքը կադմակերպելու համար (ուսուցչի ղեկավարությամբ):

Այսպես որինակ.

ա) Յերրորդ տարրա հասարակագիտական ծրագրից «Բանվորների ու գյուղացիների պայքարը մինչև 1905 թիվը» թեմայի մշակման ընթացքում՝ ուսուցիչը վորոշ աշխատանք տանելուց հետո (զրույց, ցուցադրում և այլն) կարող ե ընթերցել տալ աշակերտներին III-րդ դասարանի հասարակագիտության դասագրքից «Կապիտալիստները շահագործում են կանանց ու յերեխաներին» հոդվածը:

Այդ գեղարվեստական հոդվածը պատկերավոր ու հուզական ձևով կարող ե լրացնել այլ մեթոդներով՝ մշակվող թեման: Նույն հոդվածը կարող ե ընթերցվել և ուսուցչի պատմածը կամ բացարարածը տերությունում համար:

բ) Թվաբանությունից անվանական թվերի գումարման կանոնը բացարձելուց հետո, ուսուցիչը դասագրքն ոգտագործում է վարժություններ ու խնդիրներ ընտրելու, կամ թվաբանական տվյալ կանոնի վերաբերյալ սահմանում ընթերցելու համար:

գ) Հողի տեսակներն ու նրա հատկություններն ուսումնասիրելիս՝

ընագիտության III տարվա դասագրքից աշակերտներն ոգտագործում են «Ավագ» հոդվածը: Այդ հոդվածի ընթերցումն աշակերտներին ոգտնում է ուսուցչի ղեկավարությամբ ավագի վրա փորձեր կատարելու դիտողություններ ու յեղբակացություններ անել և կապել մշակվող նյութը առցինաբարության հետ:

Այդ որինակները ցույց են տալիս, թե ինչ բազմազան նշանակություն կարող ե ունենալ դասագիրքը ծրագրային այլ և այլ նյութերը մշակելիս: Պետք ե միայն կարողանալ տեղին ու նպատակահարմար ձևով դասագիրքն ուժագործել: Ինչ վերաբերում ե լեզվի ու գրականության ուսուցման՝ այդտեղ դասագրքի գերն ել ավելի յե մեծանում, քանի վերական նմուշների վրա են կատարվում լեզվական ու գրականական բազմազան աշխատանքները:

Դասագիրքը, մանկական գիրքը և թերթը պետք ե աշակերտներին սիստեմատիկ զիտություն տալու զորեղ միջոցները դառնան՝ անմիջականորեն շաղկապվելով կենդանի դիտողության, եքսկուրսիայի, լաբորատոր աշխատանքների և այլ պրիոնների հետ:

Սոցշինարարության առորյան ուսումնական աշ-42. 1. բարեկարգություն խատանքներում արտացոլելու, աշակերտներին քաղա-սա արագություն քական դաստիարակություն աալու և մշակվող նյութը դպրոցում կյանքի հետ սերտորեն կապելու լավագույն միջոցներից մեկն և լրագրի և հանդեսի ոգտագործումը:

Լրագիրն արտացոլելով սոցիալիզմի համար բանվոր դասակարգի վարած հերոսական պայքարի առորյան՝ լավագույն միջոցն և հանդիսանում մշակվող ուսումնական նյութն այժմեականությամբ հագեցնելու, յերեխաների մեջ առաջ բերելու հուզական ապրումներ ու յեռանդ՝ ձեռք բերած գիտությունը սոցիալիզմի կառուցման գործին կիտակութեն ծառայեցնելու:

Մանավանդ անփոխարինելի յեն լրագրական նյութերը հասարակագիտական առարկայի դասավանդման ժամանակ: Դրանք նպաստում են ցայտուն կերպով աշակերտներին ցուցադրելու շրջապատում կատարվող հասարակական յերկույթները, դասակարգային պայքարի յուրահատուկ արտահայտությունները տվյալ ետապում և պայքարելու պրոլետարիատի թշնամիների փորձերի գեմմատաղ սերնդին հակապրոլետարական իդեոլոգիա պատվաստելու:

Բացի այդ, լրագիրը, հանդեսը պիտի միջոց ծառայեն գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումները մեր ուսումնական աշխատանքներում օգտագործելու:

Ամերիկայի պետք ե լրագրական նյութի ոգտագործումը դասարանում կատարվի՝ անսպայման ապահովելով ուսումնական նյութի ծրագրով վորոշված սիստեմատիկան: Դա վճռական պահանջ ե, վոր ուսուցիչը յեր-

մեք չպիտի մոռանաւ: Իհարկե, անկախ դրանից, աշակերտներին պիտի վարժեցնել սւսումնական ժամերից դուրս թերթի ընթերցանությունը: Աստիճանաբար յերեխաները պիտի վարժվեն սիրել թերթի արտադրագուցական ընթերցանությունը: Այն աստիճան, վոր այն «ողի ու ջրի չափ» անհրաժեշտ պահանջ դառնա ամեն մեկին:

Ուսուցիչը պիտի ծանոթացնի յերեխաներին լրագրից ոգտվելու տեխնիկային (թերթի անունը, խմբագրականը, զանազան բաժինները և այլն):

Լրագրի այս կամ այն նյութի ոգտագործումն ուսումնական պրոցեսում պիտի կապված լինի ծրագրային տվյալ խնդրի մշակման հետ: Այդ նպատակով ուսուցիչը պիտի ուշադիր ձևով ընտրի համապատասխան նյութն ու նախորոք նշի դրա մշակման ձեզ: Լրագրային նյութը կարող է մշակվել վորպես ընթերցանության նյութ, արտասանության համար, դրամատիզացիայի համար: Կարող է ծառայել այս կամ այն ծրագրային թեման պարզաբանելու նպատակով ինչպես և լրագրային նյութերից ցուցահանդես կազմակերպելու, ալբոմներ կազմելու և այլն:

Բացի այդ բոլորից՝ ուսուցիչը համապատասխան աշխատանք է տանում աշակերտների մեջ, վարժեցնելու նրանց՝ աշխատակցելու դրագուցական պատի թերթին և մանկական լրագրին:

Մանկական գրքերի ու կլասիկ գրականության 43. Մանկական գրքերի ու կլասիկ գրականության ընթերցանությունը մեր զպրոցներում տարիներ շատ գործում է: Ըստ Համեմատականի հայտնի վորոշումների հիման վրա առաջարեցան սուբյեկտի աշխատություններից՝ մանկական-դպրոցական գրադարանները լրացնելու: Պրոլետարական շատ գրողներ սկսել են իրենց ստեղծագործական աշխատանքը մանկական գրքի բնագավառում:

Տարրական զպրոցի I գասարանում աշակերտները գեռ նոր են ըսկում մանկական գրքեր ընթերցել և այն ել մեծ մասամբ ուսումնական տարվա յերկորդ կեսին: Քանի գնում ե, բարձր գասարաններում ավելի ու ավելի մեծ ծավալ ե ստանում յերեխաների ընթերցանությունը:

Մանկական գրքի ընթերցանությունը պիտի կատարվի պահանջին ձևով: Ուսուցիչը պետք է զիտենա, վոր յուրաքանչյուր առանձին տարիքի յերեխաներին հատուկ մանկական գրքեր կան, պիտի հետեւ, վոր յերեխաները կարդան իրենց մատչելի և անհրաժեշտ գրքերը: Ուսուցիչը պետք է մանկական արտադպրոցական ընթերցանությունը ամրող-ջապես կազմակերպի: Հաճախ այդ ընթերցանությունը պիտի կապվե-

ուսումնական նյութի մշակման, դրա լրացման ու ամրապնդման հետ:

Ուսուցիչը պետք է աշակերտներին վարժեցնի գրքեր ընտրել դեկավարի նրանց արտադպրոցական ընթերցանության համար մանկական գրականությունը գլխավորապես հետեւյալ հիմնական բաժիններն ե ունենում:

Արտադպրոցական ու զպրոցական ընթերցանության համար մանկական գրականությունը գլխավորապես հետեւյալ հիմնական բաժիններն ե ունենում:

I. Գործնական բնույթ ունեցող մանկական գրեթե

1. Գիտությունն ու տեխնիկական մանկական գրականության մեջ.
2. Հասարակական, քաղաքական խնդիրները մանկական գրքում.

II. Գեղարվեստական մանկական գրականություն

1. Գիրքը ոժանդակիչ՝ ինտերնացիոնալ դաստիարակության.
2. Գիրքը ոժանդակիչ՝ հակակրոնական դաստիարակության.
3. Պատմա-հեղափոխական և սոցիալիստական հսկաների շինարարությունը պատկերացնող մանկական գրքեր.

4. Հին և նոր կենցաղ.

5. Ճանապարհորդություններ ու արշավանքներ (մանկական ու աշխարհագրական բնույթ կրող):

6. Բնագիտական գրքեր մանուկների համար և այլն.

III. Կասիկ ու ժամանակակից պրոլետարական գրականությանը մանկական ընթերցանության մեջ.

Ուսուցիչն ամեն կոնկրետ գեպքում աշակերտների ուշադրությունը պետք է ուղղի գեպի համապատասխան բաժնի մանկական գրականությունն ու հետեւ աշակերտների ընթերցանության, ստուգի նրանց կարդացածը և տա այդ գործին համապատասխան ուղղություն:

Դ. ԳԼՈՒԽ

ՈՒՍՈՒՅՉԻ ՎԵՐԱՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

4. Ուսուցչի կոմունիստական դաստիարակության գործում հիմնավորակի բարձրացումը կարելված կանոնադրության պոլիտեխնիկական զըպ-ռոցը՝ Պոլիտեխնիկական դպրոցի կենտրոնական դեմքը՝ պատահանջ է։ Ուսուցիչն է։ Ուսուցիչը մանկավարժական պրոցեսի կազմակերպիչն է ու ղեկավարը։ Ուսուցիչն է, վորին կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը հավատում ու հանձնում են մատադսերնդի կոմունիստական դաստիարակության պատասխանատու ու պատավագոր դերը։ Դպրոցի կրթական դաստիարակչական վողջ աշխատանքներում ուսուցչի դերը վճռական նշանակություն ունի։

Ավելորդ չենք համարում այստեղ յերկրորդ անգամ բերել Կապրի կղզու կուսակցոցի աշակերտներին կենցնի գրած նամակից։

«Յուրաքանչյուր դպրոցում ամենակարենորը՝ գաղափարական քաղաքական ուղղությունն է. ինչնո՞ւ ե այդ ուղղությունը վորոշում։ Ամբողջապես և բացառապես դաստիուների կազմով»¹

Անա թե ինչու կենցնը տվել ե ուսուցչի մասին իր հանրահայտնի լոգունդը։

«Ժողովրդական ուսուցիչը մեզ մոտ պետք է դրվի այնպիսի բարձրորակ վրա, վարի վրա նաև յերեք կանգնած չի յեղել, կանգնած չի յեվ չի ել կարող կանգնել բուժության հասարակության մեջ»։

Կուսակցության մեծ առաջնորդի, ընկ. Ստալինի *XVII* կուսաձագումարում արտած ցուցմունքը՝ մանկավարժական կրթության բնագավառում ունեցած թերությունն անհապաղ վերացնելու մասին՝ ցույց ե տալիս, թե վարչան պատվավոր ու կարենոր ե ուսուցչի աշխատանքը մեր սոցիալիստական յերկրում։

Անա թե ինչու Համեկ(բ) կենտկոմն էր 1932 թվի վորոշման մեջ հանձնարարում ե տանել։

«Միստեմատիկ աշխատանք ուսուցչի գաղափարական-քաղաքական

մտկարդակը, ընդհանուր կրական յել մտնկավարժական վարպետության մակարդակը բարձրացնելու վրա»։

Կենտկոմի այս ցուցմունքը պարզ բնորոշում է այն հիմնական հատկանիշները, վոր պիտի ուսենա ժողովրդական ուսուցիչը մեղնում։ Այդ հատկանիշներն են։

ա) Բարձր գաղափարական-քաղաքական մակարդակ, կուսակցության ուրիշուն ու դասակարգային զգոնություն։

բ) Բարձր ընդհանուր-կրթական մակարդակ և պոլիտեխնիկական պատրաստություն։

շ) Մանկավարժական վարպետության աիրապետում։

Միայն այդ հատկանիշները կարող են ամենից առաջ ապահովել դասավանդման վորակը, վորի համար պետք ե անդուր աշխատանք։

45. Ուսուցչի բարձր գաղափարական-քաղաքական մարդագանգության կարգական ուղղությունն անմակարգական հրաժեշտ նախապայման են՝ դասավանդման զաղամակերպությունները։

Ուսուցչի բարձր գաղափարական-քաղաքական մարդագանգության կարգական ուղղությունն ապահովելու համար պահանջությունն անմակարգական ուղղությունն անմակարգական հրաժեշտ նախապայման է կազմակերպությունները, լուսաշխամիությունն ու լուսաբաժնը, մյուս կողմից ինքն՝ ուսուցիչը։

Այդ աշխատանքը կազմակերպելու բազմազան ձևեր ու մեթոդներ կան։ Ամենից առաջ հսկայական նշանակություն ունի ուսուցչության իդեոլոգիական կայունության աեսակետից՝ ղեկավար որգանների և առաջին հերթին՝ կուսակցական ու կոմյերիտ կազմակերպությունների կենդանի կապն ու ամենորիա ղեկավարությունը։ Այդ կազմակերպությունները պետք ե թե անմիջականորեն և թե զանազան ողակող փոկերի միջոցով ուսուցչությանը ղեկավարեն, դարձնեն նրանց կուսակցության լավագույն ոգինականն ու զինակիցը՝ կուսակցության լուսագորության քաղաքականությունը տեղերում կինսագործելու։ Ուսուցիչն ինքը պիտի կապվի կուսակցության հետ, զգա այդ կապի ամրությունը։

Ուսուցչության քաղաքական դաստիարակչության համար ուայոնում (կամ մեծ դպրոցներում) կազմակերպվելու են սեմինարներ, քաղիքաբակներ, համարական և այլն։

Սակայն, զրա հետ միասին շատ կարենոր և ուսուցչի կողմից ինքնազարդացման աշխատանքի կազմակերպումը։ Առաջին հերթին ամեն մի ուսուցիչ անպայման պետք ե պահանջ զարձնի իրեն՝ ամեն որ կարդալու լրագիրը դա հացի ու ջրի չափ պահանջ պիտի դառնա։ Մյուս կողմից նրա ակտիվ մասնակցությունը սոցշինարարության մեջ, և գաղարդային պայքարում կողնեն կապվելու բանվորա-կոլլուգային մասսաների հետ, առանց այդ ուսուցիչն իր դասավանդումը յերեք չի կա-

¹ կենին. հ. XIV էջ 118—120 (2-րդ և 3-րդ հրատ.)

բող հաջողությամբ դաստկարգային պայքարի և սոցշինարարության հերոսամարտին շաղկապել ապրել սոցիալիզմի կառուցման պաթոսով և գաղափարապես ապրեցնել ու դաստիարակել աշակերտներին այդ կառուցման ենտութիւնով։ Իր գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է, վոր ամեն մի ուսուցիչ անընդհատ ուսումնասիրի մարքսիզմի-լենինիզմի կլասիկների՝ Մարքսի, ենդեւսի, Լենինի, Ստալինի աշխատությունները։ Դրա համար անհրաժեշտ է, վոր ուսուցիչն ինքը կուսկազմակերպության լուսրածնի, լուսաշխմբության, կոմյերիտ կազմակերպության աջակցությամբ ձեռք բերի կլասիկների աշխատություններից կազմած գրադարան։

Ուսուցիչը պետք է ուսումնասիրի կուսակցության որգանների վորոշումները, պարզի իրեն, թե ինչպես կուսակցությունը պրոլետարիատի մեծ ու հանճարեղ առաջնորդի Ստալինի ղեկավարությամբ՝ կառուցում է մեր յերկրում սոցիալիստական անդասակարգ հասարակարգ, հաղթահարելով կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ։

Ուսուցիչը մեծ գեր ունի այդ շինարարության մեջ։ Նա ակտիվ կերպով պիտի մասնակցի այդ շինարարության՝ պայքարելով Մարքսի, Լենինի, Ստալինի դպրոցի համար։

Ուսման վորակի բարձրացումը, դասակարգային զգոնությունը, գիտակցական կարգապահությունը, գպրոցի պոլիտեխնիկացումը, աշակերտների դաստիարակչական գործի լավագույն կազմակերպումը և պայքարը հակապրոլետարական իդեոլոգիա աշակերտներին պատվաստելու փորձերի դեմ, — ահա աշխատանքի այն հիմնական խնդիրները, վորոնց քաղաքական նշանակությունը պետք է լավ ուսուցիչը գիտակցի ու ակտիվ պայքարի դրանց իրագործման համար։

46. Ուսուցիչը գպրոցում պիտի տա «գիտությունների ընդհանուր հիմունքները». պետք է աշակերտներից պատրաստի կրական մակարդակությունը մարդիկ», վորոնք ընդունակ բարձրացումը լինեն «կոմունիզմը վերջնականապես հաստատելու» Այստեղից հետեւում է այն, վոր ուսուցիչը պետք է յուր առարկան լավ գիտենա, նրան տիրապետի մարքսիզմի-լենինիզմի հիմունքներով։ Վորուսուցիչը պետք է լիովին գրագետ լինի։ Մինչդեռ մեր գործնականում քիչ չեն դեպքեր, յերբ ուսուցիչն իր դասավանդած առարկային ծրագրով սահմանած ծավալով անդամ չի տիրապետում։ Վոչ մի մեթոդիկա չի կարող փրկել՝ յեթե ուսուցիչը չի տիրապետում առարկային, յեթե նա անհրաժեշտ հանրակրթական մակարդակը չունի։ Անհրաժեշտ հանրակրթական, մակարդակն ու դասավանդած առարկայի տիրապետումը մարքսիզմի-լենինիզմի հիմունքներով՝ պետք է ոգնեն ուսուցչին աշակերտներին տալու սիստեմատիկ կրթություն, տիրապետելու գիտու-

թյունների հիմունքներին, կրթությունը գարձնելու կոմունիստական դաստիարակության, նրանց դիմուկական մատերիալիստական աշխարհայցքը կերտելու հզորագույն լծակ։

«Ուսուցաներով յերեխաներին դիմունքները, զըպրոցն և ուսուցիչը պարտավոր են դաստիարակել և մշակել նրանց մեջ խորագույն սիրող զացմունքը դեպի աշխատավոր մարդը, մեծագույն սիրո և անձնվիրության զգացմունքը դեպի մեր սոցիալիստական հայրենիքը, դեպի Լենինի-Ստալինի կուսակցությունը և դեպի Խորհրդային իշխանությունը»:¹

Ուսուցիչն իր շրջանում պետք է լինի ամենակուլտուրական մարդու որինակելի կարգ ու կանոն, կարգապահություն, մաքրություն, գիտակցական վերաբերմունք գեպի ուսումը։ Դրա համար նա պետք է անխոնջ աշխատի իր կուլտուրական մակարդակի բարձրացման վրա։

«Խորհրդային պոլիտեխնիկական գվրոցի ամենաբնորոշ գիծը պոլիտեխնիկմն ե»։ «Պոլիտեխնիկական կրթությունը կազմում է կոմունիստական դաստիարակության որգանական մասը»:² Բնական ե, վոր պոլիտեխնիկական կրթությունն իրականացնող ուսուցիչն ինքը պետք է գիտենա ու հասկանա պոլիտեխնիզմի հիմունքները, ծանոթ լինի արտադրության գլխավոր ճյուղերի հիմնական արտադրական պլոցեաներին, ծանոթ լինի նորագույն տեխնիկայի հիմունքներին։ Ուսուցիչը պիտի պարզի իր համար պոլիտեխնիկի կրթության տեղը գպրոցում և այդ իրականացնելու ուղիները։

ա) Պոլիտեխնիկ աշխատանքային ուսուցման կազմը «գիտությունների հիմունքների» հետ։

բ) Աշխատանքը գպրոցական հողաբաժնում, աշխատանքային սենյակում, ուսումնական արհեստանոցում։

գ) Արտադրական եքսկուրսիաները և նրանց կազմակերպումը և այլն։

Այստեղից և հետեւում է, վոր յուրաքանչյուր ուսուցիչ պիտի սահմանորյա անդուր աշխատանքի գնով լրացնի իր ընդհանուր և պոլիտեխնիկական կրթությունը,

ի՞նչ միջցներավ։

ա) Հեռակա ուսուցման գծով։ Ամեն մի միջնակարգ սանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչը պարտավոր է մոտիկ 2-3 տարվա ընթացքում ստանալ մանկավարժական տեխնիկումալարտի վորակ։ Ամեն մի միջնակարգ կրթություն ունեցող պետք է 3-4 տար-

¹ Էնի. Ա. Յեղիշաղարյանի զեկուցումից ՀՍԽՀ-ի Խորհուրդների 8-րդ համագումարում։

² Համելումկուսի (բ) Կենակումի սեպտեմբերի 5-ի վորոշումից։

վա ընթացքում առանց արտադրությունից (գպրոցից) կարվելու՝ մանկագարժական ինստիտուտավարակ վորակ ստանա: Այդ մասին ժողովություն իր հատուկ վորոշումն ունի, վոր հրատարակված և «Հակոմմունիստիկոսկօ որօւեպենի» թերթի 1934 թվի փետրվարի 14-ի համարում: Ժամկետ և դրված 1937 թվի սեպտեմբերի 1-ը: Այդ որենքի համաձայն կուտողիկոմատի որդաններն ու լուսաշխամիություն կազմակերպությունները պարտավորվում են աջակցել այդ գործի կազմակերպման: Խակ բոլոր այն ուսուցիչներին, վոր հրաժարվում են իրենց վորակը բարձրացնել հրանանդվում և անմիջապես հեռացնել և դրանց ավելի վորակավոր ուսուցիչներով փոխարինել:

բ) Ամառային և ձմեռային կուտանքի միջոցով, վոր վերջին տարիները հաճախ կազմակերպվում են յերիտասարդ ուսուցիչների (ուժմութեան) համար:

գ) Կազմակերպելով դպրոցում խմբակային պարապմունքներ: 2—3 և ավելի ուսուցիչներ իրար հետ՝ միացյալ ուժերով աշխատում են իրենց վորակն այն կամ այն առարկայից բարձրացնելու: Այդ դեպքում նույն կամ հարեան դպրոցում յեղած համեմատաբար ավելի պատրաստված ուսուցիչը շեֆության կարգով կարող է աջակցել խմբակի աշխատանքներին:

դ) Վերջապես՝ ամեն մի ուսուցիչ անհատապես պիտի կազմակերպի ամենորյա աշխատանք՝ իր ընդհանուր կրթական մակարդակը բարձրացնելու: Այդ գծով կարելի յե կապվել մանկավարժական տեխնիկումի կամ վորեւ ինստիտուտի համապատասխան մասնագետի հետ, վորը սիրով իր աջակցությունը կտա, նույնիսկ դրափոր ձևով:

ե) Դրա հետ նաեւ ամեն մի ուսուցիչ պոլիտեխնիկական գրականության միջոցով, գեպի արտադրություն, խորանտեսություն, ՄՏ կայան և այլն եքսկուրսիաներ կազմակերպելով՝ պիտի ծանոթանա արտադրության հիմունքներին, ձեռք բերի տեխնիկական դիտելիքներ և լրացնի իր պոլիտեխնիկական պատրաստությունը:

47. Ուսուցչի մանկավարժան վարպետությունը ստեմանագիտական վում և մանկավարժական տեսության և գործնականին կան վորակի տիրապետելու հիման վրա: Զիմվելով մանկավարժական ուղի և ուղի գիտությամբ, պիտի կարողանալ կազմակերպել մանկավարժական պրոցեսը, կազմակերպել աշակերտների աշխատանքը, ստեղծել աշխատանքային տրամադրություն, տիրապետել դասարանին, ստեղծել գիտակցական կոմունիտատական կարգապահություն: Այդ գործում ուսուցչի անձնական հատկություններն ու մանավանդ նրա գործն ու տակտը նույնապես հսկայական նշանակություն ունեն: Ճիշտ և գրուժ ընկ: Պիտարակը, վոր հաճախ մի ուսուցչի մոտ աշակերտները լավ են աշխատում, հետաքրքրվում են, անկախ այն բա-

նից, թե ինչ առարկա կամ թեմա յե ուսուցչին անցնում, իսկ մի այլ ուսուցչի մոտ՝ գործը կաղում ե: Դա զիմավորապես բացատրվում է նրանով, թե ուսուցչիը վարպետորեն և կազմակերպում ու դեկավարում աշխատանքը դասարանում, թե նա «Բնչակես և խոսում աշակերտների հետ, մինչեւ իսկ ինչպես և դասարան մտնում ու գուրս գալիս, ինչպես և վերաբերվում աշակերտի դիտողություններին ու վարունքին և այլն»:¹

Մանկավարժական պլոցեսի կազմակերպման վարպետությունը ձեռք ե բերվում մի կողմից տարիների անձնական փորձի միջոցով, մյուս կողմից անընդհատ սիստեմատիկ աշխատանքի և խորհրդային դպրոցի փորձի տիրապետման հիման վրա:

Ուսուցիչը պետք է զբան զուգընթաց, դրա հետ շաղկապված՝ տիրապետի նաև սիլայ առարկայի դասավանդման հատուկ մեթոդական պլոցի նաև բերի այդ առարկայի դասավանդման հատուկ մեթոդական պլոցի ուների մասին լրիվ հասկացողություն և գործնականում ոգտագործել կարողանա դրանք: Որինակ՝ եքսկուրսիան, զրուցը, ցուցադրումը, փորձը, լաբորատոր աշխատանքը, աշխատանքը զբքի, թերթի, դասագրքի հետ՝ բնագիտական առարկան դասավանդելիս: Նույն մեթոդական պլոցիներն ու ձեւեր՝ հասարակագիտությունն ավանդելիս և այլն:

Նա յե լավագույն ձևով մանկավարժական պլոցեսը կազմակերպում, ով թե տեսականում և թե գործնականում տիրապետում է խորհրդային պլոցետեխնիկական դպրոցի թե ընդհանուր մեթոդիկայի հիմունքներին և թե առանձին առարկաների մասնագոր մեթոդիկային և վարպետորեն զուգորդում և այդ յուր դասավանդման ընացքում:

Վորածիկ են ուսուցչի մերուդական զինման հիմնական ուղիները.

ա) Ամենից առաջ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է լավագույն ձևով ուսումնասիրի ու տիրապետի իր դասավանդած առարկայի ծրագրին: Տարրական դպրոցի ուսուցիչը պետք է ուսումնասիրի ամենամանրամասն ձևով իր դասարանի բոլոր առարկաների ծրագրերը, դրանց ծավալը, կառուցվածքը, բովանդակությունը, թեմաներն ու դրանց հիմնական բովանդակությունը, սիստեմատիկան: Պետք է ամենաուշադիր ձևով ընթերցի ու մշակի յուրաքանչյուր առարկայի ներածականը, մեթոդական ցուցմունքները, կայուն դասագրքերը և այլն:

բ) Մեթոդական զինման յերկրորդ ճանապարհն ե՝ ձեռք բերել վերջին շրջանում հրատարակված մեթոդական ամենաանհրաժեշտ գրականությունը՝ կուտողիկոմատի մեթոդական նամակները տարրական դպրոցի զանազան առարկաների դասավանդման մասին (լեզվի, հասարակագիտության, մաթեմատիկայի, բնագիտության, աշխատանքի և այլն), ինչպես և առանձին մեթոդական պլոցիների մասին (եքսկուրսիան տար-

¹ Պատրակ. — «На школьные темы», № 5 — 6

բական գպրոցում և այլն): Դրանք կազմված են մեր գպրոցի լավագույն փորձի հիման վրա և մեծ ոժանդակության կարող են հասցնել մասսայական ռասուցչության գինվելու թե տեսականորեն և թե գործնականորեն:

Մեթոդական նորագույն գրականությունը պետք է ուսումնասիրվի ամեն մի ռասուցչի կողմից թե անհատական ձևով և թե մեթոդական բջիջներում ու միավորումներում:

գ) Ուսուցչը պիտի կապվի որինակելի գպրոցի հետ և ողտագործի լավագույն գպրոցների հարուստ փորձը՝ անհրաժեշտ և կազմակերպել փոխադարձ այցեր հարեան գպրոցներն ու ծանոթանալ դրանց փորձի հետ: Պիտի և ռայոնի ռասուցչությունը պահանջ դնի և ոժանդակի որինակելի գպրոցին՝ կազմակերպելու որինակելի դասեր, վորոնց կուլեկտիվ լսելը, քննարկելն ու մշակելը հակայական գործնական ոժանդակություն կտան շարքային՝ մանավանդ սկսնակ ռասուցչին: Անհրաժեշտ և հենց նույն գպրոցում հաճախել ընկերների դասերը: Մեր շատ ռասուցչները հակայական մանկավարժական մեթոդական փորձ ունեն, վորոնց դասերին հաճախելով ընկերները կարող են մանկավարժական վլրոցեսի կազմակերպության գծով շատ բան սովորել: Հենց մեր յերեսասարդ ռասուցիչներից քիչ չեն այնպիսիները, վոր շատ վարպետորեն կազմակերպում են դասը: Անհրաժեշտ և կազմել փոխադարձ կերպով գասերին հաճախելու պլան գպրոցի կամ գյուղիսորհրդի մասշտառով և իրականացնել այն:

դ) Մասսայական ռասուցչության մանկավարժական-մեթոդական պատրաստության ռւղղությամբ մեծ գեր պիտի խաղան մանավանդ մանկավարժական տեխնիկումները՝ հանձին իրենց մեթոդիստների: Ամեն մի ռասուցչի կարող և դիմել տեխնիկումի մեթոդիստներին համապատասխան խնդիրներով և իրավունք ունի պահանջելու իր դիմումի պատասխանը: Մեթոդիստները պարտավոր են թե բանավոր և թե գրավոր կոնսուլտացիայով աջակցել շարքային ռասուցչին, բացատրել նրան դժվարացնող խնդիրները:

յե) Յուրաքանչյուր ռասուցիչ մասնակցելով տեղական (գպրոցի գյուղիսորհրդի, ռայոնի) մեթոդ-կազմակերպությունների (մեթոդական միավորումների, մեթոդ բյուրոների, ցիլլային, առարկայական հանձնաժողովների) առորյա աշխատանքին՝ պիտի վարժվի արտադրական ու շաբաթյա որացուցային պլանների, դասերի կոնսուլտաների և այլն կազմելու գործում: Զեռք պիտի բերի անհրաժեշտ ուսուակություններ՝ լավագույն ձևով դասը կազմակերպելու, դիտողական ձեռնարկներով ու պիտույքներով դասը կահավորելու և այլն:

Մեթոդական աշխատանքը ներկայումս գլխավորապես կառուցվում է կոնկրետ խնդիրների մշակման շուրջը, վորոնք պիտի մշակվեն խորդային ընդհանուր մեթոդիկայի տեսության դրույթներով: Որ ի՞նչ-

պես ե գրված հայոց լեզուն այսինչ դասարանում: Ի՞նչ դրության մեջ ե մեր գպրոցում զբագիտությունը: Ի՞նչպես պետք ե կազմակերպել եքսկուրսիա և դասարանում աշակերտների հետ գեպի անտառ: Ի՞նչպես ե արվելու ըանավոր հաշվիլ տվյալ II դասարանում: Ի՞նչ կոնկրետ միջոցառումներ պետք ե ձեռնարկել մեր գպրոցում այսինչ կազմալուծող աշակերտների վերաբերյալ: Ի՞նչ ձևով պիտի կտառարկվի հասարակագիտական տության նյութի յուրացման հաշվառումն այս ինչ դասարանում: Ի՞նչ պես պետք ե կառուցել դասը՝ I դասարանում 10-ի սահմաններում բաժանումն անցելիս: Ի՞նչպես պիտի կառուցել դասը՝ այսինչ տառը ուղղություններու համար և այլն և այլն:

Նման աշխատանքը կոժանակակի մանկավարժական պրոցեսի վորակը բարձրացնելու տվյալ կոնկրետ խնդրում և որը որին կզինի ռասուցչին՝ մանկավարժական գործի կազմակերպման վարպետությամբ:

զ) Ուսուցչության մեթոդական գինման գործում մեծ գեր ունեն նաև գպրոցական հարահանգին ու ավագ ռասուցիչը: Դպրոցական հարահանգին հենվելով զեկավար մեթոդական գրականության և որինակելի ու մասայական գպրոցի լավագույն փորձի վրա՝ ամենորյա աշակեցություն պիտի ցույց տա շարքային ռասուցչին, ոգնի նրան մեթոդապես զինվելու: Նա պիտի այնպիսի հիմունքների վրա դնի ռայոնում մեթոդական աշխատանքը, վոր ռասուցչը կարողանա ստացածը ռասումնադաստիարակչական իր ամենորյա աշխատանքում մեծագույն չափով ոգտագործել:

Ավագ ռասուցիչն «ոգնում և տվյալ գյուղիսորհրդի գպրոցների ռասուցիչներին ընկերական զրույցների, կոնսուլտացիաների, խորհրդակցությունների, զեկուցումների պարապունքներն այցելելու ցուցադրական դասերի և այլ միջոցներով»:¹

ե) Վերջապես՝ ռասուցչի մեթոդական գինման մի այլ միջոցն ե՝ հաճախել համապատասխան մասնագիտական-մեթոդական ցուցահանդեսներ, թանգարաններ, ոգտվել լավ կահավորված գպրոցների և որինակելի գպրոցի մանկավարժական-մեթոդական գրադարաններից:

Նրա ամենորյա աշխատանքն ե՝ բարձրացնել իր քաղաքական-գաղափարական, ընդհանուր կրթական ու պոլիտեխնիկական մակարդակը և տիրապետել մանկավարժական վարպետությանը, սրելով իր դասակարգային զգոնությունը, դասավանդումը դարձնելով կուսակցական: «Ուսուցիչը պետք ե՝ ա) տողորված լինի մեր աշխարհայացքով, բ) տիրապետի իր առարկային, գ) մեթոդապես պատրաստված լինի»:² Այդ պահանջներն ե դրվում այսոր ամեն մի ռասուցչի առաջ:

¹ «Կանոնադրություն ռայոնում մեթոդական աշխատանքը կազմակերպելու մասին»:

² ՀՍԽՀ Լուսադոկտոր ընկ. Ա. Յեղիազարյանի զեկուցումից Խորհուրդների 8-րդ համագումարում:




ԶՐՈՒՅՑՑ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ


ԶՐՈՒՅՑԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵտաքրթության ձևերներ

1. Վեմին. «Կոմիերիտմիության խնդիրները» («Задачи союза молодежи», речь на III съезде РКСМ);
2. Համկոմկուսի(բ)կ 1931 թվի սեպտեմբերի 5-ի և 1932 թվի սպոտուսի 25-ի փառական տարրական և միջնակարգ դպրոցների մասին;
3. 1932 թվի հրատարակած տարրական դպրոցի ծրագրերի ներածականը;
4. 1933 թվի հր. տարրական դպր. ծրագրի ներածականները;
5. Հասարակագիտություն, աշխարհագրություն, մարեմարթիկա (հրահանդչական-մեթոդական ցուցմուներ). հրատ. «Հայութ. Կոմիսար» ճայկ. սեկցիայի);
6. Յեր. Զաբարյան. «Պայքար ուսման վրավի համար», պր. I
7. «Естествознание в начальной школе» (инструктивно-методич. материал).
8. «Труд в начальной школе» (тоже).
9. В. Эменов. «Как достигнуть хороших знаний и навыков по математике.
10. Его же. Наглядность в обучении математики»
11. Как вести работу по развитию речи в начальной школе» (метод. письмо шк. сект. НКП РСФСР).
12. Как организовать и проводить экскурсии в начальной школе (Метод. письмо шк. сектора НКП РСФСР).
13. «Анализ занятий в рабочей комнате» (Начальная школа) научно-иссл. инст. политехнич. образ.
14. «В помощь учителю начальной школы». Серия книжек изданных «Северным Кавказом». (В них разработан весь программный материал нач. школы по урокам №№ 1. 2. 3. 1932 года и №№ 1. 2. 3. 4. изд. 1932 г.)
15. Пистрак М. М. «На школьные темы».
16. Афанасьев. «Русский язык в начальной школе».
17. «Уроки географии в начальной школе» вып. первый, (методич. сборники СевКавкрайОНО для начальн. шк. Сев. Кавказа).
18. «Уроки математики в начальной школе» вып. первый (метод. сборник СевКавкрайОНО).
19. С. И. Фрайдин. — «Памятка учителю националу об организации и методах работы в национальной школе».
20. Н. П. Каноникин и др. «Методика русского языка в начальной школе».
21. Ковун «Методика арифметики».
22. Волковский «Методика» арифметики.
23. Штанов и Всесвятский—«Методика естествознания в начальной школе».



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՔԱԿՈՒՐՄԻԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ԳԼՈՒԽ

Ընդհանուր մերոդիկայի քննող գծերն ու հիմնելիքները խորհրդային պոլիտեխնիկական դպրոցում:	4
1. Գաստիարակչական նպատակները խորհրդ պոլիտ. դպրոցում:	4
2. Ի՞նչ պահանջների պիտի բավարարեն մեր դպրոցում գործադրվող մեթոդները:	9
3. Ի՞նչ մեթոդներով պիտի մշակել ավայական կոնկրետ ուսումնական նյութը:	18

Բ. ԳԼՈՒԽ

Խեղաքյուրումներն ուսուցման մերայների քննադատում յեվ պայքարը դրանց դեմ:	26
--	----

Գ. ԳԼՈՒԽ

Ուսումնական աշխատանքի մերոդմերի ու ձեվերի քնութագիրը. յեվ նրանց գործադրության կանկրետ որինակները տարրական դպրոցում:	39
1. Ուսուցչի պատմելը.	41
2. Զբոյցը տարրական դպրոցում.	45
3. Ուսումնական եքակուրութան տարրական դպրոցում.	59
4. Լաբորատոր աշխատանքը տարրական դպրոցում.	72
5. Դիտողականությունն ու ցուցադրումը տարրական դպրոցում.	86
6. Աշխատանք դասագրքի, մանկական գրքի ու թերթի հետ.	96

Դ. ԳԼՈՒԽ

Ուսուցչի վերավորակավարման ուղիները	104
Մեթոդական գրականության հանձնաբարելի ցուցակ	112



ԳԻԸ 1 Ր. 50 ԿՈՄ.
Цена 1 ր. 50 կոմ.

43307

На армянском языке

Е. Закарьян

БОРЬБА ЗА КАЧЕСТВО УЧЕБЫ

Выпуск второй

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ ИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-д Буденовский пр, № 30

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՊԱՀՈՎՎԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՓՈՂ. № 53
ԳՐԱՎԵՐԱՐՆ (ԿՆԿՈՋԵՐԵՐ)

2013

«Ազգային գրադարան»



17299
NL0050417

